Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի

Վանաձորի գրասենյակ

OPEN SOCIETY FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

2015 Թ. ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԵՎ ԼՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2016

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Ամփոփ նկարագիր

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ 2015 թ-ին ՀՀ զինված ուժերում և ԼՂ պաշտպանության բանակում գրանցված 58 միջադեպերի հետևանքով մահացել է 76 զինծառայող:

Բացի նշվածից, գրանցվել են ևս 4 հայ զինծառայողների մահացության դեպքեր, որոնցից 2-ը ՀՀ-ում ռուսական զորքերի զինծառայողներ էին, 1-ը ՀՀ ԶՈՒ զինծառայող, որը ըստ ՀՀ ՊՆ-ի, մահվան պահին արձակված է եղել պահեստազոր, իսկ 1 զինծառայողի մահվան դեպքը կապված չէ զինվորական գործունեության հետ (Տավուշի մարզի Բերդ քաղաքի զինվորական կոմիսարի սպանությունն է՝ ալկոհոլի ազդեցության տակ գտնվող համագյուղացու կողմից):

Համեմատության համար նշենք, որ նախորդ տարի գրանցվել է 45 մահացության դեպք՝ 41 միջադեպի հետեւանքով:

Համաձայն ուսումնասիրության տվյալների՝ **2015 թ. մահացության 76 դեպքերից 41-ը հրադադարի ռեժիմի խախտման** հետևանքով են, **3-ը՝ սպանության (1-ը՝ դիտավորյալ, 2-ը՝ մարտական ծառայության կանոնների խախտման[1]), 6-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, 1-ը՝ մարտական ծառայության կանոնների խախտման, 21-ը՝ դժբախտ պատահարի (19 ավտովթար, 1 նռնակի պայթյուն, 1 դեռևս չճշտված հանգամանքներ), 4-ը՝ առողջական խնդիրների հետևանքով են:**

Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով 41 մահացության դեպքից 34-ը տեղի են ունեցել ԼՂ, իսկ 7-ը՝ ՀՀ տարածքում:

2011-2015թթ ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման վայրերի և զոհերի թիվն ունի հետևյալ պատկերը.

[1] Տվյալ դեպքում, եթե գործով չկա մեղադրյալ, սովորաբար սպանության դեպքում քր. գործը հարուցվում է «Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման» հիմքով

Աղյուսակ 1.

2013 – 2015թթ. հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացության դեպքերի թիվն ըստ վայրի

Տարեթիվ	Վայրը		Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը	Մահացությունների ընդհանուր թիվը
	ԼՂ	ՀՀ		
2011	11	0	11	39
2012	2	10	12	50
2013	1	4	5	31
2014	23	3	26	45
2015	34	7	41	76
Ընդամենը	71	24	95	241

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, վերջին երկու տարիներին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը կտրուկ աճել է մասնավորապես ԼՂ և Ադրբեջանի բաժանարար գծում:

Եթե դիտարկենք հրադադարի հետեւանքով մահացությունների թիվը մահացության ընդհանուր թվի հետ, ապա 2011 թ-ին այն կազմել է 28.2 տոկոս, 2012 թ-ին՝ 24 տոկոս, 2013 թ-ին՝ 16.1 տոկոս, իսկ 2014 և 2015 թթ. տվյալ ցուցանիշն աճել է՝ հասնելով համապատասխանաբար 57.7 և 53.9 տոկոսի:

Աղյուսակ 2-ում ներկայացված է պաշտոնական տվյալների և ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ունեցած տվյալների համեմատությունը Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թվի վերաբերյալ.

Աղյուսակ 2

Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացության դեպքերի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրությունների արդյունքների համեմատությունը պաշտոնական տվյալների հետ.

Տարեթիվ	Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը 2011-2014թթ.		Մահացությունների ընդհանուր թիվը 2011-2014թթ.	
	ՀՔԱՎ	Պաշտոնական (ՀՀ ՊՆ կամ ՀՀ զին. դատախազություն)	ՀՔԱՎ	Պաշտոնական (ՀՀ ՊՆ կամ ՀՀ զին. դատախազություն)
2011	11	10	39	36
2012	12	13	50	36
2013	5	5	31	30
2014	26	26	45	45
Ընդամենը	**54**	**54**	**165**	**147**

Ներքոնշյալ գծապատկերը ներկայացնում է 2011-2015 թթ. ընթացքում գրանցված հրադադարի ռեժիմի խախտումների թվի և դրանց հետևանքով մահացության թվի համեմատությունը.

Գծապատկեր 1.

2011-2015թթ. հրադադարի ռեժիմի խախտման[2] և դրա հետևանքով մահացությունների թիվը



Դիտարկելով հրադադարի ռեժիմի խախտումների թիվ/զոհերի թիվ հարաբերակցության դինամիկան՝ տեսնում ենք, որ հրադադարի ռեժիմի խախտումների թվի աճին զուգահեռ աճել է հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացության թիվը:

Եթե դիտարկենք 2011-2015թթ. ընթացքում հրադադարի խախտման հետևանքով մահացության մեկ դեպքին ընկնող հրադադարի ռեժիմի խախտումների թիվը /տե՛ս աղյուսակ 3/, նկատում ենք, որ 2015թ. մահվան մեկ դեպքին ընկնող հրադադարի ռեժիմի խախտման թիվը անհամեմատ նվազել է, սակայն մահացությունների թիվն աճել է: Այս ցուցանիշի հիման վրա կարելի է եզրահանգել

[2] ԼՂ ՊԲ ամենօրյա մամուլի հաղորդագրությունների մեջ, որտեղ մինչ այդ պարբերաբար նշվել է, թե քանի **անգամ** է խախտվել հրադադարի ռեժիմը, 2015 թ. դեկտեմբերի 18-ից սկսած բացակայում են հրադադարի ռեժիմի խախտման քանակի վերաբերյալ տվյալները, և նշվում է միայն արձակված կրակոցների թիվը: Հետևաբար 2015 թ. հրադադարի ռեժիմի խախտման քանակի վրաբերյալ տվյալը ավելին է, քան նշված է գծապատկերում:

մարտական հերթապահության անվտանգության կանոնների ոչ պատշաճ պահպանման և անվտանգության միջոցների ոչ բավարար մակարդակի մասին:

Աղյուսակ 3.

Մահացության մեկ դեպքի հաշվարկով հրադադարի ռեժիմի խախտումների քանակը

Տարեթիվ	Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների թիվը	Հրադադարի ռեժիմի խախտման թիվը մեկ մահվան դեպքի հաշվարկով, (խախտում/մահվան դեպք)
2011 թ.	11	1145
2012 թ.	12	1358
2013 թ.	5	2650
2014 թ.	26	1165
2015 թ.	41	978

Հարկ է նշել, որ եթե նախորդ տարիներին հրադադարի ռեժիմի խախտման թվի մասին պաշտոնական հաղորդագրություններ տարածելիս (հիմականում ԼՂ ՊԲ մամուլի ծառայության կողմից) չէր նշվում, թե մասնավորապես ինչ զինատեսակներից են եղել կրակոցները, ապա 2015թ-ին տարածված հաղորդագրությունների գերակշռող մեծամասնության մեջ առկա է կիրառվող զինատեսակների և դրանց քանակի մասին տեղեկատվությունը:

Ստորև ներկայացվում են 2015 թ-ի ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակների և դրանց կիրառման քանակի մասին ամփոփ տվյալները /տե՛ս աղյուսակ 4/:

Աղյուսակ 4.

2015 թ ընթացքում ադրբեջանական կողմից հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակները և դրանց կիրառման քանակը

№	Հրադադարի ռեժիմի խախտման ժամանակ կիրառված զինատեսակները	Զինատեսակի կիրառման քանակը	Կիրառված արկերի քանակը
1	**Նռնականետեր**	**117**	**974**
	ՌՊԳ-7	47	152 արկ
	ՀԱՆ-17	45	749 արկ
	ԳՊ-25	4	4 արկ
	ԱԳՍ-17	3	12 արկ
	ՀՀՆ-9	9	17 արկ
	ԱԳՍ	2	37 արկ
	ՍՊԳ	1	1 արկ
	«Մուխա»	1	2 արկ
	ՍՊԳ-9	3	հայտնի չէ
	ԱԳՍ - 18	1	հայտնի չէ
	ՌՊԳ - 21	1	հայտնի չէ
2	**Ականանետեր (հրետանի)**	**106**	**6062**
	60 մմ-ոց	43	2545 արկ
	60 և 82 մմ-ոց	19	526 արկ
	120 մմ-ոց	12	322 արկ
	60, 82 և 120 մմ-ոց	9	156 արկ
	82 մմ-ոց	23	2513 արկ
3	**Հրաձգային զինատեսակներ**	**6**	
	«Սև նետ»	1	հայտնի չէ
	ԱԿ	1	հայտնի չէ
	Իստիգլալ	1	հայտնի չէ
	ՊԿ	1	հայտնի չէ
	ՌՊԿ	1	հայտնի չէ
	ՍՎԴ	1	հայտնի չէ
4	**Ռեակտիվ հրթիռահրետանային կայանք**	**19**	**254**
	TR-107	19	254 արկ
5	**Զենիթային համակարգեր**	**5**	**3**
	ԶՈՒ-23/2 տիպի	5	3
6	**Խոշոր տրամաչափի գնդացրային միջոցներ**	**1**	հայտնի չէ
	չի նշվում	1	հայտնի չէ
7	**Խոշոր տրամաչափի հրետանի**	**2**	**34**
	Դ-30 հաուբիցից հրանոթ՝ 122 մմ - ոց	2	34 արկ
8	**Զրահատեխնիկա**	**3**	**20**
	Հրասայլ /տանկ/	3	20 արկ
	Ընդամենը	**259**	**7347**

Կարելի է նկատել, որ առավել հաճախ հակառակորդի զինված ուժերը կիրառել են տարբեր տեսակի **նռնականետեր** և տարբեր տրամաչափի **ականանետեր**:

1992 թ-ից գործող Սովորական սպառազինությունների[3] ՄԱԿ-ի Ռեգիստրում ներառված են սպառազինությունների յոթ կատեգորիաներ, որոնց արտահանման և ներմուծման վերաբերյալ տարբեր երկրներ ներկայացնում են իրենց ամենամյա տվյալները:

Այդ կատեգորիաներն են՝

1. մարտական տանկեր,
2. մարտական զրահամեքենաներ,
3. մեծ տրամաչափի հրետանի,
4. մարտական ինքնաթիռներ,
5. հարվածային ուղղաթիռներ,
6. ռազմանավեր,
7. հրթիռներ

Ադրբեջանական զինուժի կողմից 2015թ. կիրառված զինատեսակները ներառված են ՄԱԿ-ի սովորական սպառազինությունների ցանկում, սակայն հարկ է նշել, որ 2015թ. Ադրբեջանի զինված ուժերը սկսել են կիրառել այնպիսի զինատեսակներ, որոնք նախկինում հազվադեպ են կիրառվել կամ ընդհանրապես չեն կիրառվել: Մասնավորապես՝ **TR-107 տիպի** ռեակտիվ հրթիռահրետանային կայանք, **խոշոր տրամաչափի հրետանի**՝ 122 մմ-ոց Դ-30 հաուբիցից հրանոթ և **զրահատեխնիկա**: Դրանց կիրառման հետևանքով մահացել են մեծ թվով զինծառայողներ, իսկ ռեակտիվ հրթիռահրետանային կայանքի բեկորները ոչ միայն զինծառայողների, այլ նաև սահմանային գյուղերի խաղաղ բնակիչների մահվան պատճառ են դարձել[4]: Նշված զինատեսակներից 122 մմ-ոց Դ-30 հաուբիցից հրանոթը և ռազմական տանկերը 1994 թ. հրադադարի ռեժիմի կնքումից ի վեր առաջին անգամ են կիրառվել 2015 թ.-ին:

Իսկ այն փաստը, որ սովորական սպառազինությունների մասին պայմանագիրը խախտվում է՝ գերազանցելով պայմանագրով սահմանափակված մի շարք տեսակի սպառազինությունների ձեռք բերման քանակը, խոսում է այն մասին, որ տարածաշրջանում աճում է ռազմականացման մակարդակը, որը վտանգում է

---

[3] https://unoda-web.s3.amazonaws.com/wp-content/uploads/2013/06/English7.pdf, http://www.un.org/disarmament/convarms/Register/, http://www.mfa.am/hy/security/

[4] http://news-book.am/?p=66874%2Fhakarakordi+koxmic+3+bnakchi+spanutyan+depqi+aritv+harucvel+e+qreakan+gorc&l=am

ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցային գործընթացը:

Մահացության դեպքերի ամփոփ նկարագիր

2015 թ-ի ընթացքում 76 մահացած զինծառայողներից 19-ը պայմանագրային[5] զինծառայող են, 14-ը՝ սպա, 2-ը՝ ենթասպա, 1-ը՝ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակից, 38-ը՝ պարտադիր ժամկետային զինծառայող, 1 դեպքում չի նշվում, թե այլ սպաների հետ ավտովթարի ենթարկված և արդյունքում մահացած 58-ամյա անձը արդյոք զինծառայող է, թե ոչ, իսկ դեպքերից 1-ում նշվում է, որ ավտովթարի ենթարկված զինծառայողը հետախույզ է, սակայն չի նշվում վերջինիս սպա կամ պայմանագրային զինծառայող լինելը:

76 մահվան դեպքերից 30-ը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, 46-ը՝ Լեռնային Ղարաբաղի:

76 զինծառայողների մահվան փաստերից միայն 50-ի մասին է տարածվել պաշտոնական հաղորդագրություն:

Ըստ հասանելի տեղեկատվության՝ 76 մահվան դեպքերից 56-ի առնչությամբ հարուցվել են քրեական գործեր, որոնցից 50-ը գտնվում են նախաքննության, 4-ը՝ դատաքննության փուլերում:

Հարուցված քրեական գործերի բաշխումը ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների

- 12-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով է,
- 6-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,

[5] Մահացած պամանագրային զինծառայողների մեջ ներառվել է նաև առողջական խնդրի հետևանքով **մահացած բանվոր-ծառայող** Լևոն տոնոյանը

- 4-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետի հատկանիշներով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,
- 3-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ, 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,
- 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,
- 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 13-րդ կետեր՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,
- 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերի հատկանիշներով՝ սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,
- 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից:
- 8-ը՝ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ,
- 5-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների

շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

- 6-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը,
- 3-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը որն առաջացրել է ծանր հետևանքներ,
- 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,

Դեպքերից մեկի առնչությամբ *(զինծառայող Արթուր Առաքելյան)*, ըստ ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությանն ուղղված կազմակերպության գրության պատասխանի՝ քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ *([...] քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, եթե բացակայում է հանցագործության դեպքը):*

Ամփոփելով 2015 թ-ին հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերը, որոնք կազմում են մահացութունների ընդհանուր թվի ավելի քան կեսը՝ ակնհայտ է դառնում, որ 2014-2015թթ անհամեմատ աճել է լարվածությունը հայ-ադրբեջանական եւ ղարաբաղաադրբեջանական բաժանարար գծում:

2015 թ-ին աճել է ավտովթարի հետևանքով զինծառայողների մահացությունների թիվը: Նախորդ տարի, ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուսումնասիրությունների, գրանցվել է 3 նման դեպք: Մահացած զինծառայողների մեծ մասը սպա կամ պայմանագրային զինծառայող են: Պետք է նշել նաեւ, որ նման դեպքերի մասին հիմնականում բացակայում են պաշտոնական հաղորդագրությունները, հետեւաբար անհայտ է մնում, թե արդյոք դեպքի պահին

զինծառայողները գտնվել են զինծառայության մեջ, թե ոչ: Շատ դեպքերում լրատվամիջոցներում նշվում է, որ այդ անձինք վթարի ենթարկվել են անձնական մեքենայով:

Առողջական խնդիրների հետևանքով գրեթե բոլոր զինծառայողների մահվան դեպքերի մասին բացակայում է պաշտոնական հաղորդագրությունը: Դրանց մասին հանրությունը տեղեկացել է հիմնականում լրատվամիջոցների կողմից տարածված մամուլի հաղորդագրությունների միջոցով: Բացակայում են նաև դեպքերի առթիվ քրեական գործերի հարուցման մասին որևէ տեղեկություններ:

Ինքնասպանության դեպքերում հիմնականում խախտվում են կանոնադրային հարաբերությունները: Զինծառայողների նկատմամբ կիրառվում են բռնություններ, ճնշումներ եւ նրանք ենթարկվում են նվաստացումների:

Աղյուսակ 5.

Մահացության դեպքերի վիճակագրական տվյալները և նկարագրությունը

Ստորև ներկայացվում են 2015 թ-ի մահացության դեպքերի վիճակագրական տվյալները (տե՛ս աղյուսակ 5), դեպքերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը (տե՛ս աղյուսակ 6) և դեպքերի մանրամասն նկարագրությունները:

2015 թ. ընթացքում մահացությունների պատճառը/հետևանքը

Ամիս	Հրադադարի ռեժիմի խախտում	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Ինքնասպանություն/հասցնել	Սպանություն		Դժբախտ պատահար			Առողջական խնդիրներ	Միջադեպերի քանակը	Ընդամենը	Պաշտոնական հաղորդագրության առկայություն
				Դիտավորյալ	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Ավտոմթար	Դեռևս չճշտված	Նոնակի պայթյուն				
Հունվար	10			1		1				9	12	8
Փետրվար	3	1	1		1					5	6	6
Մարտ	6								1	4	7	6
Ապրիլ	2					1	1			4	4	4
Մայիս			1						1	2	2	1
Հունիս	1		2			1			1	5	5	3
Հուլիս						3*				2	3	2
Օգոստոս	2				1	1				4	4	1
Սեպտեմբեր	7		1			5				6	13	8
Հոկտեմբեր						2				2	2	0
Նոյեմբեր	2		1			3			1	5	7	2
Դեկտեմբեր	8					2		1		10	11	9
Ընդամենը	41	1	6	1	2	19	1	1	4	58	76	50

*ՀՀ ՌՈ աշխատակից

Աղյուսակ 6.

2015թ. մահացության դեպքերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

հ/հ	Անուն ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարած աշրջան	Դեպքի վայրը (քաղաք, գյուղ, հոսպոտալ, ճանապարհահատված...)	Զորամասը	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող մարմինը	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1	Կարեն Գրիգորյան (լեյտեանտ)	03.01.2015	ԼՂ	ՊԲ հարավային և արևելյան ուղղություններ		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
2	Վարդան Մկրտչյան	03.01.2015	ԼՂ	ՊԲ հարավային և արևելյան ուղղություններ		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
3	Պայմանագրային զինծառայող 1	05.01.2015	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գիծ		Ոչ պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
4	Պայմանագրային զինծառայող 2	05.01.2015	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գիծ		Ոչ պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
5	Արթուր Վարդևանյան (մայոր)	17.01.2015	ԼՂ	Քարվաճառի տարածք		Ոչ պաշտոնական			Դժբախտ պատահար /ավտովթար/	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
6	Արման Հարությունյան (պայմանագրային զինծառայող)	17.01.2015	ՀՀ	Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի սահմանագոտի		Ոչ պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
7	Սուրեն Փիլոսյան	20.01.2015	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն

8	Նահապետ Ասատրյան (պայմանագրայ ին զինծառայող)	21.01.2015	ԼՂ	Քարվաճառի տարածք		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն
9	Արման Ուդումյան (պայմանագրայ ին զինծառայող)	21.01.2015	ՀՀ	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի մարտական դիրքեր		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
10	Կարեն Գալստյան (լեյտենանտ)	23.01.2015	ՀՀ	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի մարտական դիրքեր		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն
11	Արտակ Սարգսյան	23.01.2015	ՀՀ	Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի մարտական դիրքեր		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ, 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն

12	Հայկազ Բարսեղյան	29.01.2015	ՀՀ	Երևան	Վ. Սարգսյանի անվ. ռազմաան ինստի տուտ	Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից	Սպանություն (դիտավորյալ)	Դատաքննություն
13	Շեքսպիր Հակոբյան	05.02.2015	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
14	Տիգրան Սիմոնյան (լեյտենանտ)	11.02.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը որն առաջացրել է ծանր հետևանքներ	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Դատաքննություն
15	Արման Օսիպյան	14.02.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը որն առաջացրել է ծանր հետևանքներ	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Նախաքննություն
16	Ալբերտ Սաֆարյան	27.02.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ	Ինքնասպանություն/ փոխվել է, դարձել է սպանություն	Դատաքննություն

								ինքնասպանության փորձի հասցնելը		
17	Արտակ Աղեկյան	28.02.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետեր		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետի հատկանիշներ՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն
18	Հայկ Բարոյան	28.02.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետեր		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետի հատկանիշներ՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն
19	Արսեն Կարապետյան	03.03.2015	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
20	Հակոբ Խաչատրյան	19.03.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսային (Գյուլիստանի) ուղղությամբ տեղակայված դիրքեր		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ, 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն

								շարժառիթով		
21	Էդուարդ Հայրապետյան	19.03.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսային (Գյուլիստանի) ուղղությամբ տեղակայված դիրքեր		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ, 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն
22	Արշակ Հարությունյան	19.03.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսային (Գյուլիստանի) ուղղությամբ տեղակայված դիրքեր		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ, 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն
23	Սամվել Հակոբյան	19.03.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսային (Գյուլիստանի) ուղղությամբ տեղակայված դիրքեր		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/Դիվերսիոն հարձակում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
24	Հայկ Մարգարյան	22.03.2015	ԼՂ	ՊԲ հյուսիս-արևելյան ուղղությամբտեղակայված զորամասերից մեկ		Պաշտոնական			Առողջական/ հանկարծամահ	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է

25	Հովսեփ Անդրեասյան	29.03.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
26	Հայկ Քեշիշօղլյան (ավագ ենթասպա)	07.04.2015	ՀՀ	ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված N զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրք		Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերի հատկանիշներ՝ սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
27	Լևոն Միրզոյան	07.04.2015	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
28	Արթուր Առաքելյան	09.04.2015	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկ/ Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ		Պաշտոնական			Դժբախտ պատահար /ֆուտբոլ խաղալիս/	Քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության հիմքով
29	Արտյոմ Թորոսյան	17.04.2015	ՀՀ	Սպիտակ-Երևան ավտոճանապարհի 19-րդ կիլոմետր		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 377-րդ հոդվածի 2-րդ մաս՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն

30	Հարություն Համբարյան	08.05.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
31	Խդր Սարոյան	26.05.2015	ՀՀ	Մուրացանի զինվորական հոսպիտալ		Ոչ պաշտոնական			Առողջական	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
32	Սարգիս Մամյան (մայոր)	05.06.2015	ՀՀ	ՀՀ Տավուշի մարզ	Բաղանիսի զորամաս	Ոչ պաշտոնական			Առողջական	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
33	Սիրակ Գևորգյան[6]	07.06.2015	ՀՀ	Վայոց Ձոր, Զեղեա գյուղից դեպի Հորադիս գյուղատեղի տանող դաշտամիջյան		Ոչ պաշտոնական			Դժբախտ պատահար /ավտովթար/	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
34	Էդգար Մելքոնյան	11.06.2015	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին	Ինքնասպանություն	Նախաքննություն

[6] Ս. Գևորգյանի մահվան մասին լուրը պաշտոնական աղբյուրներում չի տարածվել, սակայն լրատվամիջոցներում նշվում է, որ նրա հետ ավտովթարի պահին մեքենայում գտնվող վիրավորված անձինք եղել են զինվորականներ՝ (http://shamshyan.com/hy/article/2015/06/08/55645/)

								անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը		
35	Արման Եփրեմյան (պայմանագրայ ին զինծառայող)	26.06.2015	ՀՀ	Հայ-ադրբեջանական սահմանի նախիջևանյան ուղղություն, ՀՀ Սյունիքի մարզի Գորիայք բնակավայրի մոտ տեղակայված հայկական դիրքեր		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
36	Մավրիկ Մելիքյան (լեյտենանտ)	30.06.201	ՀՀ	ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տարածք		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
37	Սասուն Զիրոյան (կապիտան)	05.07.2015	ԼՂ	Բերձոր-Ստեփանակերտ ավտոմայրուղի	Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղի գ/մ	Պաշտոնական			Դժբախտ պատահար /ավտովթար/	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
38	Մարատ Թադևոսյան (կապիտան)	05.07.2015	ԼՂ	Բերձոր-Ստեփանակերտ ավտոմայրուղի	Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղի գ/մ	Պաշտոնական			Դժբախտ պատահար /ավտովթար/	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է

39	Գալուստ Վերդոյան (ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակից)	22.07.2015	ՀՀ	Աշտարակ-Գյումրի ավտոճանապարհ		Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
40	Արսեն Հունանյան (սպա)	05.08.2015	ՀՀ	Երևան-Մեղրի ավտոճանապարհ		Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժին	ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Դատաքննություն
41	Կարեն Հովհաննիսյան	12.08.2015	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
42	Իվան Բաբայան (պայմանագրային զինծառայող)	16.08.2015	ԼՂ	ՊԲ Ջրաբերդի մարտական հենակետ		Ոչ պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
43	Աշոտ Հովհաննիսյան (պայմանագրային զինծառայող)	18.08.2015	ՀՀ	ՀՀ ՊՆ N զորամասի մարտական հենակետ		Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը որն առաջացրել է ծանր հետևանքներ	Սպանություն/ Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Նախաքննություն

44	Հայկ Թևոյան (պայմանագրայ ին զինծառայող)	03.09.2015	ՀՀ	ՀՀ ՊՆ N զորամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 13-րդ կետեր՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
45	Մարատ Խաչանյան (պայմանագրայ ին զինծառայող)	04.09.2015	ԼՂ		Եղնիկներ	Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
46	Արման Ստեփանյան (պայմանագրայ ին զինծառայող)	04.09.2015	ԼՂ		Եղնիկներ	Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
47	Գրիգոր Սահակյան (մայոր)	05.09.2015	ՀՀ	Վարդենիս-Մարտունի ավտոճանապարհ, Ծովակ գյուղի վարչական տարածք		Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
48	Գևորգ Վարդանյան (ենթասպա)	05.09.2015	ՀՀ	Վարդենիս-Մարտունի ավտոճանապարհ, Ծովակ գյուղի վարչական տարածք		Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն

								ավելի մարդու մահ		
49	Տարոն Սեդրակյան (կապիտան)	05.09.2015	ՀՀ	Վարդենիս-Մարտունի ավտոճանապարհի, Ծովակ գյուղի վարչական տարածք		Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
50	Սևակ Գասպարյան (մայոր)	11.09.2015	ՀՀ	Վարդենիս-Մարտունի ավտոճանապարհի, Ծովակ գյուղի վարչական տարածք, հոսպիտալ		Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
51	Նարեկ Հարությունյան	06.09.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի	Ինքնասպանություն	Նախաքննություն

								հասցնելը		
52	Սուրեն Դավթյան (սպա)	21.09.2015	ՀՀ	Սիսիանի տարածաշրջանի «Բոչկի ձոր» կոչվող հատված		Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչություն	ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ՝ ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
53	Նորայր Խաչատրյան	25.09.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
54	Ռոբերտ Մկրտչյան	25.09.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
55	Հարութ Հակոբյան	25.09.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

								ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով		
56	Կարեն Շահինյան	25.09.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
57	Բաբկեն Սարուխանյան (պայմանագրայ ին զինծառայող)	15.10.2015	ՀՀ	Կոթի գյուղից Կողբի զորամաս գնալու ճանապարհ		Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 377-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
58	Հարություն Հակոբյան (պայմանագրայ ին զինծառայող)	24.10.2015	ՀՀ	Վարդենիս-Մարտունի ավտոճանապարհ		Ոչ պաշտոնական			Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
59	Լևոն Տոնոյան (պայմանագրայ ին զինծառայող/ բանվոր-ծառայող)	05.11.2015	ՀՀ	Լոռու մարզ, ք. Վանաձոր	ՀՀ ՊՆ թիվ 40133	Ոչ պաշտոնական	Քրեական գործի հարուցումը մերժվել է		Առողջական	Քրեական գործի հարուցումը մերժվել է
60	Խաչիկ Պողոսյան	06.11.2015	ՀՀ	Տաշիր-Մեծավան ավտոճանապարհ		Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն

								անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ		
61	Վահե Վանոյան	12.11.2015	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	Զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժին	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետերի հատկանիշներ՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
62	Միքայել Թորոսյան	12.11.2015	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	Զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժին	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետերի հատկանիշներ՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
63	Վոլոդյա Մարտիրոսյան (պայմանագրային զինծառայող)	15.11.2015	ՀՀ	Երևան-Մեղրի ավտոճանապարհ	Սյունիքի մարզի զորամասերից մեկ	Ոչ պաշտոնական	242-րդ հոդվածի 3-րդ մաս	ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն

64	Արամ Ասլանյան (պայմանագրայ ին զինծառայող)	15.11.2015	ՀՀ	Երևան-Մեղրի ավտոճանապարհ		Ոչ պաշտոնական	242-րդ հոդվածի 3-րդ մաս	ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
65	Գևորգ Խաչատրյան	28.11.2015	ԼՂ	ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր	ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքեր	Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
66	Էրիկ Գրիգորյան	04.12.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսարևելյան (Թալիշ) ուղղություն		Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 13-րդ կետեր՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն
67	Գարիկ Ավանեսյան (պայմանագրայ ին զինծառայող)	09.12.2015	ԼՂ	ՊԲ արևելյանուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

								մոլեռանդության շարժառիթով		
68	Վարդան Վարդանյան (պայմանագրայ ին զինծառայող)	11.12.2015	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքնություն
69	Կարեն Գրիգորյան	11.12.2015	ԼՂ	ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքնություն
70	Գոռ Օհանյան (ավագ լեյտենանտ)	17.12.2015	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական			Դժբախտ պատահար/ նռնաի պայթյուն	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
71	Աղասի Գրիգորյան	18.12.2015	ԼՂ	ԼՂ ՊԲ հարավային, արևելյան, հյուսիսարևելյան և հյուսիսային ուղղություններ		Պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	Նախաքնություն
72	Ռուբեն Ալեքսանյան	18.12.2015	ԼՂ	ԼՂ ՊԲ հարավային, արևելյան, հյուսիսարևելյան և հյուսիսային		Պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝	Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	Նախաքնություն

				ուղղություններ				շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով		
73	Ֆիդար/ Սիդար Ալոյան	19.12.2015	ԼՂ	ԼՂ ՊԲ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերի հատկանիշներ՝ սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	Նախաքնություն
74	Տարոն Կարապետյան (հետախույզ)	20.12.2015	ՀՀ	Ազատեկ-Վայք ավտոճանապարհ		Ոչ պաշտոնական			Դժբախտ պատահար /ավտովթար/	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
75	Սպարտակ Գալստյան (պայմանագրայ ին զինծառայող)	21.12.2015	ՀՀ	Զորամուտ-Տաշիր ավտոճանապարհ		Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներ՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն

76	Կարեն Աքուլյան	25.12.2015	ԼՂ	ԼՂ ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Եղնիկներ	Պաշտոնական	Զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
*	**Արթուր Աֆյան (պայմանագրային զինծառայող, ՀՀ-ում ռուսական ռազմաբազայի զինծառայող)**	08.03.2015	ՀՀ	Շիրակի մարզի Մայիսյան գյուղի մոտակայք	**Գյումրիի 102-րդ ռուսական ռազմաբազա**	Ոչ պաշտոնական	ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն (դիտավորյալ)	Նախաքննություն
**	**Սամվել Միրզոյան (Մահվան պահին արձակված է եղել պահեստազոր)**	06.03.2015	ՀՀ		**Մահվան պահին արձակված է եղել պահեստազոր**	Ոչ պաշտոնական			Ինքնասպանություն	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է
***	**Դերենիկ Պապյան (Տավուշի մարզի, ք. Բերդի զինվորական կոմիսար, վեճ համագյուղացու հետ աշխատանքից դուրս)**	18.19.2015	ՀՀ	Տավուշի մարզ, գ. Մովսես	**Վեճ համագյուղացու հետ աշխատանքից դուրս**	Ոչ պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն (դիտավորյալ)	Նախաքննություն
*** *	**Վոլոդյա Հովհաննիսյան (ՌԴ սահմանապահ զորքերի զինծառայող)**	20.11.2015	ՀՀ	Շիրակի մարզ, գյուղ Գուսանա	**(ՌԴ սահմանապահ զորքերի զինծառայող)**	Ոչ պաշտոնական			Ինքնասպանություն	Քրեական գործի հարուցման մասին տեղեկատվությունը բացակայում է

2015 Թ. ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԼՂ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. պայմանագրային զինծառայող 1
2. պայմանագրային զինծառայող 2

2015 թվականի հունվարի 5 լույս 6-ի գիշերը, ըստ tert.am-ի և որոշ այլ լրատվամիջոցների տեղեկությունների[7], դարաբաղաադրբեջանական սահմանի բաժանարար գծում ադրբեջանական զինված ուժերի կողմից ձեռնարկված ռազմական գործողությունների արդյունքում զոհվել են արցախցի երկու պայմանագրային զինծառայողներ:

Զինծառայողների անունները, սակայն, չեն նշվում ո՛չ լրատվամիջոցներում, և ո՛չ էլ պաշտոնական աղբյուրներում:

Դեպքի մասին այլ մանրամասներ հայտնի չեն: Հայտնի է միայն, որ ըստ ԼՂ ՊԲ մամուլի ծառայության՝ ՊԲ առաջապահ ստորաբաժանումները դիմել են պատասխան գործողությունների, որի արդյունքում զոհվել են ադրբեջանական զինուժի առնվազն երեք զինծառայողներ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2015 թ. սեպտեմբերի 18-ին տեղեկատվության հարցում է ուղարկել ՀՀ Քննչական կոմիտե՝ պարզելու զինծառայողների անունները և նրանց մահվան փաստի առթիվ քերական գործի հարուցման վերաբերյալ մանրամասներ, որին ի պատասխան տեղեկացվել է, որ աղբյուրի տվյալները, որին հղում է արել կազմակերպությունը, վերացական են և ոչ լրիվ և առաջարկվել է «կոնկրետացնել հարցման ենթակա անձանց վերաբերյալ տվյալները, ներկայացնել դրանք զինվորական քննչական գլխավոր վարչություն, որից հետո միայն կքննարկվի տեղեկատվություն տրամադրելու հարցը»:

Անհասկանալի է, թե ինչ նկատի ունի ՀՀ ՔԿ-ն՝ ասելով՝ «վերացական աղբյուր կամ ոչ լրիվ տվյալներ», քանի որ կազմակերպությունը նպատակ ուներ պարզելու այդ 2 անձանց մահվան հանգամանքների վերաբերյալ ամբողջական տվյալները:

---

[7] http://www.tert.am/am/news/2015/01/06/soldier/1552792 , http://times.am/?p=106359&l=am

3. Արման Հարությունյան (պայմանագրային զինծառայող)

2015 թվականի հունվարի 17-ին, aravot.am-ի տվյալներով[8], ադրբեջանական գնդակից մահացած վիճակում Նոյեմբերյանի բժշկական կենտրոն է տեղափոխվել Տավուշի մարզի սահմանամերձ՝ Ոսկեվան գյուղի բնակիչ, պայմանագրային զինծառայող Արման Ալիկի Հարությունյանը:

Արման Հարությունյանի մայրը պատմում է, որ նա պարտադիր զինծառայությունից զորացրվելուն պես (2014 թ. հունիս) պայմանագրային զինծառայության դիմում էր ներկայացրել, նպատակ ունենալով պաշտպանել իր շարունակ գնդակոծվող գյուղը:

Ըստ զինծառայողի մոր՝ Նարինեի, դեպքի օրը Արմանն աղմուկ է լսել, ետ է գնացել, որ նայի, հենց այդ պահին կրակել են: Մայրը նաև պատմում է, որ Արմանի ավագն է իր մեքենայով նրան տեղափոխել հոսպիտալ, նույնիսկ չսպասելով շտապօգնության մեքենային:

Զինծառայողի մոր՝ բժշկին ուղղված հարցին, թե ինչու բժիշկը չկարողացավ փրկել որդուն, նա պատասխանել , որ Արմանի մահը արագ է վրա հասել, գործը բուժօգնության չի հասել, հավելելով, որ եթե նույնիսկ ամենալավ հիվանդանոցը ամենամոտիկ գյուղում լիներ, զինվորին չէին կարողանա օգնել, քանի նա մահացել է դեռևս մինչև գյուղ մտելը[9]:

Արման Հարությունյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[10]:

4. Արման Ուղումյան (պայմանագրային զինծառայող)

2015 թվականի հունվարի 11-ին, ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տվյալների, ՀՀ ՊՆ զորամասերից մեկի մարտական հենակետում ադրբեջանական զինված ուժերի կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով ստացած

---

[8] http://www.aravot.am/2015/01/17/533232/
[9] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=321
[10] http://www.aravot.am/2015/01/19/533452/

հրազենային վնասվածքներից զոհվել է պայմանագրային զինծառայող, սերժանտ Արման Ռաշիդի Ուդումյանը[11]*:*

Ըստ ՀՀ Քննչական Կոմիտեի՝ Ուդումյանը մահացել է գլխի շրջանում ստացած հրազենային վնասվածքից:

Դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հունվարի 22-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով[12]:

Aysor.am[13] լրատվականի հետ զրույցում ՀՀ ՊՆ մամուլի խոսնակը հաստատել է տեղեկությունը՝ մանրամասնելով, որ զինծառայողը զոհվել է դիպուկահարի կրակոցից:

Ուդումյանը 34 տարեկան էր, Տավուշի մարզի սահմանամերձ Չորաթան գյուղից[14]: Զինծառայողը հետմահու պարգևատրվել է “Մարտական ծառայություն» մեդալով[15]:

5. Շեքսպիր Հակոբյան

Համաձայն ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տեղեկությունների՝ 2015 թվականի փետրվարի 4-ի լույս 5-ի գիշերն ու ողջ օրվա ընթացքում ադրբեջանական կողմը տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից շարունակել է ինտենսիվ կերպով խախտել հրադադարի ռեժիմը, որի արդյունքում ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Շեքսպիր Մխիթարի Հակոբյանը (ծնված 1990թ.)[16]*:*

Ժամկետային զինծառայողը հրազենային վիրավորում է ստացել մեջքի շրջանում:

Դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով[17]:

---

[11] http://www.mil.am/1421855664
[12] http://news.am/arm/news/249034.html
[13] http://www.aysor.am/am/news/2015/01/21/qnh-սահման/896612
[14] http://www.yerkir.am/am/news/79081.htm
[15] http://yerevannews.am/?p=33342&l=am/armanvo%D6%82dumyany+hetmahu+pargevatrvel+e+martakan+carayutyan+medalov
[16] http://newsline.am/am/news/view/4560.html
[17] http://168.am/2015/02/06/453550.html

Հակոբյանը Վայոց Ձորի Ջերմուկ քաղաքի բնակիչ էր:Հայաստան էր եկել ծառայելու նպատակով[18]: Զինծառայողը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[19]:

6. Արսեն Կարապետյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տվյալների համաձայն, 2015 թվականի մարտի 2-ի և լույս 3-ի գիշերը ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Արսեն Աբրեստի Կարապետյանը (ծնված 1995թ.) [20]:

Ժամկետային զինծառայողի մահվան դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով[21]:

20-ամյա Արսեն Կարապետյանը ընտանիքի միակ զավակն էր: Ապրում էր մոր հետ: Արսենի ընկերոջ խոսքերով՝ դեպքից երկու օր առաջ մոր հետ խոսելով՝ նա ուրախությամբ նշել էր, որ իր զորացրվելուն մնացել է 100 օր:

Արսեն Կարապետյանը հետմահու պարգևատրվել է “Մարտական ծառայություն» մեդալով[22]:

7. Հովսեփ Անդրեասյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տարածած հաղորդագրության համաձայն՝ 2015 թվականի մարտի 29-ի երեկոյան ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում ադրբեջանական կողմից արձակված գնդակից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Հովսեփ Սամսոնի Անդրեասյանը (ծնված 1995 թ.)[23]:

Զինծառահողի մայրը պատմել է, որ Հովսեփ Անդրեասյանը մարտական կանգնած է եղել հենակետում, և ընդամենը տասնհինգ րոպե է մնացած եղել, որ իր

---

[18] http://news.am/arm/news/251300.html
[19] http://168.am/2015/02/06/453560.html
[20] http://galatv.am/hy/news/artakan-henaketum-hakarakordi-koghmic-mahacu-hrazenayin-viravorum-e-stacel-1995t-cnvac-hay-zincarayogh/
[21] http://pastinfo.am/hy/node/63869
[22] http://news.am/arm/news/255261.html
[23] http://news.am/arm/news/259444.html

հերթափոխը հանձնի, բայց այդ գիշեր ադրբեջանական կողմի դիվերսիոն հարձակում է եղել, ամբողջ գիշեր կռվել են, իսկ լուսադեմին սերժանտը Հովսեփին խնդրել է իրեն երկու ժամով փոխարինել (նա ցանկացել է քնել), և խոստացել է դրանից հետո թույլ տալ, որպեսզի Հովսեփը չորս ժամ հանգիստ քնի: Հենց այդ ժամանակ էլ Հովսեփի ուղղությամբ կրակել են: Վիրավոր վիճակում Հովսեփը տեսնելով սերժանտին, ասել է՝ տեսա՞ր, ինձ էլ խփեցին, հետո առաջարկել, որ քանի դեռ ողջ է, թուղթ բերեն, ստորագրի, որ «սերժանտը մեղք չունի, ի՛նքն է (Հովսեփը) գնացել»… Վերջում խնդրել է զրահաբաճկոնը հանել, քանի որ խեղդվում էր…[24]

Նա վնասվածք է ստացել որովայնի շրջանում և մահացել է հոսպիտալ տեղափոխվելուց հետո[25]:

Դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով[26]:

Nwes.am-ի տեղեկություններով դեպքից երկու օր առաջ նա խոսել էր մոր հետ և հիշեցրել, որ իր ծառայության ավարտին մնացել է 100 օր:

Զինծառայողը տան կրտսերն էր, ուներ երկու քույր և մեկ եղբայր:

Հովսեփ Անդրեասյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[27]:

8. Հայկ Քեշիշօղլյան (ավագ ենթասպա)

ՀՀ քննչական կոմիտեի մամուլի ծառայության[28] 2015 թվականի ապրիլի 7-ին հաղորդած տեղեկության համաձայն՝ ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում, ըստ նախնական տվյալների, հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով ստացած հրազենային վիրավորումից զոհվել է ավագ ենթասպա, 43-ամյա Հայկ Սարգսի Քեշիշօղլյանը:

---

[24] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=334
[25] http://news.am/arm/news/259620.html
[26] http://www.pastinfo.am/hy/node/66074
[27] http://gazeta.am/index.php/hy_AM/news/2/34652-lxh-pb-zincarayox-hovsep-andreasyane-hetmahou-pargeuatrvel-e-martakan-carayoutyoun-medalov.html
[28] http://news.am/arm/news/260728.html

ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչությունում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով:

Ըստ որոշ տեղեկությունների, Հայկ Քեշիշօղլյանը մահացել է ապրիլի 6-ին՝ հերթափոխի ժամանակ[29]: Ենթասպան մոլորվել է մառախուղի պատճառով և ադրբեջանական կողմի կրակոցի արդյունքում գլորվել ու ընկել է ձորը: Նրա մարմինը եղել է ադրբեջանական կողմի մշտական կրակի տակ և այն հանելու համար 2 օր է պահանջվել: Պաշտպանության նախարարությունն այս տեղեկությունները պաշտոնապես չի հաստատել:

Հայկ Քեշիշօղլյանը Նիգավան գյուղից էր, սակայն տուն չունենալու պատճառով Աշտարակում վարձով է բնակվել՝ սոցիալապես ծանր վիճակում: Քեշիշօղլյանը 3 որդի ուներ: Նրանցից մեկը զինծառայության մեջ է, մյուսը սովորում է Ռուսաստանի ռազմական ուսումնարաններից մեկում, իսկ կրտսերը դպրոցական է:

9. Լևոն Միրզոյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության հայտնած տեղեկության համաձայն՝ 2015 թվականի ապրիլի 7-ին ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում ադրբեջանական կողմից արձակված գնդակից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 20-ամյա Լևոն Մուշեղի Միրզոյանը[30]:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչությունում ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով հարուցվել է քրեական գործ[31]:

ԼՂ նախագահի հրամանագրով ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար զինծառայող Լևոն Միրզոյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[32]:

Դեպքի մանրամասների մասին չի հաղորդվում:

---

[29] http://armtimes.com/hy/read/62324 , http://shamshyan.com/hy/article/2015/04/07/48786/
[30] http://news.am/arm/news/260908.html
[31] http://pastinfo.am/hy/node/66794
[32] https://www.yerkir.am/news/view/83461.html

10. Արման Եփրեմյան (պայմանագրային զինծառայող)

Ըստ ՀՀ ՊՆ մամուլի ծառայության տեղեկատվության՝ 2015 թվականի հունիսի 26-ին, ժամը 18:30-ի սահմաններում ադրբեջանական կողմը, խախտելով հրադադարի ռեժիմը հայ-ադրբեջանական սահմանի նախիջևանյան ուղղությամբ, հրաձգային տարբեր տրամաչափի զենքերից կրակել է ՀՀ Սյունիքի մարզի Գորհայք բնակավայրի մոտ տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Փոխհրաձգության ընթացքում կրծքավանդակի շրջանում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՀՀ ԶՈՒ պայմանագրային զինծառայող, 1987 թ. ծնված շարքային Արման Մայիսի Եփրեմյանը[33]:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչությունում ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով հարուցվել է քրեական գործ[34]:

Ի դեպ, ՀՀ ՊՆ մամուլի խոսնակը նշել է, որ ևս երեք պայմանագրային զինծառայողներ վիրավորվել են[35]: Ըստ խոսնակի՝ այդ հենակետերի հատվածում վերջին մեկ տարվա ընթացքում կրակահերթեր առհասարակ չեն եղել[36]:

Դեպքի մասին այլ մանրամասներ չեն հաղորդվել:

Պայմանագրային զինծառայող, շարքային Արման Մայիսի Եփրեմյանը հետմահու պարգևատրվել է Արիության մեդալով[37]:

11. Կարեն Հովհաննիսյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության կողմից տարածված տեղեկատվության համաձայն՝ 2015 թվականի օգոստոսի 12-ին ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում ադրբեջանական կողմից արձակված գնդակից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Կարեն Պարույրի Հովհաննիսյանը[38]:

---

[33] http://www.mil.am/1435391148
[34] http://fact.am/archives/79031
[35] http://razm.info/66544
[36] http://news.am/arm/news/274033.html
[37] http://www.aysor.am/am/news/2015/06/27/Արման-Եփրեմյան/969572
[38] http://nkrmil.am/main/am/newsMore1000.html , http://zham.am/am/news/52362.html

Շարքային Կարեն Հովհաննիսյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով՝ ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար[39]:

12. Իվան Բաբայան (պայմանագրային զինծառայող)

Ջրաբերդի մարտական հենակետում 2015 թվականի օգոստոսի 16-ին ադրբեջանական կողմի կրակոցից մահացել է պայմանագրային զինծառայող Իվան Շիրինի Բաբայանը, որի մահվան վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:

Դեպքի մասին տեղեկությունը ստացվել է ԼՂ Հանրային հեռուստաընկերության աշխատակից Բելլա Լալայանի ֆեյսբուքյան էջից[40]:

Այլ մանրամասներ դեպքի մասին չենտարածվել:

13. Հայկ Թևոյան (պայմանագրային զինծառայող)

ՀՀ ՊՆ մամուլի ծառայության տեղեկություններով՝ 2015 թվականի սեպտեմբերի 3-ին ադրբեջանական կողմը՝ խախտելով հրադադարի պահպանման ռեժիմը, խոշոր տրամաչափի դիպուկահար հրազենից կրակոցներ է արձակել ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության շրջանի մարտական հենակետի ուղղությամբ, որի հետևանքով պարանոցի շրջանում ստացած հրազենային վնասվածքից մահացել է մարտական հերթապահության նշանակված նույն զորամասի պայմանագրային զինծառայող Հայկ Կառլենի Թևոյանը (ծնված 1975թ., ՀՀ ԶՈՒ-ում՝ 2010թ.-ից)[41]:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 13-րդ կետերով (սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով)[42]:

---

[39] http://www.aysor.am/am/news/2015/08/13/հետմահու-մեդալ/986179
[40] http://www.mashable.am/cavali-lur-sahmanic/
[41] http://www.mil.am/1441299203
[42] http://www.lragir.am/index/arm/0/country/view/119851

Շարքային Հայկ Կառլենի Թևոյանը պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով՝ հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած խիզախության և անձնական արիության համար[43]:

14. Նորայր Խաչատրյան
15. Ռոբերտ Մկրտչյան
16. Հարութ Հակոբյան
17. Կարեն Շահինյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տարածած հաղորդագրության համաձայն՝ 2015 թվականի սեպտեմբերի 25-ին ադրբեջանական զինուժը թուրքական արտադրության TR-107 կայանքներից հրթիռահրետանային արկակոծման է ենթարկել ՊԲ-ի հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասը, որի հետևանքով բեկորային մահացու վիրավորում են ստացել զինծառայողներ՝ 1995թ. ծնված Նորայր Միքայելի Խաչատրյանը, Ռոբերտ Սուրենի Մկրտչյանը և 1997թ. ծնված Հարութ Մաքսիմի Հակոբյանը, Կարեն Գևորգի Շահինյանը[44]:

Դեպքի առիթով, ըստ ՀՀ քննչական ծառայության, հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով[45]:

Դեպքից հետո լուրեր են տարածվել, որ մարտական հենակետում գտնվել են նորակոչիկներ (ըստ հասանելի տվյալների 2 հոգի 2 ամսվա զինծառայողներ են եղել, 1-ը՝ մինչև 3 ամսվա, իսկ 1-ը՝ 4 ամսվա զինծառայող): Սակայն ըստ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի՝ զինծառայողները դեպքի պահին առաջին գծից բավականին հեռու են գտնվել՝ 5 կմ հեռավորության վրա զբաղված են եղել իրենց առօրյա գործունեությամբ[46]:

Շիրակի մարզի Փոքր Մանթաշ գյուղի գյուղապետ Ժիրայր Հակոբյանը, որտեղ ապրում է վիրավորված զինծառայողներից մեկը, նոր մանրամասներ է հաղորդել դեպքի մասին՝ մասնավորապես նշելով, որ այն զորամասը որտեղ ծառայում են

---

[43] http://www.lragir.am/index/arm/0/country/view/119974
[44] http://www.azatutyun.am/archive/news/20150925/2031/2031.html?id=27271291
[45] http://investigative.am/news/view/zincarajoxneri-spanutyun-ev-spanutyan-porc.html
[46] http://news.am/arm/news/287945.html

զինվորները շատ մոտ է դիրքերին: 20 զինծառայողներից մի քանիսը երկու-երեք ամիս առաջ են զորակոչվել: Նրանք գնացել էին կրակադաշտ՝ կրակել սովորելու, որպեսզի 6 ամիս անց բարձրանան մարտական հենակետ: Դեպքը պատահել է այն ժամանակ, երբ զինծառայողները ճաշելիս են եղել: Քսանն էլ բեկորային վնասվածք են ստացել, նրանցից 4-ը մահացել են[47]:

Մահացած զինծառայողները հետմահու պարգևատրվել են «Մարտական ծառայություն» մեդալով՝ ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար[48]:

Զոհված զինծառայողներից Կարեն Շահինյանը Կոտայքի մարզի Աբովյան քաղաքից էր, ընտանիքի կրտսեր զավակը[49]: Զորակոչվել էր զինծառայության չորս ամիս առաջ: Հարութ Հակոբյանը Արարատի մարզի Ավշար գյուղից էր: Զորակոչվել էր զինծառայության 2015 թվականի հուլիսի 3-ին: Նորայր Խաչատրյանը, Ստեփանակերտից էր և շուտով պետք է զորացրվեր: Իսկ զոհված չորրորդ զինծառայող Ռոբերտ Մկրտչյանը Երևանից էր: Զորակոչվել էր զինծառայության մոտ մեկ տարի առաջ:

Նույն միջադեպի հետեւանքով 16 զինծառայող վիրավորվել է[50]:

18. Վահե Վանոյան

19. Միքայել Թորոսյան

2015 թվականի նոյեմբերի 13-ին ՀՀ ՊՆ մամուլի հաղորդագրությամբ հայտնեց, որ նոյեմբերի 12-ին ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում ադրբեջանական կողմից արձակված կրակոցներից մահացու հրազենային վիրավորում են ստացել զինծառայողներ Վահե Վարդգեսի Վանոյանը (ծնված 1995թ.) և Միքայել Առաքելի Թորոսյանը (ծնված 1996թ.)[51]:

Դեպքի առթիվ զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ

---

[47] http://armtimes.com/hy/read/70955
[48] http://news.am/arm/news/287904.html
[49] http://news.am/arm/news/287981.html , http://news.am/arm/news/287978.html , http://news.am/arm/news/288042.html , http://armtimes.com/hy/read/70930 , http://www.1in.am/1729460.html
[50] http://news.am/arm/news/287900.html
[51] http://www.mil.am/hy/news/3775

հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետերի հատկանիշներով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով[52]:

Վահե Վանոյանը Շիրակի մարզի Արևիկ գյուղից էր, մեկ ամսից պետք է զորացրվեր: Գյուղապետը NEWS.am-ին պատմել է, որ դեպքից մեկ ամիս առաջ ծառայակցի կյանքը փրկելու համար Վահեին պարգևատրել էին մեդալով, 10-օրյա արձակուրդ էր տրվել, սակայն նա հրաժարվել էր արձակուրդից՝ մտածելով, որ միևնույն է մեկ ամսից զորացրվելու է: Զարմանալի զուգադիպությամբ Վահեին տրամադրված արձակուրդը լրանալու էր դեպքի հաջորդ օրը, այսինքն:

Գյուղապետի խոսքերով Վահեն ընտանիքի հետ վերջին անգամ խոսել էր դեպքից 1 ժամ առաջ, ասել, որ ամեն ինչ լավ է: Վահեն ընտանիքի կրտսեր զավակն էր, ավագ քույր ունի[53]:

Մյուս զոհված զինծառայողը՝ Միքայել Թորոսյանը Երևանում էր բնակվում: Զորակոչվել էր զինծառայության 10 ամիս առաջ: Միքայելն ընտանիքի կրտսեր զավակն էր: Դեպքից 3 օր հետո՝ նոյեմբերի 15-ին, պիտի լրանար նրա 20-ամյակը, սակայն իր իսկ ծննդյան օրը նրան զինվորական կարգով հուղարկավորեցին Կոտայքի Զորաղբյուր գյուղի գերեզմանատանը[54]:

ԼՂՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար շարքայիններ Միքայել Թորոսյանը և Վահե Վանոյանը հետմահու պարգևատրվել են «Մարտական ծառայություն» մեդալով[55]:

20. Գարիկ Ավանեսյան (պայմանագրային զինծառայող)

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տարածած մամուլի հաղորդագրության համաձայն՝2015 թ-ի դեկտեմբերի 8-ին ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական հենակետում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային զինծառայող 1991 թ-ին ծնված Գարիկ Գուրգենի Ավանեսյանը[56]:

---

[52] http://investigative.am/news/view/zincarayoxneri-mah.html
[53] http://news.am/arm/news/295968.html
[54] http://news.am/arm/news/296370.html
[55] http://news.am/arm/news/296359.html
[56] http://news.am/arm/news/300956.html

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ: Գործը գտնվում է նախաքննության փուլում[57]:

ԼՂ Ասկերանի շրջանի Իվանյան համայնքի ղեկավար Մարդի Աղաջանյանի խոսքերով, ով մահացած զինծառայողի համագյուղացին է, Գարիկ Ավանեսյանը 6 ամիս առաջ էր ավարտել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը և վերադարձել Արցախ՝ ծառայության[58]:

21. Վարդան Վարդանյան (պայմանագրային զինծառայող)

2015 թ-ի դեկտեմբերի 11-ին ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում ադրբեջանական կողմից հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային 1994 թ-ին ծնված զինծառայող Վարդան Արթուրի Վարդանյանը [59]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու հիմքով[60]:

Զինծառայողը Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքից էր, տան ավագ որդին: Նա 2010 թ-ին ընդունվել էր Երևանի Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, 2014 թ-ին ավարտել այն ու մեկնել ծառայության[61]:

Վարդան Վարդանյանը ԼՂ նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[62]:

22. Կարեն Գրիգորյան

ԼՂ ՊԲ տարածած տեղեկատվության համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 11-ին՝ ադրբեջանական կողմի դիպուկահար հրացանից արձակված կրակոցից ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական հենակետում

---

[57] http://www.aravot.am/2015/12/09/637797/
[58] http://abovyantv.am/archives/4546
[59] http://hetq.am/arm/news/64430/mahacu-hrazenayin-viravorum-e-stacel-pb-paymanagrayin-zintsarayox-vardan-arturi-vardanyany.html
[60] http://www.1in.am/1793283.html
[61] http://news.am/arm/news/301728.html
[62] http://www.pastinfo.am/hy/node/85697

մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող, 20-ամյա Կարեն Արմենի Գրիգորյանը[63]*:*

Դեպքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանություն կատարելու դեպքի առթիվ, կատարվում է նախաքննություն[64]:

News.am կայքի տվյալներով՝ Կարենը Գրիգորյանը Արարատի մարզի Մասիս քաղաքից էր: Զինծառայողը 2016 թվականի հունվարին պետք է զորացրվեր[65]:

ԼՂ նախագահի հրամանագրով Կարեն Գրիգորյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[66]:

23. Կարեն Աքուլյան

ՀՀ ՊՆ մամուլի ծառայությունը տեղեկատվություն է տարածել այն մասին, որ 2015 թվականի դեկտեմբերի 25-ին ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում ադրբեջանական դիպուկահարի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող Կարեն Միսակի Աքուլյանը (ծնված 1997թ.)[67]*:*

Նույն օրը ՀՀ քննչական ծառայությունը հայտարարություն է տարածել, որ աջ ուսային և անութային շրջանում հրազենային վնասվածք ստացած և տեղում մահացած զինծառայողի սպանության դեպքի առթիվ երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով[68]:

Զինծառայողը Վանաձորից էի: Տան կրտսեր զավակն էր, ունի երկու ավագ քույր[69]:

---

[63] http://news.am/arm/news/301575.html
[64] http://www.investigative.am/news/view/zincarayox-karen-grigoryan.html
[65] http://news.am/arm/news/301666.html
[66] http://shamshyan.com/hy/article/2015/12/12/72709/
[67] http://www.mil.am/hy/news/3817
[68] http://investigative.am/news/view/karen-aqulyan.html
[69] http://fnews.am/?p=2515176&l=am/sahmanin+zohvac+18-amya+zinvory+anapahov+yntaniqi+zavak+er

Դիվերսիա

1. Կարեն Գրիգորյան (լեյտենանտ),
2. Վարդան Մկրտչյան

2015 թվականի հունվարի 2-ի լույս 3-ի գիշերը ԼՂ ՊԲ հարավային և արևելյան ուղղություններով ադրբեջանական ուժերի կողմից ձեռնարկված դիվերսիոն հետախուզական գործողությունների արդյունքում զոհվել են ՊԲ զինծառայողներ Կարեն Սամվելի Գրիգորյանը և Վարդան Մարտիկի Մկրտչյանը: Իսկ զինծառայող Վոլոդյա Գագիկի Հարությունյանը վիրավորում է ստացել[70]*:*

Կարեն Գրիգորյանն Արտաշատից էր: 21 տարեկան էր: Բուհն ավարտելուց հետո մեկնել էր ծառայության՝ Լեռնային Ղարաբաղ[71]:

19-ամյա Վարդան Մկրտչյանն Արարատի մարզի Հովտաշեն գյուղից էր, կես տարի էր մնում ծառայության ավարտին: Հովտաշենի Գյուղապետ Խաչիկ Խաչատրյանի խոսքերով՝ Վարդանը դեպքից ընդամենը ժամեր առաջ խոսել էր ծնողների և տատիկի հետ, շնորհավորել նրանց ամանորը, լավ տրամադրություն էր ունեցել:[72]

Ըստ Վարդան Մկրտչյանի ծառայակից ընկերոջ՝ շարքային զինծառայող Մհեր Օթարյանի՝ դեպքի օրը Վարդանն անհանգիստ է եղել: Տարածքում գտվող շների հաչոցը նրան անսովոր է թվացել: Վարդանն առաջարկել է առաջ գնալ: Այդ պահին մթության միջից կրակոցներ լսելով և մի քանի փամփուշտ կրակելուց հետո հասկանալով, որ շրջափակման մեջ են՝ շրջվել են և ցանկացել դեպի դիրք վազել: Սակայն Վարդանն իսկույն կանգ է առել և շարունակել պայքարել[73]: Ըստ Վարդանի հոր՝ Մարտին Մկրտչյանի, Վարդանն իրեն չի կորցրել, տեղում 2 նռնակ է շպրտել ու սկսել է կրակել: Վարդանի դին ծնողներին են հանձնել փակ դագաղով. Դիվերսանտներն առանձնակի դաժանությամբ են սպանել նրան. կրծքավանդակից հրազենային վիրավորումներ հասցնելուց հետո, կտրել են 19 ամյա պատանու պարանոցն ու աջ ականջը[74]:

---

[70] http://www.azatutyun.am/archive/news/20150103/2031/2031.html?id=26774543
[71] http://news.am/arm/news/246837.html
[72] http://news.am/arm/news/246855.html
[73] http://razm.info/60964
[74] http://forrights.am/?ln=1&id_=10&page_id=304

Ինչ վերաբերում է դիվերսիայի արդյունքում թոքի ու երիկամի շրջանում հրազենային վնասվածք ստացած Վոլոդյա Հարությունյանին, ապա ըստ Արարատի մարզի Քաղցրաշենի գյուղապետ Վալերիկ Գյուլամիրյանի, նա արդեն իսկ վերադարձել է ծառայության: Ըստ գյուղապետի հայտնած տեղեկությունների՝ զինծառայողը նախ վիրահատվել է ԼՂ-ում, ապա տեղափոխվել Երևան, որտեղ ենթարկվել է ողնաշարի վիրահատության[75]:

ԼՂ նախագահի հունվարի 3-ի հրամանագրով՝ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար Վարդան Մկրտչյանը հետմահու պարգևատրվել է "Արիության համար» մեդալով, իսկ նույն զորամասի սպա, լեյտենանտ Կարեն Գրիգորյանը՝ «Մարտական ծառայություն» մեդալով[76]:

3. Սուրեն Փիլոսյան

ՊԲ մամուլի ծառայության տարածած տվյալների համաձայն՝ 2015 թվականի հունվարի 19-ին և լույս 20-ի գիշերը դարաբաղաադրբեջանական շփման գծի տարբեր հատվածներում ադրբեջանական զինուժի կողմից ձեռնարկվել են 8 հետախուզադիվերսիոն գործողությունների փորձեր, որոնք ժամանակին կանխվել են: Մարտական գործողությունների արդյունքում՝ ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Սուրեն Խաչիկի Փիլոսյանը (ծնված 1995թ.)[77]:

ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով[78]:

Մայրը՝ Նաիրան, վերջին անգամ որդու հետ հեռախոսազրույց ունեցել դեպքին նախորդող երեկոյան: Իմանալով, որ սահմանին իրավիճակը լարված է, որդուն խարհուրդ է տվել , որ գլուխը դուրս չհանել, Սուրենն էլ ի պատասխան հանգստացրել

[75] http://news.am/arm/news/270036.html
[76] http://www.azatutyun.am/content/article/26774565.html
[77] http://www.tert.am/am/news/2015/01/20/nkr/1564644
[78] http://www.aravot.am/2015/01/21/534554/

է մորը, ասելով, որ ինքը երեխա չէ: Իսկ արդեն առավոտյան մայրն իմացել է պատահածի մասին:

Վերջին անգամ որդուն մի տարի առաջ է տեսել, երբ Սուրենին տաս օրով արձակուրդ էր տրվել:

Սուրենի ծառայության ավարտին մնացել էր 5 ամիս:

Սուրենի մանկության ընկերը՝ Արկադին, ով Սուրենի հետ նույն օրն էր զորակոչվել և վեց ամիս միասին ծառայելուց հետո ծառայությունը շարունակում էր նույն զորամասի տարբեր գումարտակներում, պատմում է, որ դեպքի մասին ինքն իմացել է առավոտյան ժամը 6-ին: Ըստ նրա՝ իրավիճակի լարվածության պատճառով իրենց հետախուզությունում ուզում էին տագնապ տալ, սակայն կարծես թե արդեն ուշ էր, տագնապ չտվեցին ու զինծառայողներին էլ մարտական հենակետ չբարձրացրին:

Սուրենի մոր խոսքերով՝ իրենց ասել են, որ զինծառայողը խրամատի մեջ է ընկել, բայց նրանք մտածում են, որ դեպքը դաշտում է եղել՝ բաց տարածքում, քանի որ Սուրենի «դեմքը փակ էր, գլուխը չի եղել …փակ բերել են…»[79]:

ԼՂ նախագահի հունվարի 20-ի հրամանագրի համաձայն՝ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար զինծառայող Սուրեն Փիլոսյանը հետմահու պարգևատրվել է «Արիության համար» մեդալով:[80]

4. Նահապետ Ասատրյան (պայմանագրային զինծառայող)

2015 թվականի հունվարի 20-ին լույս 21-ի գիշերը՝ ժամը 03:00-ի սահմաններում, դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի Քարվաճառի պաշտպանական ուղղությամբ ադրբեջանական կողմը ձեռնարկել է դիվերսիոն-հետախուզական ներթափանցման փորձ, որի ժամանակ զոհվել է պայմանագրային զինծառայող Նահապետ Արտակի Ասատրյանը (ծնված 1982 թ.), իսկ Հովհաննես Օնիկի Գասպարյանը (ծնված 1973 թ.) վիրավորում է ստացել[81]:

Զինծառայողի սպանության դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով, իսկ Հովհաննես Գասպարյանի

---

[79] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=356
[80] http://yerevannews.am/?p=33266&l=am/bako+sahakyany+hetmahu+pargevatrel+e+zohvac+zincarayoxin
[81] http://armlur.am/294188/

վիրավորման փաստի առթիվ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով՝ սպանության փորձ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:[82]:

Նահապետ Արտակի Ասատրյանը հետմահու պարգևատրվել է “Մարտական ծառայություն» մեդալով[83]: Նահապետ Ասատրյանն Արագածոտնի մարզի Լուսագյուղ գյուղից էր: Գուղապետ Քաջիկ Զաքարյանի խոսքերով՝ նա պայմանագրային զինծառայության մեջ էր շուրջ 9 տարի և 1 ամիս առաջ էր մեկնել առաջնագիծ[84]:

5. **Կարեն Գալստյան (լեյտենանտ),**
6. **Արտակ Սարգսյան**

ՀՀ ՊՆ պաշտոնական լրատվական ծառայության հաղորդմամբ՝ 2015 թվականի հունվարի 23-ի առավոտյան Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները դիվերսիոն գործողությունների փորձեր են ձեռնարկել ՀՀ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի մարտական մի քանի դիրքերի ուղղությամբ:

ՀՀ ԶՈՒ կողմից ձեռնարկված գործողությունների արդյունքում դիվերսիոն խմբերի առաջխաղացումը կասեցվել է: Շուրջ կես ժամ տևած մարտական գործողությունների արդյունքում զոհվել են ՀՀ զինծառայողներ լեյտենանտ Կարեն Արարատի Գալստյանը և շարքային Արտակ Վաղարշակի Սարգսյանը, ևս 3 զինծառայողներ վիրավորվել են[85]:

Դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ 13-րդ հոդվածներով՝ սպանության փաստի առթիվ և 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով՝ սպանության փորձի[86]:

Մովսես գյուղի գյուղապետ Արարատ Ավալյանի խոսքերով՝ դա առաջին հարձակման փորձն էր գյուղի սահմանագծում տեղակայված հենակետի վրա, որը գյուղից 5-6 կիլոմետր է հեռու: Ըստ նրա՝ դիվերսիոն գործողությունը կատարվել է հենց հենակետում, որտեղ զնդակահարվել և վիրավորվել են զինծառայողները: Զինվորներից մեկը տարածքի մաքրությամբ է զբաղվելիս եղել՝ անզեն, որտեղ էլ տեղի

---

[82] http://168.am/2015/01/21/447109.html
[83] http://yerevannews.am/?p=33319&l=am/naxagahy+hetmahu+pargevatrel+e+zohvac+zincarayoxin
[84] http://shamshyan.com/hy/article/2015/01/21/40468/
[85] http://www.mil.am/1422000014/date/2015-01-23
[86] http://civilnet.am/2015/01/24/criminal-case-killed-soldiers/#.VMdLRtLkdRU

է ունեցել դեպքը: Մյուսները փորձել են օգնության հասնել: Նրանցից մեկը օգնություն ցուցաբերելիս վիրավորվել է: Մեկ այլ զինծառայող տեղափոխել է նրանց թաքստոց: Գյուղապետը ենթադրում է, որ հենակետի ավագը՝ փորձելով կազմակերպել պաշտպանությունը՝ զոհվել է: Այդ պատճառով հենակետի պաշտպանությունը կազմակերպել են հենակետում գտնվող մյուս զինծառայողները[87]:

Զոհված Արտակ Սարգսյանը զորակոչվել էր 2013թ աշնանը: 22 տարեկան էր, ապրում էր Արարատի մարզի Վեդի քաղաքում: Մոր՝ Անահիտի խոսքերով՝ Արտակը մի տարի ուշ էր գնացել բանակ՝ սրտի հետ որոշակի խնդիրներ ուներ: Մի տարի հետո էլ, երբ պիտանի ճանաչվեց սահմանափակումով՝ էլի սրտի հետ կապված, իրավունք չուներ մարտական հենակետ բարձրանալու՝ծառայությունն ավելի թեթև պիտի անցկացներ: Բայց ինքը վեց ամիս հետո կամավոր դիմում էր գրել ու խնդրել որ իրեն հենակետ տանեն[88]:

Կարեն Գալստյանը Տավուշի մարզի Աչաջուր գյուղից էր: 21 տարեկան էր: Մեկ տարի առաջ ավարտել էր Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը և գործուղվել Տավուշի մարզի զորամասերից մեկը: Ըստ yerkir.am[89] լրատվական կայքի՝ Կարեն Գալստյանը հունվարի 2-ի լույս 3-ի գիշերը կրկին դիվերսիայի զոհ դարձած սպա, լեյտենանտ Կարեն Գրիգորյանի համակուրսեցին էր, ում հետ սովորել է նաև 2013 թ. հունիսի 3-ին ռազմական ինստիտուտում հրազենային վնասվածքի հետևանքով սպանված կուրսանտ Սիփան Մովսիսյանը:

Լեյտենանտ Կարեն Արարատի Գալստյանը հետմահու պարգևատրվել է “Արիության համար» մեդալով, իսկ նույն զորամասի շարքային Արտակ Վաղարշակի Սարգսյանը՝ “Մարտական ծառայություն» մեդալով[90]:

Ինչպես հայտնել է ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը իր ֆեյսբուքյան էջում՝ 2015 թվականի հունվարի 23-ի ընթացքում ՀՀ և ԼՂ ողջ սահմանի տարբեր հատվածներում ադրբեջանական զինված ուժերը շարունակել են իրականացնել դիվերսիաներ և հարձակումներ[91]:

---

[87] http://www.azatutyun.am/content/article/26809108.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook
[88] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=325
[89] http://www.yerkir.am/am/news/79179.htm
[90] http://ankakh.com/article/10799/%E2%80%8Bsyerj-sargsyane-hyetmahu-pargyevatryel-e-yerku-zintsarrayvoghnyerin
[91] http://lurer.com/?p=170629

7. Արտակ Աղեկյան
8. Հայկ Բարոյան

ԼՂ ՊԲ հաղորդմամբ՝ 2015 թվականի փետրվարի 28-ին ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետերի ուղղությամբ ձեռնարկվել է դիվերսիոն հետախուզական ներթափանցման փորձ[92], որի ժամանակ զոհվել են զինծառայողներ՝ փոխգնդապետ Արտակ Մեղրակի Աղեկյանը (ծնված 1979 թ.) և նրա վարորդ, շարքային Հայկ Գրիգորի Բարոյանը (ծնված 1995 թ.) :

ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 13-րդ կետերով[93]:

Ըստ news.am-ի տեղեկությունների՝ դեպքը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ հայ 5 զինծառայողներ մեքենայով գնալիս են եղել դիրքեր: Անտառի մեջ ադրբեջանական դիվերսիոն խումբը կրակ է բացել նրանց վրա: Փոխհրաձգություն է սկսվել, հրամանատարն ու իր վարորդը զոհվել են: Մեկ հոգի թեթև վիրավորվել է ոտքից: Մեքենայում գտնվող մյուս երկու զինծառայողները չեն տուժել[94]:

Արտակ Աղեկյանի բարեկամներից մեկի խոսքերով փոխգնդապետը զոհվել է՝ փորձելով փրկել 20-ամյա Հայկ Բարոյանի կյանքը, ինչը նրան չի հաջողվել[95]:

Արտակ Աղեկյանը Տաշիր քաղաքից էր, ամուսնացած էր, ուներ երկու երեխա՝ աղջիկ և տղա: Նա զինված ուժերում էր 1996 թ.-ից:

Մյուս զոհված զինծառայողը՝ ժամկետային Հայկ Բարոյանը, զորակոչվել էր 2013 թ. աշնանը, նա Լոռու մարզի Սարչապետ գյուղից էր:

Զինծառայողներ Արտակ Աղեկյանը և Հայկ Բարոյանը հետմահու պարգևատրվել են “Մարտական ծառայություն» մեդալով:

---

[92] http://armlur.am/314555/
[93] http://armlur.am/314557/
[94] http://news.am/arm/news/254998.html
[95] http://news.am/arm/news/255123.html
[95] http://galatv.am/hy/news/4-2/ , http://news.am/arm/news/258908.html

9. Հակոբ Խաչատրյան
10. Էդուարդ Հայրապետյան
11. Արշակ Հարությունյան
12. Սամվել Հակոբյան

ԼՂ ՊԲ տեղեկությունների համաձայն՝ 2015 թվականի մարտի 19-ին ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատի ուժեղացված խումբը հարձակում է ձեռնարկել հյուսիսային (Գյուլիստանի) ուղղությամբ տեղակայված դիրքերի վրա:

Ադրբեջանական ուժերին դիմագրավելու ժամանակ զոհվել են ՊԲ զինծառայողներ Հակոբ Գագիկի Խաչատրյանը (ծնված 1996 թ.), Էդուարդ Գագիկի Հայրապետյանը (ծնված 1995 թ.) և Արշակ Կարենի Հարությունյանը (ծնված 1995 թ.): Իսկ վիրավորում ստացած 4 զինծառայողներից 1-ը՝ Սամվել Սասունի Հակոբյանը (ծնված 1995թ.) 2015 թվականի մարտի 26-ին մահացել է Ստեփանակերտի կենտրոնական զինվորական հոսպիտալում[96]*:* Վերջինս վիրավորում էր ստացել գլխի շրջանում:

Հակոբ Խաչատրյանի, Էդուարդ Հայրապետյանի և Արշակ Հարությունյանի մահվան փաստերի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ, 13-րդ կետերով, 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ, 13-րդ կետերով [97]:

ԼՂ ՊԲ տեղեկացմամբ՝ ադրբեջանական ուժերը մարտադաշտում թողել են տարբեր տեսակի զենք ու զինամթերք, այդ թվում «АК» տիպի ինքնաձիգ՝ իսրայելական արտադրության գիշերային տեսանելիության նշանոցով և խլացուցիչով, սակրավորի հատուկ հանդերձանք, 4 հատ "Myxa" տիպի նռնականետ, հարձակողական նռնակներ, փամփուշտի պահունակներ, մեծ քանակության օգտագործված ներարկիչներ, որոնք ամենայն հավանականությամբ կիրառվել են վիրավորներին ցավազրկելու նպատակով[98]:

Ըստ times.am-ի տեղեկությունների՝ ադրբեջանական հատուկ ջոկատայինների 20-25 հոգանոց խումբը դեպքին նախորդող գիշերը թաքստոց է մտել և մարտի 19-ի վաղ առավոտյան անակնկալ հարձակվել հայկական դիրքերի վրա: Նրանք նահանջել

[96] http://news.am/arm/news/257872.html
[97] http://news.am/arm/news/257849.html
[98] http://nkrmil.am/main/am/newsMore890.html

են այն ժամանակ, երբ ՊԲ զինվորներին օգնության է հասել հետախուզական ջոկատը: Ըստ որոշ տեղեկությունների, ադրբեջանական կողմն այդ մարտում կորցրել է առնվազն 14 զինծառայող[99]:

Հարձակման հետևանքով վիրավորված սպա, դասակի հրամանատար Սարգիս Գաբրիելյանը news.am-ին պատմել է, որ իրենք հանկարծակիի են եկել, երբ իրենց ուղղությամբ նռնակ է նետվել: Սակայն իրենք կարողացել են տիրապետել իրավիճակին, նույնիսկ վիրավորված վիճակում շարունակել են կռվել մինչև լրացուցիչ ուժերի օգնության հասնելը: Ըստ նրա՝ օժանդակող ուժերը ժամանել են 5 րոպե անց:

Սարգիսը պատմել է, որ մարտական հենակետում իրենք 11 հոգով են եղել: Երբ ադրբեջանցի դիվերսանտները հարձակվել են նրանց վրա, երեք հոգի դուրս են եկել և թեթև կրակահերթ բացել: Մյուսները հետ են քաշվել ու դիրքավորվել: Սարգսի խոսքերով՝ դիվերսանտները հիմնականում նռնակներով են կռվել և այնքան էլ շատ չեն կրակել: 10-15 նռնակ է նետվել ՊԲ զինծառայողների ուղղությամբ[100]:

Զոհված Հակոբ Խաչատրյանը ԼՂ Քաշաթաղի շրջանի Աղաձոր գյուղից էր, Արշակ Հարությունյանը՝ Երևանի Էրեբունի վարչական շրջանից, Էդուարդ Հայրապետյանը՝ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքից, իսկ Սամվել Հակոբյանը՝ Արարատի մարզի Արևաբույր համայնքից: Վերջինս զորացրվելու էր մի քանի ամսից:

Արշակ Հարությունյանի ընտանիքի մտերիմներից մեկի խոսքերով՝ Արշակը մի քանի ամիս առաջ արձակուրդ էր ստացել «թուրք խփելու» համար: Նաև պատվոգիր և դրամական պարգևատրում էր ստացել[101]:

Հակոբ Խաչատրյանը, Էդուարդ Հայրապետյանը, Արշակ Հարությունյանը և Սամվել Հակոբյանը հետմահու պարգևատրվել են «Արիության համար» մեդալով[102]:

---

[99] http://times.am/?p=117820&l=am%2F
[100] http://news.am/arm/news/258857.html
[101] http://news.am/arm/news/257908.html
[102] http://news.am/arm/news/257910.html , http://www.ilur.am/news/view/43041.html

13. Մարատ Խաչանյան (պայմանագրային զինծառայող)
14. Արման Ստեփանյան (պայմանագրային զինծառայող)

Ինչպես տեղեկացրել է ԼՂ ՊԲ մամուլի ծառայությունը՝ աԱդրբեջանական ԶՈՒ կողմից ձեռնարկված գործողության արդյունքում 2015 թվականի սեպտեմբերի 4-ին մարտական խնդիր կատարելու ժամանակ զոհվել են ՊԲ պայմանագրային զինծառայողներ Մարատ Ռուդոլֆի Խաչանյանը և Արման Վաչագանի Ստեփանյանը[103]:

Մարատ Խաչանյանը 44 տարեկան էր, իսկ Արման Ստեփանյանը՝ 34: SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ երկու զինծառայողներն էլ Արցախից էին՝ Ստեփանակերտ քաղաքից[104]:

15. Էրիկ Գրիգորյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության հայտնած տեղեկությունների համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 4-ին դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարևելյան (Թալիշի) ուղղությամբ ադրբեջանական կողմը ձեռնարկել է հետախուզադիվերսիոն ներթափանցման փորձ, որի հետևանքով մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ զինծառայող 1995թ-ին ծնված Էրիկ Էդիկի Գրիգորյանը[105]:

ՀՀ քննչական կոմիտեում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 13-րդ կետերով՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական շարժառիթներով, կազմակերպված խմբի կողմից, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն կատարելու հիմքով[106]:

Լրատվամիջոցներից մեկի տեղեկություններով՝ դեպքի պահին զինծառայողն իր ծառայողական պարտականությունները կատարում էր կացարանի դիմաց որպես արթուն հերթափոխ: Սակայն դիվերսիոն խմբին հաջողվել էր շրջանցել դիրքը և

---

[103] http://nkrmil.am/main/am/newsMore1012.html , http://www.tert.am/am/news/2015/09/04/nkr/1782001 , http://hayeli.am/article/748048
[104] http://www.slaq.am/arm/news/1046600/ , http://hayeli.am/article/748048
[105] http://news.am/arm/news/299940.html
[106] http://investigative.am/news/view/erik-grigoryan.html

թիկունքից մոտենալ կացարանին: Էրիկը նկատել էր և հասցրել գոռալով տեղեկացնել համածառայակիցներին, բայց այդ պահին խոցվել է: Էրիկի ձայնից «վեր թռած» համածառայակիցները մարտի են բռնվել գրեթե կացարան ներխուժած ադրբեջանական խմբի դեմ՝ հետ մղելով նրանց:[107]

Նախկինում զինծառայողը պարգևատրվել էր ՀՀ ՊՆ «Ծովակալ Իսակով» մեդալով: ԼՂ ՊԲ 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, գնդապետ Վրեժ Իշխանյանի հավաստմամբ՝ Էրիկ Գրիգորյանը մի անգամ ադրբեջանական կողմի գնդակոծությունից հրազենային վիրավորում էր ստացել: Ապաքինվելուց հետո խնդրել էր իրեն տանել առաջին գիծ և վերադարձել մարտական հերթապահության[108]:

ԼՂ նախագահի Բակո Սահակյանի հրամանագրով Էրիկ Գրիգորյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Նա Սյունիքի մարզի Շաքի գյուղից էր: Շաքիի գյուղապետի խոսքերով՝ զինծառայողը հենց դեպքի օրը՝ դեկտեմբերի 4-ին պիտի զորացրվեր:

16. Աղասի Գրիգորյան
17. Ռուբեն Ալեքսանյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տարածած տեղեկությունների համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 17-ի և լույս 18-ի գիշերը ադրբեջանական կողմը ԼՂ հարավային, արևելյան, հյուսիսարևելյան և հյուսիսային ուղղություններով իրականացրել է դիվերսիոն հետախուզական գործողություններ: Չնայած վերոնշյալ բոլոր ուղղություններում հայ դիրքապահները ժամանակին հավաստանշել են ադրբեջանական հատուկ ջոկատայինների առաջխաղացումը և անցել պաշտպանական մարտերի, այնուամենայնիվ ծավալված մերձամարտերի ընթացքում զոհվել են 1996 թ-ին ծնված ՊԲ զինծառայողներ Աղասի Արսենի Գրիգորյանը և Ռուբեն Ռոբերտի Ալեքսանյանը[109]:

Զինծառայողների ապանության փաստի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի երկրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական

---

[107] http://vorotan.am/20-ամյա-զոհված-զինվորին-ամփոփեցին-սիսիա/
[108] http://www.syuniacyerkir.am/news_view.php?post_id=15095
[109] http://www.a1plus.am/1425486.htm

օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:

18. Սիդար/ Ֆիդար Ալոյան

2015 թվականի դեկտեմբերի 18-ի գիշերը ադրբեջանական կողմը կրկին ձեռնարկել է դիվերսիոն հետախուզական ներթափանցման փորձ ԼՂ և Ադրբեջանի շփման գծի տարբեր հատվածներում: ՊԲ առաջապահ ստորաբաժանումներին հաջողվել է պաշտպանության անցելով դիվերսիոն խմբին հետ մղել իրենց ելման դիրքեր: Նրանք եւս կրել եմ կորուստներ (առնվազն 2 զոհ և վիրավորներ): *Ծավալված մարտերում մահացել է ՊԲ զինծառայող Ֆիդար Իգորի Ալոյանը (ծնվ. 1996 թ.)*[110]*:*

Դեպքի կապակցությամբ ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերի հատկանիշներով՝ սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով[111]:

Զինծառայողը Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքից էր: [112]

Բ. Դժբախտ պատահար

Ավտովթար/ Մեքենա վարելու կամ շահագործելու կանոնների խախտում

1. **Արթուր Վարդևանյան (մայոր)**

2015 թվականի հունվարի 17-ի երեկոյան Քարվաճառի տարածում ավտովթարի են ենթարկվել տեղի զորամասերից մեկի սպաներ՝ մայոր Կարեն Սիմոնյանը, ավագ լեյտենանտ Լավրենտ Հակոբյանը և մայոր Արթուր Վարդևանյանը: Վթարի հետևանքով Արթուր Վարդևանյանը տեղում մահացել է, մյուս մայորը՝ Կարեն

[110] http://civilnet.am/2015/12/19/armenian-soldier-killed-in-karabakh/#.VnUQlbaLTcc
[111] http://investigative.am/news/view/sidar-aloyan.html
[112] http://forrights.am/?ln=1&id_=10&page_id=399

Սիմոնյանը, տեղափոխվել է Մուրացանի հոսպիտալ, իսկ Լավրենտ Հակոբյանը գտնվում է զորամասի բժշկական կետում[113]*:*

ՀՀ ՊՆ մամուլի խոսնակը news.am-ի[114] թղթակցի հետ զրույցում հաստատել է տեղեկությունը՝ նշելով, որ մեքենան Քարվաճառի ոլորաններից մեկում գլորվել է ձորը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացել է, որ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

2. Արտյոմ Թորոսյան

2015 թվականի ապրիլի 17-ին ժամը 17:00-ի սահմաններում, ժամկետային զինծառայողներին տեղափոխող «Ուրալ» մակնիշի ավտոմեքենան Սպիտակ-Երևան ավտոճանապարհի 19-րդ կիլոմետրին դուրս է եկել երթևեկելի հատվածից և շրջվել հարակից ձորակը: Վթարի հետևանքով ստացած վնասվածքներից մահացել է Սիսիանից զորակոչված ժամկետային զինծառայող, շարքային Արտյոմ Գերասիմի Թորոսյանը (ծնված 1995 թ.)[115]*:*

Մեքենայի 9 ուղևորներ՝ ժամկետային զինծառայողներ Նարեկ Ավագյանը, Մարտիրոս Քոչարյանը, Մհեր Շավեշյանը, Ռաֆայել Օհանյանը, Հարություն Բուդուլյանը, Բորիս Նիկոյանը, Արման Օվազյանը, Հայկ Գրիգորյանը և Արման Սարգսյանը տեղափոխվել են Սպիտակի հիվանդանոց: Նրանցից 3-ը ծայրահեղ ծանր վիճակով, մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Սպիտակի հիվանդանոց: Ոմանց շտապ տեղափոխել են Երևանի Մուրացանի անվան զինվորական հոսպիտալ[116]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով[117]:

Ըստ news.am[118]-ի՝ Վանաձորում ծառայող զինվորները գնացել էին Արմավիրի մարզի ուսումնական կենտրոն՝ զորավարժությունների: Դեպքը պատահել է զորամաս վերադառնալու ճանապարհին:

---

[113] http://ksherq.blogspot.com/2015/01/1-2.html
[114] http://news.am/arm/news/248341.html
[115] http://mil.am/1429286587
[116] http://shamshyan.com/hy/article/2015/04/18/50028/, http://galatv.am/hy/news/105889
[117] http://yerevannews.am/?p=37874&l=am/nor+manramasner+zinvornerin+texapoxoxvo%D6%82ral-i+vtaric+

Մահացած Արտյոմ Թորոսյանը, ով գտնվել է մեքենայի ղեկին, Սյունիքի մարզի Սառնակունք գյուղից էր: Սառնակունքի գյուղապետ Մանուչար Մկրտչյանի փոխանցմամբ[119]՝ Արտյոմը պետք է զորացրվեր 2015 թվականի դեկտեմբերին: Ըստ նրա՝ Արտյոմը վթարի նախորդ օրը հեռախոսազրույց է ունեցել ընտանիքի անդամների հետ և ասել, որ չանհանգստանան, քանի որ իրենք բարեհաջող հասել են Հոկտեմբերյան և զորամասում են:[120]

Ինչ վերաբերում է վիրավորում ստացած զինծառայողների առողջական վիճակին, ապա դեպքի հաջորդ օրը՝ ապրիլի 18-ին, ՊՆ ԿԿԶՀ բուժծառայության պետ, մայոր Արտաշես Խաչատրյանը լրագրողներին փոխանցել է, որ 3 ժամկետային զինծառայողներից մեկի վիճակը ծայրահեղ ծանր է, երկուսինը՝ ծանր կայուն, վեցինը՝ միջին ծանրության[121]: Իսկ մի քանի օր անց՝ ապրիլի 22-ին, հոսպիտալի պետ Արամ Ասատուրյանը հայտնել է[122], որ բաժանմունքներում գտնվող զինծառայողների վիճակը լավ է, և որ մեկ շաբաթից նրանք դուրս կգրվեն:Միևնույն ժամանակ նա հայտնել է, որ զինծառայողներից մեկի՝ Մհեր Շավեշյանի մոտ դրական փոփոխություն չի գրանցվել: Մհեր Շավեշյանի առողջական վիճակի մասին այլ տեղեկություններ չկան:

3. Սիրակ Գևորգյան

2015 թվականի հունիսի 7-ին, ըստ shamshyan.com[123] լրատվական կայքի Վայոց Ձորի մարզում Զեղեա գյուղից դեպի Հորադիս գյուղատեղի տանող դաշտամիջյան ճանապարհին տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով վիրավորվել են ՀՀ ՊՆ Վայքի զինկոմիսարիատի զորահավաքային բաժանմունքի սպա 51-ամյա Հրայր Գևորգյանը և Վայքի վարժարանի զինղեկ 48-ամյա Միսակ Մարգարյանը: Իսկ նրանց հետ մեքենայում գտնվող 58-ամյա Սիրակ Գևորգյանը մահացել է հիվանդանոցում:

Քանի որ դեպքի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել, ապա դեռևս մնում է չպարզաբանված, թե արդյոք մահացածը ևս զինծառայող էր, թե ոչ:

---

[118] http://news.am/arm/news/263123.html
[119] http://news.am/arm/news/262653.html
[120] http://shamshyan.com/hy/article/2015/04/18/50049/
[121] http://news.am/arm/news/262768.html
[122] http://news.am/arm/news/263123.html
[123] http://shamshyan.com/hy/article/2015/06/08/55645/

4. Սասուն Զիրոյան,
5. Մարատ Թադևոսյան

2015 թվականի հուլիսի 5-ին՝ ժամը 01:55-ի սահմաններում, Բերձոր-Ստեփանակերտ ավտոմայրուղու 28-րդ կմ-ում տեղի է ունեցել ճանապարհատրասնպորտային պատահար, ինչի արդյունքում մահացել են ՊԲ զինծառայողներ Սասուն Սամվելի Զիրոյանը (ծնված 1989թ.) և Մարատ Գրիգորիի Թադևոսյանը (ծնված 1987թ.), իսկ Ալիկ Տիգրանի Պետրոսյանը և Սարգիս Արարատի Գևորգյանը ստացել են մարմնական վնասվածքներ[124]*:* Բոլորը Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղի զորամասի սպաներ են:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացել է, որ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

6. Գալուստ Վերդոյան (ՀՀ ՌՈ աշխատակից)

2015 թվականի հուլիսի 22-ին, ՀՀ ՏԿԱԻՆ-ում տեղեկություն է ստացվել, որ Աշտարակ-Գյումրի ավտոճանապարհին տեղի է ունեցել ավտովթար. բախվել են «ԶԻԼ-130» մակնիշի (վարորդ՝ 26-ամյա Է. Մ.) 94 PP 004 եւ «ՎԱԶ 2107» մակնիշի (վարորդ՝ 27-ամյա Գալուստ Վերդոյան) 34 QL 135 համարանիշերի ավտոմեքենաները: Գալուստ Վերդոյանը տեղում մահացել է:

Shamshyan.com-ի փոխանցմամբ, մահացածը ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության աշխատակից էր:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ)[125]:

---

[124] http://nkrmil.am/main/am/newsMore969.html, http://news.am/arm/news/275469.html
[125] http://shamshyan.com/hy/article/2015/07/22/60112/

7. Արսեն Հունանյան (սպա)

Shamshyan.com-ի տեղեկություններով՝ 2015 թ. օգոստոսի 8-ին Սյունիքի մարզում՝ Երևան-Մեղրի ավտոճանապարհին (Սառնակունք-Անգեղակոթ), Opel մակնիշի ավտոմեքենայով մեկ այլ մեքենայի բախվելով՝ վթարի են ենթարկվել ՀՀ ՊՆ N զորամասի հրետանու պետ Վահագն Խաչատրյանը (ծնված 1980) և նույն զորամասի հրետանու շտաբի պետ Արսեն Հունանյանը (ծնված 1984 թ.): Արսեն Հունանյանը, ում մոտ առկա էր գանգի հիմնի կոտրվածք, տեղափոխվել է Սիսիանի բժշկական կենտրոն և 30 րոպե գտնվելով կոմայի մեջ ու գիտակցության չգալով՝ մահացել:

Ֆոտոլրագրող Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վարորդ Վ. Խաչատրյանը ծառայում էր ՀՀ ՊՆ N զորամասում՝ որպես հրետանու պետ, իսկ մահացած Ա. Հունանյանը՝ նույն զորամասում հրետանու շտաբի պետ էր: Նա Շիրակի մարզի Մարալիկ քաղաքից էր[126]:

Նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի քննչական բաժնում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):

2015 թվականի դեկտեմբերի 20-ին news.am լրատվական կայքի հաղորդմամբ՝ ըստ դատական տեղեկատվական համակարգի, գործով նախաքննությունն ավարտվել է և գործն ուղարկվել դատարան[127]:

Ըստ մեղադրական եզրակացության՝ զինծառայող, 35-ամյա Վահագն Խաչատրյանը իր վարած ավտոմեքենայի ղեկին քնել է և բախվել մեկ այլ մեքենայի, ինչ հետևանքով անզգուշությամբ առաջացրել է իր ավտոմեքենայի ուղևոր Արսեն Հունանյանի մահը:

---

[126] http://www.hartak.am/arm/index.php?id=46243 , http://fnews.am/?p=2510808&l=am%2Fsyuniqum+vtari+entarkvacnery+zinvorakaner+en+nrancic+meky+mahacel+e

[127] http://news.am/arm/news/302946.html

Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով: Խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

Գործը քննվում է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում:

8. Գրիգոր Սահակյան (մայոր)
9. Գևորգ Վարդանյան (ենթասպա)
10. Տարոն Մեղրակյան (կապիտան)
11. Սևակ Գասպարյան (մայոր)

Shamshyan.com-ի տվյալներով՝ 2015 թվականի սեպտեմբերի 5-ին, Վարդենիս-Մարտունի ավտոճանապարհի 12-րդ կմ հատվածում՝ Ծովակ գյուղի վարչական տարածքում, տեղի է ունեցել ավտովթար: «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց և բախվել հաստաբուն ծառին: Հրշեջ-փրկարարները մեծ դժվարությամբ ավտոմեքենայից դուրս են բերել 29-ամյա Տարոն Մեղրակյանին (կապիտան), 38-ամյա Գրիգոր Սահակյանին (մայոր) և 38-ամյա Գևորգ Վարդանյանին (ենթասպա) և տեղափոխել նրանց Վարդենիսի զինվորական կայազորային հոսպիտալ: Ճանապարհին Տարոն Մեղրակյանը՝ գիտակցության չգալով՝ մահացել է: Իսկ Գրիգոր Սահակյանը և Գևորգ Վարդանյանը մահացել են հիվանդանոցում:

Ըստ Գ. Շամշյանի տեղեկությունների՝ մահացածներն ու վիրավորները ՀՀ ՊՆ ծառայողներ են[128]: Տարոն Մեղրակյանն աշխատում էր որպես ավտոծառայության պետ: Գևորգ Վարդանյանը ծառայում էր որպես ճաշարանի պետ: Գրիգոր Սահակյանը նույն զորամասի շարային մասի պետ էր[129]:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով: Քրեական գործի նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի և տրանսպորտային միջոցի զննություն, նշանակվել է դիակների դատաբժշկական փորձաքննություն[130]:

---

[128] http://shamshyan.com/hy/article/2015/09/06/64024/
[129] http://lakmoes.am/iravunq/491-2015-09-27-18-08-25
[130] http://yn.am/?military&p=48204&l=am

Դեպքից մեկ շաբաթ անց՝ սեպտեմբերի 11-ին, ինչպես «Ռազմինֆո» լրատվական կայքը[131] տեղեկացել է ՀՀ ՊՆ տեղեկատվության վարչությունից, Էրեբունի բժշկական կենտրոնում մահացել է նաև ավտովթարի հետևանքով մարմնական վնասվածքներ ստացած, 1985 թվականին ծնված մայոր Սևակ Տիգրանի Գասպարյանը:

12. Սուրեն Դավթյան

Shamshyan.com-ի տվյալներով՝ 2015 թվականի սեպտեմբերի 21-ին ոստիկանության Սիսիանի բաժնի աշխատակիցները ճանապարհային ոստիկանության ծառայողների հետ որոնողական աշխատանքների արդյունքում Սիսիանի տարածաշրջանի «Բոչկի ձոր» կոչվող հատվածում հայտնաբերել են դեռևս սեպտեմբերի 20-ից որպես անհայտ կորած, ոստիկանության կողմից որոնվող Սիսիան քաղաքի բնակիչ, 26-ամյա Սուրեն Դավթյանի դին և նրա վարած Volkswagen Golf մակնիշի 34 DQ 538 համարանիշի ավտոմեքենան, որը դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց և մոտ 80-100 մետր շրջվելով հայտնվել ձորում: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ մահացածը ծառայում էր ՀՀ ՊՆ զորամասում՝ որպես կառավարման դասակի հրամանատար[132]:

Սուրեն Դավթյանի հայրը նախորդ օրն ահազանգել էր ոստիկանություն և հայտնել, որ 1 օր առաջ իր որդին դուրս է եկել տանից և հարազատները նրանից տեղեկություններ չունեն:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ):

13. Բաբկեն Սարուխանյան (պայմանագրային զինծառայող)

2015 թվականի հոկտեմբերի 14-ին «Արմենպրես» գործակալությունը հղում անելով ՀՀ ՊՆ լրատվության վարչությանը՝ հայտնել է, որ ՀՀ ՊՆ ԶԻԼ-131 բեռնատար

---

[131] http://razm.info/71636

[132] http://shamshyan.com/hy/article/2015/09/21/65446/

մեքենան Կոթի գյուղից Կողբի զորամաս գնալու ճանապարհին գլորվել է ձորը, ինչի հետևանքով մահացել է մեքենայի ուղևոր պայմանագրային զինծառայող 50-ամյա Բաբկեն Սարուխանյանը: Իսկ 48-ամյա սպա Արտակ Անդրեասյանը ստացել է թեթև մարմնական վնասվածքներ և տեղափոխվել հիվանդանոց[133]:

Դեպքի առթիվ ՀՀ Քննչական կոմիտեում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելու դեպքի առթիվ, որն անզգուշությամբ առաջացրել է պայմանագրային զինծառայողի մահ)[134]:

News.am լրատվական կայքը, հղում անելով Կոթի գյուղի գյուղապետ Ֆելիքս Մելիքյանին, հայտնել է, որ Բաբկեն Սարուխանյանը մոտ 8 տարի ծառայում էր զինված ուժերում: Ուներ 3 զավակ[135]:

14. Հարություն Հակոբյան (պայմանագրային զինծառայող)

2015 թվականի հոկտեմբերի 24-ին լրատվամիջոցները տեղեկություններ տարածեցին այն մասին, որ Վարդենիս-Մարտունի ավտոճանապարհին տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով տուժել են պայմանագրային զինծառայողներ 35-ամյա Վարդան Սիմոնյանը, 37-ամյա Գագիկ Հովհաննիսյանը և 38-ամյա Հարություն Հակոբյանը, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հոսպիտալ: Սակայն փակ-գանգուղեղային տրավմայով հոսպիտալ տեղափոխված Հարություն Հակոբյանը դեպքից գրեթե մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի 30-ին, Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում մահացել է[136]:

Ըստ Կենտրոնական կլինիկական հոսպիտալի պետ Արամ Ասատուրյանի, զինծառայողի մոտ արձանագրվել էր կլինիկական մահից, ինչից հետո էլ վերջինս գիտակցության չգալով՝ մահացել է[137]:

15. Խաչիկ Պողոսյան

News.am լրատվական կայքի տարածած հաղորդագրության համաձայն՝ 2015 թվականի նոյեմբերի 6-ին, Տաշիր-Մեծավան ավտոճանապարհին, Toyota Prado

---

133 http://razm.info/74428 , http://armcrimenews.com/տավուշում-պն-մեքենան-գլորվել-է-ձորը-պա/
134 http://civilnet.am/2015/10/15/car-accident-soldier-death/#.ViCfguztmko
135 http://news.am/arm/news/290906.html
136 http://news.am/arm/news/293628.html
137 http://armtimes.com/hy/read/72962

մակնիշի 59 NP 999 համարանիշի ավտոմեքենայի վարորդը, կորցնելով կառավարումը, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց և ընկել ջրատարը՝ բախվելով էլեկտրասյուներին:

Վթարի հետևանքով 2 մարդ տեղում մահացել են, ևս 2 անձի մարմնական բազմաթիվ վնասվածքներով տեղափոխել են հիվանդանոց: Զոհված երկու երիտասարդներից մեկը մեքենայի վարորդ պարտադիր ժամկետային զինծառայող 1997 թ-ին ծնված Խաչիկ Պողոսյանն էր:

Ըստ կազմակերպության կողմից ՀՀ ՊՆ ուղարկված հարցման պատասխանի՝ զինծառայողի մահվան դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն:

Պողոսյանը մեկ տարվա զինծառայող էր, ծառայում էր ԼՂ զորամասերից մեկում, տուն էր եկել արձակուրդի և դեպքի հաջորդ օրը պետք է վերադառնար ծառայության[138]:

16. Վոլոդյա Մարտիրոսյան (պայմանագրային զինծառայող)
17. Արամ Ասլանյան (պայմանագրային զինծառայող)

2015 թվականի նոյեմբերի 15-ին Երևան-Մեղրի ավտոճանապարհին Nissan Teana մակնիշի ավտոմեքենան ընկել է Մեղրի գետը: Ավտոմեքենայից դուրս են բերել 24-ամյա Վոլոդյա Մարտիրոսյանի ու 30-ամյա Արամ Ասլանյանի դիերը:

Փաստի առթիվ քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր. օր.-ի 242 հոդվածի 3-րդ մասի (ճանապարահատրանսպորտային պատահար, որն անզգուշությամբ առաջացրել է 2 և ավելի մարդու մահ) հատկանիշներով[139]:

Սյունիքի մարզի Շվանիձոր համայնքի ղեկավարը, ով վթարից մահացած Վոլոդյա Մարտիրոսյանի համագյուղացին է, news.am-ի թղթակցին հայտնել է, որ վերջինս վթարի է ենթարկվել ծառայակից ընկերոջը՝ Արամ Ասլանյանին, Մեղրի տանելու ճանապարհին: Նա գնացել էր Ագարակ՝ մեքենայի գազը լիցքավորելու, ճանապարհին հանդիպել է ծառայակցին և որոշել նրան տանել Մեղրի: Դեպքը տեղի է ունեցել հենց Ագարակ-Մեղրի ճանապարհին:

---

[138] http://news.am/arm/news/294941.html
[139] http://shamshyan.com/hy/article/2015/11/15/70415/

Վոլոդյա Մարտիրոսյանը ծառայում էր Սյունիքի մարզի զորամասերից մեկում[140]:

18. Տարոն Կարապետյան

Համաձայն news.am լրատվական կայքի՝ ՀՀ Տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարություն 2015 թվականի դեկտեմբերի 20-ին՝ ժամը 00.21-ին, ահազանգ է ստացվել, որ Վայոց ձորի մարզի Ազատեկ գյուղի մոտակայքում տեղի է ունեցել ավտովթար:

Shamshyan.com-ի փոխանցմամբ՝ Ազատեկ-Վայք ավտոճանապարհի 6-րդ կմ-ում Վազ 2108 մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեկելի գոտուց, բախվել ապառաժ քարին, գլխիվայր շրջվել և մոտ 100 մետր սահելով՝ առաջ ընթացել, ինչ հետևանքով էլ ստացած մարմնական վնասվածքներից մեքենայի վարորդ 1992 թ-ին ծնված *Տարոն Կարապետյանը* (մահացել է:

Ըստ լրատվամիջոցների տեղեկությունների՝ մահացածն աշխատում էր ՀՀ ՊՆ N զորամասում՝ որպես հետախույզ[141]:

Դեպքի մասին պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել:

19. Սպարտակ Գալստյան (պայմանագրային զինծառայող)

ՀՀ քննչական կոմիտեի տեղեկացմամբ 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Զորամուտ-Տաշիր ավտոճանապարհի 5-րդ կիլոմետրի հատվածում ՊՆ զորամասերից մեկի պայմանագրային զինծառայող Սպարտակ Գալստյանի վարած ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի գոտուց, բախվել ճանապարհի կողային բետոնե սալիկներին և շրջվել: Ավտովթարի հետևանքով վարորդը և 15-ամյա ուղևորն ստացած մարմնական վնասվածքներից տեղում մահացել են:

Shamshyan.com-ի տվյալներով՝ մահացածներն ավտոմեքենայից դուրս են շպրտվել և նրանց դիերը ճանապարհի տարբեր հատվածներում հայտնաբերել են քաղաքացիները:

---

[140] http://news.am/arm/news/296432.html
[141] http://news.am/arm/news/303075.html

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով (ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ)[142]:

Գ. Դժբախտ պատահար /դեռևս չճշտված հանգամանքներ/

1. Արթուր Առաքելյան

2014 թվականի ապրիլի 10-ին ԼՂ ՊՆ մամուլի ծառայությունից տեղեկացրել են, որ ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում տեղի է ունեցել դժբախտ պատահար, որի արդյունքում մահացել է զինծառայող, Արթուր Անդրանիկի Առաքելյանը (ծնված 1996թ.)[143]:

Նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի մամուլի ծառայությունը հաղորդագրություն[144] է տարածել՝ ներկայացնելով դեպքի մանրամասները և նշելով, որ 2015 թվականի ապրիլի 5-ին ժամը 17:45-ին ժամկետային զինծառայող, շարքային Արթուր Առաքելյանը բաց գանգուղեղային վնասվածք, հիպովոլեմիկ շոկ, կոմա ախտորոշմամբ տեղափոխվել է Ստեփանակերտի զինվորական հոսպիտալ և մահացել 2015 թվականի ապրիլի 9-ին ժամը 19:40-ի սահմաններում:

Հաղորդագրությունում նշվում է նաև, որ զինծառայողը վնասվածքն ստացել էր դժբախտ պատահարի արդյունքում՝ զորամասում ֆուտբոլ խաղալու ժամանակ, ձեռքերով դարպասաձողից կախվելիս վայր ընկնելու և դարպասը գլխին ընկնելու հետևանքով:

Դեպքի մասին այլ տեղեկություններ չեն հայտնվել:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հարուցված քրեական գործի վերաբերյալ ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունից տեղեկացվել է, որ Արթուր Առաքելյանի մահվան դեպքի առթիվ նախապատրաստվել են նյութեր, որոնցով հետագայում որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին

---

[142] http://shamshyan.com/hy/article/2015/12/22/73430/
[143] http://nkrmil.am/main/am/newsMore905.html
[144] http://investigative.am/news/view/patahar-zinvor.html

մասի 1-ին կետով ([...] *քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, եթե բացակայում է հանցագործության դեպքը*[145]):

Անհասկանալի է այն հանգամանքը, թե արդյոք զինծառայողը տվյալ պահին կարող էր կատարել նման ֆիզիկական գործողություն եւ արդյոք ապահովված են եղել անվտանգության կանոնները:

Դ. Դժբախտ պատահար/ Նռնակի պայթյուն

1. Գոռ Օհանյան (ավագ լեյտենանտ)

ԼՂ ՊԲ մամուլի ծառայությունը 2015 թ. դեկտեմբերի 18-ին տեղեկատվություն է տարածել՝ հայտնելով, որ դեկտեմբերի 17-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում, դեռևս չպարզված հանգամանքներում, մահացու վիրավորում է ստացել ՊԲ պայմանագրային զինծառայող, 1992թ. ծնված Գոռ Վահանի Օհանյանը[146]:

Նույն օրը ՀՀ քննչական կոմիտեն հայտնել է, որ զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում՝ պարզելու ավագ լեյտենանտ Գոռ Օհանյանի մահվան հանգամանքները՝ հավելելով, որ ըստ նախնական տվյալների՝ N զորամասի պահպանության շրջանի մարտական դիրքում ավագ լեյտենանտ Գոռ Վահանի Օհանյանն իր կողմից նռնականետից կրակոց արձակելու հետևանքով ստացել է վիրավորում և զինվորական հոսպիտալ տեղափոխվելու ճանապարհին մահացել[147]:

Զինծառայողը Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղից էր[148]: Ավարտել էր Երեւանի Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը և 4 տարի ծառայում էր: Գոռը ընտանիքի ավագ որդին էր, ուներ իրենց փոքր քույր եւ եղբայր:

---

[145] http://www.arlis.am/documentview.aspx?docid=68011
[146] http://www.a1plus.am/1425486.html
[147] http://www.investigative.am/news/view/zincarayox-gor-hanyan.html
[148] http://news.am/arm/news/303096.html , http://news.am/arm/news/302710.html

Ե. Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում

1. Արման Օսիպյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տեղեկություններով՝ 2015 թվականի փետրվարի 14-ին ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Արման Սերգեյի Օսիպյանը (ծնված 1995թ.) [149]*:*

Դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ[150]:

Արման Օսիպյանը զորակոչվել էր ծառայության 2013 թ-ի աշնանը: Նա Գեղարքունիքի մարզի Արտանիշ գյուղից էր: Արտանիշի գյուղապետ Կարեն Շուշանյանի խոսքերով՝ ընտանիքում երկու եղբայր են. ավագը պայմանագրային զինծառայող է, իսկ Արմանը՝ ժամկետային էր: Ապրում են սոցիալապես անապահով պայմաններում[151]:

Արմանի եղբոր՝ Արամայիս Օսիպյանի խոսքերով, իրենք քրեական գործի նախաքննության մանրամասներին տևական ժամանակ տեղյակ չեն եղել: Դեպքից մեկ ու կես ամիս անց միայն նա ճանաչվել է տուժողի իրավահաջորդ: Գործով նախաքննությունը շարունակվում է, և որպես մեղադրյալ ներգրավված անձ չկա[152]:

---

[149] http://galatv.am/hy/news/artakan-henaketum-mahacel-e-1995t-cnvac-hay-zincarayogh/
[150] http://m.lragir.am/index/arm/1/right/view/110493
[151] http://news.am/arm/news/252663.html
[152] http://news.am/arm/news/260024.html

Զ. Սպանություն, Դիտավորյալ սպանություն

1. Հայկազ Բարսեղյան

ՀՀ ՊՆ մամուլի ծառայության կողմից տարածված հաղորդագրության համաձայն՝ 2015 թվականի հունվարի 29-ին Երևան քաղաքում տեղակայված ուսումնական զորամասի (Վ. Սարգսանի անվ. ռազմական ինստիտուտ) մարզահրապարակում հայտնաբերվել է նույն զորամասի զինծառայող, կուրսանտ Հայկազ Արկադիի Բարսեղյանը՝ պտտաձողի վրա պարանով կախված վիճակում[153]*:*

Կուրսանտի հայրը՝ Արկադի Բարսեղյանը, որն անձամբ ներկա է գտնվել դիահերձարանում, փաստել է, որ որդուն ծեծել են. նա տեսել է որդու մարմնի վրայի բռնության հետքերը՝ աջ թևին կտրող-ծակող գործիքով կատարված վնասվածք, կապտուկներ, վերքեր՝ այտի և շրթունքի վրա, ձեռքերը ամբողջությամբ արյան մեջ: Ըստ նախնական դատաբժշկական եզրակացության՝ մահը վրա է հասել մեխանիկական շնչահեղձության հետևանքով: Այսինքն՝ դաժան ծեծի ենթարկվելուց հետո Հայկազ Բարսեղյանը հնարավոր է մահացած չի եղել, և մահը վրա է հասել այն բանից հետո, երբ նրան կախել են[154]:

Մահացած զինվորի մոտ հայտնաբերվել է նաև գրություն, որում գրված է եղել՝ «Կներեք ամեն ինչի համար և նրա համար, որ այս քայլով խառնաշփոթ եմ ստեղծում»[155]:

Այնուամեայնիվ, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի խորհրդականը հայտնել է, որ չնայած գրության առկայությանը, դեպքի վայրում կատարված մի շարք գործողությունների արդյունքում բավարար հիմքեր են ձեռք բերվել, որոնք հավաստում են, որ տեղի ունեցածը ոչ թե ինքնասպանություն է, այլ սպանություն[156]:

2015 թ. հունվարի 30-ին դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝ սպանություն՝ մի խումբ անձանց

---

[153] http://www.mil.am/1422521294
[154] http://www.aravot.am/2015/02/03/538278/
[155] http://news.am/arm/news/250237.html
[156] http://galatv.am/hy/news/ryan-hetqery-haytnabervel-en-nnjasenyakum-ankoghnu-mej-a-razmakan-institutum-spanutyan-errord-depqn-e/

կամ կազմակերպված խմբի կողմից[157]: Զինծառայողին սպանելու կասկածանքով ձերբակալվել են Բարսեղյանի համածառայակիցներ, շարքայիններ Վաչե Սահակյանը, Մովսես Ազարյանը, Գնել Թևոսյանը և Նորիկ Սահակյանը: Նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը[158]:

ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային բաժնի քննիչի կողմից 2015 թ. փետրվարի 1-ին զինծառայողներին մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նրանք զորամասի 408 զորանոցում «փոխադարձ լրացնելով միմյանց գործողությունները», գիշերվա ժամը երեքի սահմաններում, նախնական համաձայնությամբ վնասել են զորանոցի մահճակալում անօգնական պառկած իրենց համածառայակցի արմնկափոսում տեղակայված երակը, ձմեռային բաճկոններից և կոշիկներից հանելով քուղերը՝ պատրաստել են պարան և քառատակ քուղերի պարանից նախապես պատրաստված օղակով պտտաձողից կախել ու կյանքից զրկել են Հայկազ Բարսեղյանին[159]:

Ըստ լրատվամիջոցների հրապարակումների՝ կասկածյալներից երկուսը բարձր պաշտոնյաների զավակներ են: Նրանցից մեկի հայրը ղեկավար պաշտոն է զբաղեցնում իրավապահ համակարգում (ԱԱԾ), իսկ մյուսի՝ Գնել Թևոսյանի հայրը, նույն Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի տնօրենի տեղակալ, գնդապետ Զարմիկ Մարկոսյանն է[160]: Ըստ որոշ տվյալների՝ Գնել Թևոսյանն իր ազգանունը փոխել է՝ իր և գնդապետի միջև ազգակցական կապն արտաքուստ քողարկելու համար[161]: Համաձայն «Հրապարակ» օրաթերթի տեղեկությունների՝ Գնել Թևոսյանը հանցագործության գլխավոր մեղավորն է և իշխել է մյուսներին[162]:

«Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ դեպքի օրը Հայկազ Բարսեղյանը Մովսես Ազարյանի, Նորիկ Սահակյանի, Գնել Թևոսյանի, Վաչե Սահակյանի հետ իրենց ծառայակից ընկերներից մեկի ծննդյան տարեդարձն են նշել ինստիտուտի ճաշարանում: Նրանք ալկոհոլ են օգտագործել, իսկ ավելի ուշ՝ Հայկազը տղաներից մեկին նկատողություն է արել աղմուկով հաց ուտելու համար, որն էլ «ճակատագրական» է դարձել նրա համար: Սկսվել է լեզվակռիվ, որը շարունակվել է

---

[157] http://civilnet.am/2015/01/29/soldiers-death-criminal-case/#.VMshI9KsW7x

[158] http://www.azatutyun.am/archive/news/latest/2031/2031.html?id=26821380, http://news.am/arm/news/250551.html

[159] http://www.aravot.am/2015/02/05/539298/

[160] http://azatamart.am/index.php/en/2014-09-17-11-19-21/item/319-հայկազ-բարսեղյանի-սպանությունը, http://news.am/arm/news/250930.html

[161] http://www.slaq.am/arm/news/1003062/

[162] http://www.epress.am/2015/02/04/262160.html

իրենց ննջասենյակում և վերածվել ծեծկռտուքի: Վերջիններս հասկանալով, որ չեն կարողանում «կոտրել» Հայկազին, որոշել են կտրել նրա ձեռքի երակները, ինչի արդյունքում Հայկազը ուշագնաց է եղել: Տղաները, տեսնելով նրան անշնչացած, հասկացել են, որ մահացել է, և գիտակցելով կատարվածի լրջությունը՝ որոշել են թաքցնել դիակը: Նրանք նախ ուսումնական զորամասի բակում փոս են փորել, որպեսզի տղայի դին թաքցնեն, սակայն հասկանալով, որ այդ կերպ կբացահայտվի, թե ովքեր են կատարել հանցագործությունը, որոշել են կազմակերպել ինքնասպանության տարբերակը[163]:

Իրավապաշտպանները մտահոգիչ են համարում հատկապես այն հանգամանքը, որ դեպքը տեղի է ունեցել ապագա սպաներ պատրաստող ռազմական կառույցում: Իրավապաշտպան, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի խոսքերով՝ այս դաժան սպանությունը ևս մեկ անգամ վկայում է զինված ուժերում գոյություն ունեցող վատ բարքերի մասին[164]:

Ռազմական փորձագետ, իրավապաշտպան Ռուբեն Մարտիրոսյանը կարծիք է հայտնել, որ Հայկազին սպանել են՝ դաժանորեն ծեծելով և խոշտանգելով: Հայկազի արյան հետքերը հայտնաբերվել են ննջասենյակում, անկողնում (մեծ քանակությամբ), իսկ արդեն դեպի պտտաձող տանող ճանապարհին ոչ մի արյան հետք չի հայտնաբերվել: Իրավապաշտպանը ենթադրել է, որ Հայկազին տեղափոխել են և տեսնելով, որ նա մահանում է՝ կախել են, որպեսզի հետո ներկայացնեն, թե իբր նա ինքնասպան է եղել[165]:

Դեպքի մասին նոր մանրամասներ ի հայտ եկան դեպքից մոտ 1 շաբաթ անց: Հայկազի հոր՝ Արկադիի խոսքերով՝ այդ օրը «բանակի օրն էին նշել»: Դեպքը գիշերն է եղել. հերթապահը երեքն անց կես շրջել է ննջարաններով, Հայկազը այդ ժամանակ քնած է եղել: Իսկ հետո ինքն էլ է գնացել քնելու: Ամեն ինչ հանգիստ է թվացել: Դեպքը պատահել է հերթապահի ստուգումներից հետո:

Հայկազի հորը հասած տեղեկությունների համաձայն՝ որդու բերանը փակել են «շորով», դանակով հարվածել են թևին, իսկ վերջում կախել են: Հայրը հավաստում է,

---

[163] http://www.1in.am/1540975.html
[164] http://www.azatutyun.am/content/article/26821650.html
[165] http://galatv.am/hy/news/ryan-hetqery-haytnabervel-en-nnjasenyakum-ankoghnu-mej-a-razmakan-institutum-spanutyan-errord-depqn-e/

որ շրթունքի վերևի հատվածում խփված էր ու լավ «գրիմ» արած: Ձախ այտի վրա հետք կար, որը գրիմով փակած էր: Թևերը՝մինչև արմուկները արյան մեջ են եղել: Արկադիի տվյալներով՝ ննջարանում Հայկազից բացի 6 հոգի են եղել: Ըստ Արկադի Բարսեղյանի ՝ չնայած 4-5 հոգի են կասկածվում են սպանության մեջ, սակայն վարկածներ կան, որ դրսից էլ է մարդ մտել ինստիտուտ[166]:

Պաշտպանության նախարարի արձագանքը դեպքի առնչությամբ

Միջադեպի կապակցությամբ հունվարի 31-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը շտապ խորհրդակցություն է հրավիրել: Նա կարծիք է հայտնել, որ որոշ սպաների անհետևողական աշխատանքի, ծառայողական պարտականությունները չկատարելու պատճառով զորամասում գլուխ են բարձրացրել «արատավոր բարքերը», որոնց արդյունքում էլ տեղի է ունեցել հանցագործությունը: Նա նաև հավաստիացրել է, որ կատարվելու է ուսումնական զորամասի հաստիքային կազմի արմատական փոփոխություն, պաշտոններից հեռացվելու են մոտ 3-4 տասնյակ անձինք՝ այդ թվում՝ պետ, տեղակալներ, ամբիոնի պետեր, գումարտակի, վաշտի հրամանատություն, համալրման պատասխանատուներ, հոգեբաններ, այսինքն՝ բոլոր այն անձինք, որոնք ուղղակի կամ անուղղակի կապ են ունեցեծ տեղի ունեցածի հետ[167]: Նախարարը հանձնարարել է նաև ծառայողական քննության արդյունքների հիման վրա կազմել հեռանկարային պլան՝ հայտնաբերված թերությունները վերացնելու և ուսումնական գործընթացը հիմնովին բարելավելու ուղղությամբ[168]:

Պաշտոնանկություններ՝ կապված կուրսանտի սպանության դեպքի հետ

2015 թ-ի փետրվարի 2-ին Սերժ Սարգսյանը հաստատել[169] է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետ, գեներալ-լեյտենանտ Մարտին Կարապետյանի հրաժարականը: Դեպքից հետո պաշտոնանկ են արվել ինստիտուտի զորքերի ծառայության կազմակերպման գծով տեղակալ, գնդապետ Արմեն Ռազմիկի Մզիկյանը, ինստիտուտի մեկ այլ տեղակալ, գնդապետ Պողոս Գարուշի

---

[166] http://galatv.am/hy/news/ursantin-spanel-en-gishery-qnac-jhamanak-atmum-e-nra-hayry/
[167] http://news.am/arm/news/250565.html
[168] http://www.yerkir.am/am/news/79606.htm
[169] http://www.yerkir.am/am/news/79717.htm, http://168.am/2015/02/11/455455.html

Աբրահամյանը, ինչպես նաև մեղադրյալներից մեկի՝ Գնել Թևոսյանի հայրը՝ շտաբի պետ Զարմիկ Անդրանիկի Մարկոսյանը:

«Ժողովուրդ»-ի հետ զրույցում Մարտին Կարապետյանն ասել է, որ ինքը վատ հոգեվիճակում է և անգամ պաշտոնանկ լինելուց հետո դժվարանում է խոսել ինստիտուտում կատարվածի մասին[170]: Նա նշել է, որ կատարվածի մեջ տեսնում է իր մեղքի չափաբաժինը, ինչ համար էլ հրաժարական է ներկայացրել:

Վերջին մեկուկես տարվա ընթացքում դա երկրորդ սպանության դեպքն էր բարձրագույն զինվորական հաստատությունում: 2013թ. հունիսի 1-ին համածառայակցի կողմից սպանվեց նույն ինստիտուտի կուրսանտ Սիփան Մովսիսյանը: Այն ժամանակ նույնպես ռազմական ինստիտուտի պետը հրաժարականի դիմում էր ներկայացրել, սակայն ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը բարձր գնահատելով գեներալի անցած պատերազմական ուղին՝ չէր ընդունել հրաժարականը:

Արթուր Սաքունցն ավելի լուրջ խնդիր է համարում այն հանգամանքը, որ Մարտին Կարապետյանը զբաղեցրած պաշտոնից ազատման դիմում է ներկայացրել, հնարավոր է, ի վիճակի չլինելով լուծելու որոշակի խնդիրներ: Սակայն նրան այն ժամանակ չեն ազատել, և ավելին, «հնարավոր է՝ չեն ապահովվել այնպիսի անհրաժեշտ պայմաններ, որպեսզի մարդը կարողանա լիարժեք ղեկավարել»[171]:

Սերժ Սարգսյանի հրամանագրով 2015 թվականի փետրվարի 6-ին Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետ է նշանակվել գեներալ-մայոր Արմեն Ղահրամանյանը: Վերջինս ԼՂ պաշտպանության նախարարի տեղակալն էր, ղարաբաղյան պատերազմի մասնակից[172]:

Դեպքից հետո ի հայտ եկած նոր հանգամանքներ

2015 թ. փետրվարի 14-ին, ՀՀ Քննչական կոմիտեն տեղեկատվություն է տարածել այն մասնի, որ Հայկազ Բարսեղյանի սպանության դեպքի առթիվ ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցված քրեական գործի նախաքննությամբ պարզվել են մի շարք հանգամանքներ, այդ թվում

[170] http://www.yerkir.am/am/news/79882.htm
[171] http://www.azatutyun.am/content/article/26834110.html
[172] http://www.azatutyun.am/content/article/26834110.html

ապացույցներ են ձեռք բերվել՝ սպայական աձնակազմի կողմից դրսևորված անգործության վերաբերյալ:

Հարուցվել է նոր քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանության անգործությունը, որն էական վնաս է պատճառել), որի շրջանակներում փետրվարի 13-ին ձերբակալվել է ռազմական ինստիտուտի սպա, կապիտան Արտյոմ Ավետիսյանը: Ըստ Քննչական կոմիտեի՝ նախաքննությամբ պարզվել է, որ Ա. Ավետիսյանը, ականատես լինելով իր ենթակա անձնակազմի կուրսանտներ Հայկազ Բարսեղյանի և Արշակ Մարտիրոսյանի վիճաբանությանը, միջոցներ չի ձեռնարկել՝ վիճաբանությունը կանխելու ուղղությամբ, չի պարզել դրդապատճառները և չի զեկուցել ըստ ենթակայության, որով էական վնաս է հասցրել զինվորական ծառայության շահերին[173]: Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (պետի/հրամանատարի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել):

Զինծառայողի սպանության դեպքի առթիվ քննվող քրեական գործի շրջանակներում դեպքից մետ 8 ամիս անց՝ հոկտեմբերին, նոր քրեական գործ է հարուցվել մեղադրյալներից մեկի հոր, ռազմական ինստիտուտի հրամանատարի տեղակալ, գնդապետ Զարմիկ Մարկոսյանի պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելուը վերաբերյալ: Վերջինս անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, դեռևս 2014թ. օգոստոսից մինչև 2015թ. հունվարի 28-ը պարբերաբար հանձնարարել է իր ենթակա համապատասխան սպաներին, առանց համապատասխան փաստաթղթային ձևակերպման, որդուն՝ նույն զորամասի կուրսանտ Գնել Թևոսյանին մի քան ժամ տևողությամբ ազատել ծառայողական պարտականությունները կատարելուց և թույլատրել բացակայել զորամասի տարածքից: Այդ կերպ արտոնյալ պայմաններ է ստեղծել որդու համար, խաթարել է զինվորական կառավարման մարմինների և ծառայության իրականացման բնականոն ընթացքը: Գ.Թևոսյանը համածառայողների շրջանում արհեստականորեն ստացել է

[173] http://armtimes.com/hy/read/59696

առավելություն, ինչով զինծառայողների շրջանում ստեղծվել է անհավասարության մթնոլորտ[174]:

Քրեական գործի ընթացքը, փաստաբանների մեկնաբանությունները

Մեղադրյալներ Գնել Թնոսյանի և Նորիկ Սահակյանի պաշտպանությունը ստանձնել են համապատասխանաբար ՀՀ փաստաբանների պալատի անդամներ՝ փաստաբաններ Արա Զաքարյանն ու Հովիկ Արսենյանը:

Նորիկ Սահակյանի փաստաբան Հովիկ Արսենյանը 2015 թ. փետրվարի 19-ին ահազանգել է, որ գործով անցնող մեղադրյալների նկատմամբ գործի քննության ընթացքում ոստիկանությունում բռնություններ են գործադրվել: Նա չի մանրամասնել իր հայտարարությունը, սակայն վստահեցրել է, որ նպատակը եղել է մեղադրյալներին ստիպել ընդունել իրենց առաջադրված մեղադրանքները[175]:

Փաստաբանի խոսքով՝ դեպքի օրը՝ հունվարի 28-ի լույս 29-ի գիշերը, Նորիկ Սահակյանը հերթապահ սպայի թույլտվությամբ և գիտությամբ իր հետ մտերիմ հարաբերություններ ունեցող երկու այլ կուրսանտի հետ մինչև գիշերը ժամը 03:00-ն կամ 03:30-ը հենց հերթապահ սպայի սենյակի դիմաց՝ միջանցքում գտնվող սեղանի մոտ պարապելիս է եղել «Հրետանու հրաձգություն» առարկան, որից հունվարի 29-ին պիտի ստուգարք հանձներ: Փաստաբանը նաև վստահեցրել է, որ իր պաշտպանյալը ծառայության ընթացքում ոչ մեկի հետ կոնֆլիկտ չի ունեցել[176]:

Փաստաբաններ Արսենյանի և Զաքարյանի խոսքերով՝ նշանակվել են դատաձեռագրաբանական, դատաքիմիական, հետքաբանական, մանրաթելային, տոքսիկոքիմիական և դատանյութագիտական համալիր փորձաքննություններ: Ըստ Զաքարյանի՝ չի բացառվում, որ դատահոգեբուժական փորձաքննություն նույնպես առաջիկայում նշանակվի: Փորձաքննություններով պետք է պարզվեր նաև, թե արդյոք մեղադրյալները սթափ վիճակում են եղել, թե ոչ[177]: 2015թ. մարտի վերջին, երբ ստացվեցին որոշ փորձաքննությունների արդյունքներ, Նորիկ Սահակյանի փաստաբան Հովիկ Արսենյանը, համաձայան չլինելով փորձաքննության արդյունքների հետ, պահանջել է կրկնակի փորձաքննություն, տարօրինակ

---

[174] http://www.lragir.am/index/arm/0/right/view/121219
[175] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=237
[176] http://newsline.am/am/news/view/5108.html , http://www.aravot.am/2015/02/05/539298/
[177] http://news.am/arm/news/257806.html , http://news.am/arm/news/258182.html

համարելով այն հանգամանքը, որ իր պաշտպանյալի վերաբերյալ նույնպես հայտարարել են, որ նա եղել է ոչ սթափ վիճակում: Նախաքննության նյութերին ծանոթանալուց հետո փաստաբանը եզրակացրել է, որ Նորիկ Սահակյանին մեղադրանք են առաջադրել սուբյեկտիվ ցուցմունքների հիման վրա, քանի որ դրանք հակասություններ են պարունակում միմյանց համեմատելիս: Ըստ նրա՝ ակնհայտ է, որ վկաները ցուցմունքներ են տվել հոգեբանական ճնշման տակ և միանշանակ է, որ այդ անձանց արհեստականորեն դարձրել են վկաներ: Նա հայտնել է, որ Հայկազ Բարսեղյանի ծառայակից ընկերները պատմել են նախաքննական մարմնին, որ իրենց աչքի առաջ են ծեծի ենթարկել Հայկազին, ապա տարել են սենյակից, որից հետո իրենք հանգիստ քնել են: Նա զարմանալի է համարում այն համգամանքը, որ ապագա սպաները տեսել են, թե ինչպես են իրենց ընկերոջը ծեծում, վնասվածքներ հասցնում, ապա տանում սենյակից, իսկ իրենք ձայն չեն հանում: փաստաբանը վստահեցնում է որ եթե այդ վկաների ցուցմունքները ճիշտ են, ապա նրանք առնվազն պետք է հեռացվեին ուսումնական հաստատությունից, «մինչդեռ այդ նույն վկաներին պետականորեն իրենց պաշտպանության տակ են վերցրել և ընդունել են այլ ռազմական հաստատություն»: Հովիկ Արսենյանի կարծիքով՝ չի կարելի նման վկաների արհեստածին ցուցմունքներով դատել անմեղ մարդկանց[178]:

Մյուս մեղադրյալի՝ Վաչե Սահակյանի հարազատները նույնպես վստահ են, որ զինծառայողը կապ չունի տեղի ունեցածի հետ[179]: News.am-ի հետ զրույցում Վաչեի մորաքույրնասել է, որ հեռախոսով զրուցել են Վաչեի հետ: Նա ասել է, որ ինքն ու Հայկազը շատ լավ ընկերներ են եղել, կոնֆլիկտ չեն ունեցել[180]:

Հայկազի հայրը վրդովմունք է արտահայտել այն հայտարարության առթիվ, թե իբր մեղադրյալներն իր որդու ընկերներն են եղել: Ա. Բարսեղյանին հասած տեղեկությունների համաձայն՝ Վաչեն և Նորիկն այն տղաներն են, ովքեր կոնֆլիկտ են ունեցել իր որդու հետ և անմիջական կապ ունեն կատարվածի հետ: Նրան նաև տեղեկություններ են հասել, որ այդ կուրսանտները առանձնացել են վատ վարքով, և նրանցից ոչ ոք իր որդու ընկերը չի եղել[181]: Արկադի Բարսեղյանը վստահ է, որ գլխավոր մեղավորները հենց Վաչե Սահակյանն ու Գնել Թևոսյանն են[182]:

---

178 http://news.am/arm/news/290170.html
179 http://news.am/arm/news/251304.html
180 http://news.am/arm/news/252626.html
181 http://news.am/arm/news/252987.html
182 http://168.am/2015/02/16/457403.html#.VOHr1niO6d4.facebook

Ինչ վերաբերում է գնդապետ Զարմիկ Մարկոսյանի որդուն՝ գործով մեղադրյալ Գնել Թնասյանին, ապա նրանց հարևաններից մեկը՝ արցախյան պատերազմի մասնակից, հրամանատար Գրիգորի Ասատուրովը կարծիք է հայտնել, որ Գնելը նման բան չէր կարող թույլ տալ, քանի որ նա շատ վախկոտ երեխա էր, նույնիսկ արյուն տեսնելիս վախենում էր: Այդ մասին են հավաստել նաև Գնելի մյուս հարևանները, այդ թվում՝ նրա հասակակից ընկերը: Ասատուրովը վստահեցրել է որ Գնելի հարազատների խոսքերով՝ իրենք անձամբ ամեն ինչ անելու են, որ Գնելը արժանի պատիժ կրի, եթե պարզվի, որ նա մասնակից է եղել այդ սպանությանը[183]:

Հարկ է նշել, որ Արկադի Բարսեղյանն ի սկզբանե իրեն որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ էր ընտրել իրավապաշտպան Արթուր Սաքունցին, սակայն ավելի ուշ փաստաբանի է ընտրել: Բարսեղյանի խոսքերով՝ քննիչներն իրեն խորհուրդ են տվել փաստաբան «վերցնել», քանի որ դա անպայման է, և հավելել են, որ «Ա. Սաքունցն իրավապաշտպան է, չնայած՝ իրավապաշտպան էլ կարող է վերցնել»[184]:

2015 թ-ի ապրիլին հայտնի դարձավ ևս մեկ փորձաքննության արդյունքը, համաձայն որի՝ կուրսանտ Հայկազ Բարսեղյանի մահը վրա է հասել կոկորդին հասցված վնասվածքի հետևանքով[185]:

Նույն ժամանակահատվածում Հայկազ Բարսեղյանի սպանության գործի շրջանակներում բացահայտվեց հալածանքի մեկ այլ դրվագ, որն էլ ուղարկվեց Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան: Մասնավորապես, ըստ «Փաստինֆո»-ի տվյալների՝ սպանության նախորդ օրը Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային թատրոնում՝ ՀՀ ԶՈՒ կազմավորման տարեդարձի առթիվ կազմակերպված տոնական համերգից հետո, ռազմական ինստիտուտ վերադառնալու ճանապարհին, ավտոբուսում կուրսանտ, 19-ամյա Արշակ Արծրունու Մարտիրոսյանը վիճաբանել է Հայկազ Արկադիի Բարսեղյանի հետ, հայհոյել և քաշքշել է նրան՝ անպարկեշտ ձևով ստորացնելով նրա պատիվն ու արժանապատվությունը[186]:

---

[183] http://168.am/2015/02/11/455455.html
[184] http://galatv.am/hy/news/r-sagh-asum-en-es-chem-es-chem-ba-im-erexun-o-v-spanec-erewi-4-ic-meky-kasi-es-em-u-gorcy-kverjana-kgna/
[185] http://news.am/arm/news/262373.html
[186] http://m.lragir.am/index/arm/1/country/view/113272

Արշակ Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ Քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով (զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելու՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելու համար)[187]:

2015թ. մայիսի 21-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը՝ կիրառելով արագացված դատավարության կարգ, Արշակ Մարտիրոսյանին ճանաչել է մեղավոր ու դատապարտել 2 ամսվա կալանքի, որը համաձայն ՔՕ 70-րդ հոդվածի պայմանականորեն չի կիրառվի: Սահմանվել է նաև փորձաշրջան 1 տարի ժամկետով և վերահսկողությունը հանձնվել է զորամասի համապատասխան բաժնի ստորաբաժանմանը[188]:

Սակայն Հայկազ Բարսեղյանի հայրը դեմ էր կուրսանտին դատապարտելուն, քանի որ վստահ էր, որ Հայկազի և վերջինիս միջև տեղի ունեցած վեճը սպանության հետ կապ չունի:

Վաչե Սահակյանի փաստաբան Արմեն Նադիրյան դժգոհություն է հայտնել այն կապայցությամբ, որ իրենց կողմից ներկայացված բոլոր հիմնավոր միջնորդությունները անհիմն մերժվում են, առերեսումները՝ հետաձգվում: Իստ նրա՝ քննությամբ որևէ ապացույց ձեռք չի բերվել, որը կապացուցեր իր պաշտպանյալի մեղավորությունը սպանության մեջ: Նա միջնորդելու է, որ իր պաշտպանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվի[189]:

Վաչե Սահակյան մայրը՝ Կ. Քալանթարյանը, դեպքից կես տարի անց (հուլիսին) նամակով դիմել է Հայկազ Բարսեղյանի հորը, վստահեցնելով, որ իր որդին անմեղ է[190]: Իսկ հենց Վաչեն սեպտեմբերին է նամակ ուղարկել Բարսեղյանի հորը, նշելով, որ ինքը մեղավոր չէ Հայկազի սպանության համար: Արկադի Բարսեղյանը Վաչե Սահակյանի այս արարքը որակել է որպես փրփուրներից կախվել՝ ևս մեկ անգամ հաստատելով իր այն համոզմունքը, որ Վաչեն մեղավոր է որդու սպանության համար: Ըստ նրա, ինքն այս ամիսների ընթացքում հետևել է նախաքննության ընթացքին և համոզված է, որ քննիչը լավ աշխատել է[191]:

---

[187] http://news.am/arm/news/262414.html
[188] http://yn.am/?index&p=40221&l=am
[189] http://news.am/arm/news/286504.html
[190] http://news.am/arm/news/275375.html
[191] http://news.am/arm/news/285548.html

Նախաքննության ավարտից հետո Արկադի Բարսեղյանի մոտ հարցեր չեն մնացել, նա որդու սպանությունը լիարժեք բացահայտված է համարում:

Դատաքննություն

2015 թվականի հոկտեմբերի 27-ին կուրսանտ Հայկազ Բարսեղյանի սպանության գործն ուղարկվել է Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան և մակագրվել դատավոր Դավիթ Հարությունյանին:

Գնել Թևոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 7-րդ և 10-րդ կետերով և 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով, Նորիկ Սահակյանին՝ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 7-րդ և 10-րդ կետերով և 359-րդ հոդվածի 1-ին մասով, Վաչե Սահակյանին՝104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 7-րդ և 10-րդ կետերով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 359-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ Մովսես Ազարյանին՝104-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ, 7-րդ և 10-րդ կետերով, 2 դրվագով՝ 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 2 դրվագով՝ 359-րդ հոդվածի 1-ին մասով: Զինծառայողների հանդեպ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Նրանք չեն ընդունում իրենց առաջադրված մեղադրանքները և մեղավոր չեն ճանաչում իրենց:

Սույն գործով բացի այս 4 մեղադրյալներից մեղադրանք է առաջադրվել նաև նույն զորամասի կուրսանտ Վարազդատ Սաֆարյանին, ով 2014թ. նոյեմբերի 16-ին ժամը 21.00-ի սահմաններում նույն մարտկոցի կուրսանտ Տ.Մանասերյանին շարքում խոսելու համար դիտողություն անելուց և վերջինիս կողմից հակադարձում ստանալուց հետո Վաչե Սահակյանի, Մովսես Ազարյանի հետ միասին, մի խումբ անձանց հետ խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13, 16, 65 հոդվածները՝ ծեծի են ենթարկել Մանասերյանին, իսկ 2015թ. հունվարին լսարանում խոսելու համար ծեծի է ենթարկել նաև համածառայակից Արտուշ Սիմոնյանին:

Վարազդատ Սաֆարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով և 2 մասի 2 կետով (մի խումբ անձանց կողմից զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է ծաղրուծանակի ենթարկելով կամ

հալածելով կամ ծեծելով կամ այլ բռնի գործողություններ կատարելով): Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել հրամանատարության հսկողության հանձնելը:

Որոշ տեղեկություններով[192]՝ Գնել Թևոսյանի, Նորիկ Սահակյանի, Վաչե Սահակյանի և Մովսես Ազարյանի գործողություններից տուժել են, մասնավորապես՝ ծեծի ու ծաղրի են ենթարկվել նաև նույն զորամասի 4 այլ զինծառայողներ:

Քրեական գործի նյութերին ծանոթանալուց հետո Հակազ Բարսեղյանի հայրը՝ Արկադի Բարսեղյանը անդրադարձել է որոշ վկաների ցուցմունքներին: Վկաները պատմել են, որ ճաշարանում Կարեն Բաղրամյանի ուտելու ձևի վերաբերյալ Հայկազի նկատողության արդյունքում տեղի ունեցած վիճաբնությունից հետո՝ երեկոյան ժամը 20:00-ին Վաչե Սահակյանը ճաշարանում ներկա գտնվող բոլոր անձանց հավաքել է սենյակում և հարցրել, թե ինչ է եղել իրականում, ինչին ի պատասխան բոլորը, այդ թվում նաև Հայկազը, ասել են, որ Կարենը նորմալ չի ուտում: Հետո Գնել Թևոսյանը միջանցքում մոտեցել է Հայկազին ու քաշքշել: Նույն օրը Գնել Թևոսյանն ու Վաչե Սահակյանը երեկոյան ուշ ժամի, երբ բոլորը քնած են եղել, արթնացրել են Հայկազ Բարսեղյանին և դուրս կանչել: Հայկազն ասել է, որ ինքը նրանց հետ խոսելու բան չունի, իսկ նրանք պատասխանել են, որ իրենք ունեն: Հայկազը հագնվել և գնացել է նրանց հետևից: Ըստ վկաների՝ 30 րոպե հետո Հայկազը սենյակ է մտել ծեծված, կաղալով և հայհոյելով: 15 րոպե հետո Գնել Թևոսյանն ու Վաչե Սահակյանը մտել սենյակ. դեպքի պահին Վաչե Սահակյանը և Մովսես Ազարյանը Հայկազի ոտքերի մոտ են կանգնած եղել, Նորայր Սահակյանը՝ գլխավերևում: Գնելն ու Նորայրը սկսել են հարվածել Հայկազին, իսկ Վաչեն ու Մովսեսը ոտքերն են պահել: Հայկազը հասկանալով՝ ինչ պետք է լինի, հայհոյանքով ասել է՝ էդ սպանում եք ինձ.... և այդ ժամանակ Գնելը դանակով Հայկազի ձեռքի երակը կտրել է, ինչից հետո Հայկազը փսխել է: Նարնք ընկնել են Հայկազի վրա և սկսել խեղդել նրան: Գնելն ասել է՝ «էսի մեռավ»: Այդ ժամանակ մտածել են՝ ինչ անեն: Նորայրն Սահակյանն առաջարկել է պատշգամբից նետել, իսկ Գնելը Թևոսյանը պատասխանել է՝ «չէ տենց պալիտ կլինենք», Վաչե Սահակյանը առաջարկել է նամակ գրել, իբր Հայկազը ինքնասպան է եղել, Գնել Թևոսյանը կարգադրել է, որ «բուշլատներից թելերը հանեն»: Թելերը

[192] http://www.pastinfo.am/hy/node/81550

հանելուց հետո Հայկազի շորերը հագցնում են, գլխարկը դնում, իջեցնում, տանում են պտտաձողից կախում:

Ըստ Արկադի Բարսեղյանի՝ վկաները իրենց ցուցմունքներում նշել են, որ գործով չորս մեղադրյալները վախի մեջ են պահել բոլորին և կուրսանտներին ասել, որ բոլորը իրենց պետք է ենթարկվեն:

Մահացած զինծառայողի հայրը խիստ պատիժ է պահանջում մեղադրյալների համար՝ ցմահ ազատազրկում[193]:

Մեղադրյալների պաշտպանների կարծիքով գործի քննությունը թերի և անկատար է: Ըստ նրանց՝ գործով մեղադրյալներից որևէ մեկը ռեալ շարժառիթ չի ունեցել՝ Բարսեղյանին սպանելու համար:

Վաչե Սահակյանի պաշտպան Արմեն Նադիրյանի խոսքերով՝ գործի շրջանակներում չի քննվել այն վարկածը, որ սպանությունը կարող են կատարած լինել Հայկազ Բարսեղյանի ննջարանում քնող անձինք, որոնք գործով ականատես վկաների կարգավիճակ ունեն: Նա անհիմն է համարում այն, որ ննջարանում քնող բոլոր կուրսանտների նկատմամբ պաշտպանության միջոց է կիրառվել և նրանց տեղափոխել են այլ զորամաս: Փաստաբանի կարծիքով՝ նրանց տարել են, որպեսզի վերահսկողության տակ պահեն, նրանք կառավարելի լինեն և ցուցմունքները չփոխեն:

Մեղադրյալ Նորայր Սահակյանի պաշտպան Հովիկ Արսենյանը ևս նշել է, որ քրեական գործով ականատես վկայի կարգավիճակ ունեցող անձինք ակնհայտ կեղծ ցուցմունքներ են տվել մեղադրյալների դեմ, և չի բացառել, որ դա կարող է լինել նրանց նկատմամբ հոգեբանական ճնշման հետևանք: Ըստ նրա՝ փորձագետի տված դատաբժշկական փորձաքննության այն եզրակացությունը, համաձայն որի Հայկազ Բարսեղյանի հետ տեղի ունեցածն ինքնասպանություն լինել չէր կարող, հնարավոր է նաև նաև սխալ լինել:

Մեղադրյալ Մովսես Ազարյանի պաշտպան Անահիտ Հովհաննիսյանը նույնպես գործով ականատես վկայի կարգավիճակ ունեցող անձանց ցուցմունքները որակել է անարժանահավատ: Նա նախաքննությունը թերի է համարում և քննիչին բացարկ է հայտնել, ինչպես նաև միջնորդել, որպեսզի իր պաշտպանյալի և վկաների միջև առերեսումները կատարվեն ոչ թե քննիչի սենյակում, այլ քրեակատարողական

[193] http://armtimes.com/hy/read/72777

հիմնարկում: Փաստաբանի կողմից նման միջնորդությամբ հանդես գալու պատճառը եղել է քննիչի նկատմամբ իր պաշպանյալի անվստահությունը:

Ըստ մեղադրյալ Գնել Թևոսյանի պաշտպան Արա Զաքարյանի՝ իր մոտ տպավորություն է, որ որոշ պաշտոնյաների հայտարարություններն ու հայտնած տեղեկությունները նախաքննական մարմնին կաշկանդել են, և վերջինս չի կարողացել գործի քննության ընթացքում շեղվել այդ հայտարարութունների բովանդակությունից:

Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Գարիկ Գալիկյանը, սակայն, գործի նախաքննության ընթացքը գնահատում է բավարար[194]:

Գործի քննությունը շարունակվում է Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում

Հարազատները Հայկազ Բարսեղյանի մասին

Կուրսանտ Հայկազ Բարսեղյանը Արարատի մարզի Նիզամի գյուղից էր: Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանն ավարտելուց հետո ընդունվել էր Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ: Նիզամիի գյուղապետի խոսքերով՝ իրեն դեպքի մասին հունվարի 29-ի վաղ առավոտյան տեղեկացրել են նախարարությունից: Զինկոմիսարիատի աշխատակիցը, ըստ գյուղապետի, հայտնել է միայն այն, ինչ դեպքի մասի նշված է եղել պաշտոնական հաղորդագրության մեջ և ոչ մի լրացուցիչ տեղեկություն[195]:

Հայկազը գյուղապետի հետ զրույցներում ծառայությունից երբեք չի դժգոհել: Հայկազի հոր մտերիմ ընկերոջ՝ Էդգարի խոսքերով՝ 2014 թ-ի դեկտեմբերի 31-ից 2015 թ-ի հունվարի 7-ը ինստիտուտի ղեկավարությունը Հայկազին տուն էր ուղարկել որպես տոնական խրախուսանք: Արձակուրդի ավարտից հետո Հայկազը ծնողների հետ չի խոսել, ասել է՝ եթե պետք լինի, ես ձեզ կզանգահարեմ:[196] Հարազատների խոսքերով՝ Հայկազը շատ խելացի, մարզված երիտասարդ է եղել: Նա ոչ մի անգամ չի

[194] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=366
[195] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=228
[196] http://www.1in.am/1536129.html

տրտնջացել և ծնողներին ու հարազատներին էլ չի բողոքել ծառայության պայմաններից ու վայրից, միայն ասել է, որ ամեն ինչ կարգին է[197]:

Հոր կարծիքով՝ որդուն նախանձել են, քանի որ նրան շատ են գովացել լավ ծառայության համար: Նրան նույնիսկ ցանկացել են սերժանտի կոչում տալ, սակայն, ըստ հոր՝ Հայկազն ինքն է հրաժարվել, և սերժանտի կոչումը տվել են գնդապետի որդուն Գնել Թևոսյանին՝ Հայկազի սպանության գործով մեղադրյալներից մեկին:[198]

Է. Սպանություն

Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում

1. Տիգրան Սիմոնյան (լեյտենանտ)

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության հրապարակած մամուլի հաղորդագրության համաձայն՝ 2015 թվականի փետրվարի 10-ին՝ ժամը 19:55-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Տիգրան Սամվելի Սիմոնյանը (ծնված 1991թ.)[199]:

Դեպքի առթիվ ՀՀ Քննչական Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը որն առաջացրել է ծանր հետևանքներ[200]:

Հարուցված քրեական գործով ձերբակալվել է նույն զորամասի զինծառայող, ավագ լեյտենանտ Տարոն Գեղեոնյանը[201]:

Տիգրանի հարազատները դեպքի օրը՝ փետրվարի 10-ի երեկոյան անընդհատ զանգահարել են Տիգրանին, բայց նրա հեռախոսն անջատված է եղել[202]: Զինծառայողը մոր հետ վերջին անգամ խոսել է դեպքից երկու օր առաջ[203]:

---

[197] http://galatv.am/hy/news/panvac-zincarayoghin-hugharkavorum-en-aysor-izami-gyughi-gerezmanatany/
[198] http://galatv.am/hy/news/ursantin-spanel-en-gishery-qnac-jhamanak-atmum-e-nra-hayry/
[199] http://galatv.am/hy/news/artakan-henaketum-1991t-cnvac-zincarayogh-e-mahacel/
[200] http://168.am/2015/02/11/455453.html
[201] http://hra.am/hy/events/2015/02/13/soldier
[202] http://news.am/arm/news/252199.html
[203] http://news.am/arm/news/252199.html

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ձեռնարկված միջոցները

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցներն այցելել են զինծառայողի հարազատներին: Ըստ հարազատների հայտնած տեղեկությունների՝ 2015թ. փետրվարի 10-ի լույս 11-ի գիշերը՝ ժամը 1:15-ի սահմաններում, Տիգրանի հայրը զանգ է ստացել հարևանից, ով նրան շտապ կանչել է իրենց տուն և հայտնել, որ Վանաձորի զինկոմիսարիատից քիչ առաջ զանգահարել են իրենց տուն և տեղեկացրել դեպքի մասին: Հարևաններին ոչ մի այլ մանրամասներ չեն հայտնել:

Հաջորդ օրը՝ փետրվարի 11-ի առավոտյան, զինկոմիսարիատի աշխատակիցն անձամբ այցելել է Սիմոնյաններին՝ ներկայացնելով դեպքի մասին որոշ մանրամասներ:

Զինկոմիսարիատի աշխատակիցը հայտնել է, որ դեպքը տեղի է ունեցել մարտական դիրքերում, երբ Տիգրանը և իր ծառայակիցը, լսելով շան հաչոցներ, դուրս են եկել ստուգելու իրավիճակը: Վազելով հակառակ ուղղություններով և մի կետում դուրս գալով միմյանց դիմաց՝ Տիգրանի ծառայակիցը արձակել է կրակոց, որը դիպել է Տիգրանին՝ նրան պատճառելով մահացու վիրավորում: Սակայն, հարազատներն այս վարկածը խելամիտ չեն համարում, քանի որ կարծում են, որ տղաները այդ դեպքում չէին կրակի՝ արդեն իսկ իմանալով, որ այդ տարածքում հնարավոր էր հակառակ ուղղությամբ վազելու դեպքում դուրս գալ դեմ դիմաց: Տիգրանի ընկերներից մեկը, ով մասնակցել է դիակի զննությանը, հարազատներին հայտնել է, որ զինծառայողի մարմնի վրա հայտնաբերվել է հրազենային 4 վնասվածք՝ 2-ը թևի, 1-ը գլխի շրջանում, 1-ը ուսի հատվածում (դիմացի մասից):

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ, իրավապաշտպան Արթուր Սաքունցի համոզմամբ՝ անհրաժեշտ էր գործ հարուցել հենց սպանության հոդվածով՝ գործում ներգրավելով նաև հրամանատարական կազմին: Ըստ Սաքունցի՝ անգամ մարտական հերթապահություն կրելու կանոնները խախտելու հիմքով հարուցված քրեական գործը հուշում է, որ Պաշտպանության բանակը, այնուամենայնիվ, թերացել է:

Իրավապաշտպան Վարդան Հարությունյանը հավելում է, որ խնդիրը չկանոնակարգված միջանձնային հարաբերություններն են, որոնց հետևանքով տեղի

ունեցած ծանր կամ մահացու դեպքերը հաճախ կոծկվում են մարտական հերթապահության կանոնները խախտելու հոդվածով[204]:

Տիգրանը Վանաձորից էր: Տան ավագ որդին էր: Նրա կրտսեր եղբայրը, որը պարտադիր զինծառայության մեջ էր, վաղաժամկետ զորացրվել է:

Դպրոցն ավարտելուց հետո Տիգրանը բարձր միավորներով ընդունվել էր Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ: Ունենալով հնարավորություն ընտրելու հրետանային կամ մոտոհրաձգային ստորաբաժանումներից մեկը՝ Տիգրանն ընտրել է երկրորդը, վստահեցնելով մորը, որ այդտեղ նա ավելի մեծ հաջողությունների կհասնի:

Դատաքննություն

2015 թվականի հուլիսի 27-ին գործը մեղադրական եզրակացությամբ ստացվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում և մակագրվել դատավոր Դավիթ Գրիգորյանին: Ըստ մեղադրական եզրակացության՝ 26-ամյա վաշտի հրամանատար, կոչումով ավագ լեյտենանտ Տարոն Գեղեոնյանը 2015 թվականի փետրվարի 10-ին ստուգում կատարելու նպատակով գնացել է մարտական դիրք: Այնտեղ ստուգում կատարելու փոխարեն, խախտելով մարտական հերթապահություն կրելու կանոնները, նույն դիրքի ավագ, դասակի հրամանատար, կոչումով ավագ լեյտենանտ Տիգրան Սիմոնյանի հետ օգտագործել է ոգելից խմիչք: Այնուհետև, ժամը 19:55-ի սահմաններում, ավագ լեյտենանտ Տարոն Գեղեոնյանը անհարկի լիցքավորել է Տիգրանին ամրակցված ինքնաձիգը և կրակահերթ է արձակել, ինչի հետևանքով ավագ լեյտենանտ Տիգրան Սիմոնյանը ստացել է հրազենային գնդակային վիրավորում և Մարտակերտի հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին մահացել է:

Տարոն Գեղեոնյանն արգելանքի տակ է առնվել 2015 թվականի փետրվարի 11-ից: Նա մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 365 հոդվածի 3-րդ մասով, որով օրենքով նախատեսված առավելագույն պատիժը 8 տարի ազատազրկումն է:

Որպես Տարոն Գեղեոնյանի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք՝ դատարանը հաշվի է առել հանցավոր արարքը ալկոհոլի ազդեցության տակ կատարելը: Դատարանի կողմից հաշվի է առնվել Գեղեոնյանի ծառայողական դրական բնութագիրը, լավ ծառայության համար մեդալներով

[204] http://www.azatutyun.am/content/article/26849717.html

պարգևատրվելը, շնորհակալագրերով, պատվոգրերով և այլ պարգևներով բազմիցս խրախուսվելը և դատապարտել նրան 4 տարի 6 ամիս ազատազրկման:

Սույն գործով ՀՀ Քրեական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել նաև 20-ամյա զինծառայողնար ջոկի հրամանատար, կոչումով սերժանտ Սերյոժա Կարապետյանին և շարքային Շիրազ Գասպարյանին, որոնք մեղադրվում են այդ նույն օրը՝ փետրվարի 10-ին, ժամը 20-ի սահմաններում դիտավորությամբ նույն դիրքում դեպի չեզոք գոտի 11 հատ փամփուշտ նետելու և ոնչնացնելու մեջ[205]:

Ընդհանուր իրավասության դատարանում ամբաստանյալներն իրենց մեղավոր են ճանաչել և միջնորդել են գործը քննել արագացված կարգով:

Տուժողի իրավահաջորդը քաղհայցի պահանջ չի ներկայացրել, չի առարկել արագացված կարգի կիրառման դեմ:

Զինծառայողները մեղավոր են ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 369 հոդվածի 1-ին մասով:

Սերյոժա Կարապետյանը և դատապարտվել են կարգապահական գումարտակում 3 ամիս ժամկետով պահելուն: Սակայն Շիրազ Գասպարյանի նկատմամբ պայմանական դատապարտություն է կիրառվել, և սահմանվել է 1 տարի փորձաշրջան[206]:

2. Աշոտ Հովհաննիսյան (պայմանագրային զինծառայող)

ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տարածված տեղեկատվության համաձայն՝ 2015 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 23:40-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի մարտական հենակետում՝ մարտական հերթապահություն կրելու կանոնները խախտելու հետևանքով արձակված կրակահերթի արդյունքում ստացած հրազենային վնասվածքներից տեղում մահացել է նույն զորամասի պայմանագրային զինծառայող, 1990 թ. ծնված Աշոտ Հովհաննիսյանը:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությանում հարուցվել է քրեական գործ զինծառայողի մահվան դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով (մարտական հերթապահություն կամ

[205] http://news.am/arm/news/279656.html
[206] http://www.1in.am/1767868.html

մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը՝ որն առաջացրել է ծանր հետևանքներ)[207]:

Ըստ քննչական կոմիտեի՝ դեպքի առիթով բազմաթիվ անձինք հարցաքննվել են: Գործով ձերբակալվածներ և կալանավորվածներ չկան, միայն տարբեր անձինք վկայի կարգավիճակով հարցաքննվել են և շարունակվում են հարցաքննվել:

1in.am-ի տեղեկություններով՝ դեպքը տեղի է ունեցել անզգուշության հետևանքով: Աշոտ Հովհաննիսյանը գիշերը տեղաշարժվելով իր հենակետից՝ մոտեցել է ընկերներին: Վերջիններս, չիմանալով, որ մոտեցողն իրենց ընկերն է, մարտական կարուգանոնի համաձայն, հրահանգել են կանգնել և ասել՝ ով է: Աշոտը, փորձելով կատակել ընկերների հետ, ձայն չի հանել, ապա տղաները նախ նախազգուշական կրակոցով օդ են կրակել, որից հետո արդեն Աշոտը չի հասցրել պատասխանել ու հաջորդել են կրակոցները Աշոտի ուղղությամբ: Արձակված գնդակներց 2-ը դիպել է Աշոտի գլխին՝ մեկը ճակատի հատվածում, մյուսը՝ ծնոտի:

Նույն աղբյուրի տեղեկություններով՝ կրակած տղաները ծանր հոգեվիճակի մեջ են հայտնվել, երբ տեսել են, որ սպանվածը իրենց ընկերն է: Դեպքից հետո նրանք տեղափոխվել են ռազմական ոստիկանություն[208]:

Աշոտ Հովհաննիսյանը Վայոց ձորի Բարձրունի գյուղից էր, մի քանի ամիս առաջ էր անցել ծառայության: Նրա հետ ծառայության են անցել նաեւ իր երկու եղբայրները:

Ընտանիքն ապրում էր սոցիալապես ծանր պայմաններում:

Ը. Ինքնասպանություն

1. Ալբերտ Սաֆարյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տարածած մամուլի հաղորդագրության համաձայն՝ 2015 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը 20:40-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության

---

[207] http://www.lragir.am/index/arm/0/country/view/119125
[208] http://www.1in.am/1700178.html

տեղամասի մարտական հենակետում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայո, Ալբերտ Էմիլի Սաֆարյանը / ծնված 1996թ.) [209]*:*

News.am-ի տվյալներով՝ Ալբերտ Սաֆարյանը, իրեն ամրակցված ինքնաձիգով մահացու հրազենային վնասվածք է հասցրել ինքն իրեն՝ ստորին ծնոտի շրջանում[210]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը)[211]:

2015 թվականի դեկտեմբերի 23-ին Ալբերտ Սաֆարյանի գործն ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

Քրեական գործի շրջանակներում ձերբակալվել է 3 անձ՝ վաշտի ավագ, ենթասպա Արայիկ Սուքիասյանը, ժամկետային զինծառայողներ՝ շարքային Գևորգ Ղազարյանը և կրտսեր սերժանտ Միհրան Հովակիմյանը:

Գևորգ Ղազարյանին և Միհրան Հովակիմյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 3-րդ մասով: 30-ամյա Արայիկ Սուքիասյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 2-րդ մասով և 358-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

Մասնավորապես, Գևորգ Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա,հանդիսանալով թիվ N զորամասի զինծառայող,խախտելով զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները,նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում պարբերաբար այլ գործողություններ է կատարել համածառայակից Ալբերտ Սաֆարյանի նկատմամբ, ծեծել, հայհոյել, հրել քաշքշել նրան, որի հետևանքով զինծառայող Ա.Սաֆարյանը իրեն ամրակցված ինքնաձիգից կրակոց արձակելով ինքնասպան է եղել:

Արայիկ Սուքիասյանին և Միհրան Հովակիմյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով թիվ N զորամասի զինծառայողներ, զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ հայհոյանքներ են տվել և ծեծի ենթարկել իրենց նկատմամբ ստորադաս հանդիսացող շարքային Ա.Սաֆարյանին:

---

[209] http://armlur.am/314167/
[210] http://news.am/arm/news/255039.html
[211] http://galatv.am/hy/news/amketayin-zincarayogh-lbert-afaryani-mahvan-depqi-artiv-harucvel-e-qreakan-gorc/

Ղազարյանն ու Հովակիմյանը կալանավորված են, իսկ Սուքիասյանը ստորագրությամբ ազատ է արձակվել:

Վերջին անգամ Ալբերտը հեռախոսով խոսել է հոր՝ Էմիլ Սաֆարյանի հետ՝ 2015 թվականի փետրվարի 23-ին և տեղեկացրել, որ ոչ մի խնդիր չունի ու ամեն ինչ լավ է:

Հոր խոսքերով՝ իրենք չեն հավատում ինքնասպանության վարկածին: Զինկոմիսարիատում նրան տեղեկացրել են, թե իբր Ալբերտը ինքնասպանություն գործելուց առաջ նամակ է թողել: Նամակը, սակայն, ծնողներին զինկոմիսարիատում չեն ցույց տվել, միայն բովանդակությունն են ասել, թե իբր ընտանիքում խնդիրներ են եղել, և այդ պատճառով նա ինքնասպան է եղել:

Ինչպես և զինծառայողի ծնողները, նրա հարևանները նույնպես չեն հավատում ինքնասպանության վարկածին. ընտանիքի մասին միայն դրական են խոսում: Հիշում են, որ ծառայությունից չէր դժգոհում:

Դեպքից մոտ երեք ամիս անց՝ 2015թ. հունիսի 6-ին, զինծառայողի հայրը՝ Էմիլ Սաֆարյանը, news.am[212]-ի հետ զրույցում հայտնել է, որ ըստ գործող քննիչի՝ ինքնասպանության վարկածը հերքվել է, և իրականում տեղի է ունեցել սպանություն: Սակայն այդ մասին պաշտոնական հաստատում չկա:

Ալբերտն ութ ամսվա զինծառայող էր: Սովորում էր Ֆինանսատնտեսական քոլեջի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների բաժնում:[213]

2015 թվականի դեկտեմբերին Ալբերտ Սաֆարյանի գործն ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

2. Հարություն Համբարյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության հաղորդած տեղեկությունների համաձայն՝ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մարտական հերթապահությունը կրելու ժամանակ մայիսի 8-ին՝ ժամը 15:10-ին, մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Հարություն Հրայրի Համբարյանը (ծնված1995թ.)[214]:

---

[212] http://news.am/arm/news/270001.html
[213] http://news.am/arm/news/254829.html
[214] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=266

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից պարզված հանգամանքները դեպքի վերաբերյալ[215]

2015թ. մայիսի 12-ին այցելելով Հարություն Համբարյանի հարազատներին՝ Լոռու մարզի Արևաշող գյուղ, ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները պարզել են, որ Հարությունը ծառայում էր ԼՂ Մարտակերտի շրջանի «Ինտերնատ» կոչվող զորամասում՝ հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) զորքերում: Դեպքի նախորդ օրը՝ մայիսի 7-ին, Հարությունը հեռախոսազրույց է ունեցել ավագ քրոջ՝ Հասմիկ Համբարյանի հետ: Ըստ Հասմիկի՝ նրա տրամադրությունը շատ բարձր է եղել:

Հարությունի ծառայակից ընկերներից մեկը զինվորի հուղարկավորության ժամանակ նրա ծնողների հետ զրուցելիս հայտնել է, որ դեպքը տեղի է ունեցել Հարությունի մարտական հերթապահության ժամանակ՝ մարտական հենակետում: Մարտական հենակետը, սակայն, ըստ քրոջ, առաջին գծից մոտ 7 կմ հեռու է: Հարություն Համբարյանի մարտական հերթապահությունը նշանակված է եղել 2015թ. մայսի 8-ին ժամը 14:00-ից 16:00-ն, իսկ դեպքը, ինչպես հայտնի է, տեղի է ունեցել 15:10-ին: Նրա ծառայակից ընկերը տղայի հարազատներին հայտնել է, որ առավոտյան Հարությունը լվացել է գլուխը, հարդարվել, «կանտովկան» մաքրել, կոկիկ հագնվել (ինչպես միշտ) և դուրս է եկել ծառայության: Դեպքի պահին, ըստ Հարությունի ծառայակիցներից մեկի՝ հարազատներին տրամադրած տեղեկությունների, Հարությունից մոտ 30 մետր հեռավորության վրա գտնվել է նրա ծառայակիցներից մեկը (ըստ Հարությունի քրոջը հասած տեղեկությունների՝ երկու հոգի, որոնցից մեկը սթրեսի պատճառով չի կարողանում խոսել և պառկած է հոսպիտալում): Ըստ Հարությունի հորը՝ նրա ընկերներից մեկի կողմից հաղորդած տեղեկությունների՝ ժամը 15:10-ի սահմաններում Հարությունի այն ծառայակիցը, որը մոտ է գտնվել նրան դեպքի պահին, ինչ-որ բան նկատելով՝ Հարությունին հարցրել է. «Հարու՛թ, էդ ի՞նչ ես անում»: Հարությունը պատասխանել է. «Հե՛չ, ոչ մի բան»: Դրանից հետո հնչել է կրակոց, իսկ ծառայակիցը վազել է օգնության: Հարությունի ընկերներից մեկը նրա ծնողներին պատմել է, որ ինքը դեպքի պահը չի տեսել և դեպքի մասին իմացել է միայն այն ժամանակ, երբ աղմուկ է լսել, ու երբ ժամանել է

[215] http://hcav.am/events/13-05-2015-3/

շտապօգնության մեքենան: Հարությունի հարազատները ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցներին հայտնեցին, որ իբր թե Մարտակերտում խոսակցություն է եղել, որ մահվան պատճառն անորոշ է: Այսինքն՝ միանգամից պարզ չի եղել, թե արդյոք դեպքը ինքնասպանության հետևանք է, թե ոչ: Իսկ հաջորդ օրն արդեն ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ինքնասպանության հասցնելու հոդվածով: Հարությունի հոր խոսքերով՝ դիահերձման ժամանակ ներկա են գտնվել նաև իր հարազատներից և ընկերներից: Քրոջ խոսքերով՝ Հարությունի հրազենային վիրավորումը եղել է ճակատային հատվածում՝ վերևի մասից: Հարությունն ունեցել է կարճատեսություն և կրել է օպտիկական ակնոց: Հարությունի մարմինն ընկած է եղել բերանքսիվայր, ակնոցը մանր փշրված է եղել:

Հարությունի հոր՝ Հրայր Համբարյանի խոսքերով, դեպքի օրն իրենց ընտանիքի բոլոր անդամները վաղ առավոտից տանը չեն եղել: Տուն վերադարձել են միայն երեկոյան ժամը 19:00-ի սահմաններում: Դեպքի մասին իրենք առաջին անգամ տեղեկացել են «Արմենիա» հեռուստաընկերության 20:00-ին թողարկվող «Ժամը» լրատվական հաղորդման ընթացքում ներկայացվող տեղեկատվական վազող տողից: Ըստ հոր՝ թողարկման ժամանակ Հարությունի ազգանվան մեջ առկա է եղել տառասխալ՝ Համբարյանի փոխարեն գրված է եղել Ղամբարյան, ինչը փոքր-ինչ թեթևացրել է ընտանիքի անդամների լարվածությունը: Սակայն մոտ 10 րոպե անց հեռախոսազանգով զինկոմիսարիատի աշխատակիցը Հարությունի հորը տեղեկացրել է, որ տղան «վիրավորում է ստացել և որ նրան տեղափոխում են Երևան»: Սակայն, քույրը հայտնեց, որ մինչ այդ պահը նա արդեն իսկ համացանցի նորություններով տեղեկացել էր, որ «Հարությունը մահացու հրազենային վիրավորում է ստացել»:

Ըստ քրոջ, Հարությունը միշտ գոհ է եղել իր ծառայությունից և ծառայության վայրից, քանի որ այն մարտական հենակետը որտեղ նա ծառայել է, բավականին հեռու է եղել առաջին գծից: Հարությունը նաև հայտնել է, որ ՀՕՊ ուժերում ծառայությունը համեմատաբար ավելի հեշտ է անցնում: Իսկ այդտեղ նա ծառայության էր անցել այն պատճառով, որ «լավ էր հաշվարկներից ու գծագրությունից», ասում է Հարությունի քույրը: Ըստ Հասմիկի՝ Հարությունի

հրամանատարները միշտ գոհ են եղել նրա ծառայությունից: Նա շատ կենսուրախ եիտասարդ էր, ֆուտբոլի մեծ երկրպագու:

Զինծառայողների բոլոր հարազատները և համագյուղացիները վստահ են, որ կյանքն այդքան շատ սիրող, ծնողների համար այդքան շատ անհանգստացող և այդքան հավասարակշռված մարդը, ինչպիսին Հարությունն էր, ուղղակի չէր կարող ինքնասպանություն գործել: Հարությունի հայրը նաև նշեց, որ իր որդին նույնիսկ սիրած աղջիկ չի ունեցել, ում պատճառով կարող էր դիմել այդ քայլին: Հարություն Համբարյանը սովորում էր Հայաստանի Ագրարային Համալսարանի Հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետում: Զորակոչվել էր զինծառայության 2014 թ. հունվարի 13-ին: Նրա ծառայության ավարտին մնացել էր 8 ամիս:

Հարուցված քրեական գործի ընթացքը

Դեպքի հաջորդ օրը ՀՀ Քննչական կոմիտեի կողմից տեղեկացվեց, որ ըստ նախնական տվյալների, ժամկետային զինծառայող, շարքային Համբարյանը մահացել է իրեն ամրակցված «ԱԿՄՍ» տեսակի ինքնաձիգից իր գլխի ճակատային հատվածում արձակված կրակոցի հետևանքով ստացած հրազենային վիրավորումից: Դեպքի առթիվ Զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնում մայիսի 8-ին հարուցվել է քրեական գործ[216]՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով (ինքնասպանություն կամ ինքնասպանության փորձ):

Դեպքից մոտ երեք շաբաթ անց՝ մայիսի 26-ին, ՀՀ քննչական կոմիտեն հայտնել է, որ քննվող գործի շրջանակներում ՀՀ Քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով (Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ ծեծելով կամ այլ բռնի գործողություններ կատարելով) և 360-րդ հոդվածի 1-ին մասով (Զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ զինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը մեկ այլ զինծառայողի

[216] http://armday.com/?p=36288

կողմից) մեղադրանք է առաջադրվել Համբարյանի ծառայակից, ավագ հրաձիգ-զենիթահար, շարքային Դավիթ Հարությունյանին:

Զինդատախազության խափանման միջոց կալանք ընտրելու միջնորդությունը նախ մերժել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, ապա Վերաքննիչ քրեական դատարանը և մեղադրվող զինծառայողը շարունակում է իր զինվորական ծառայությունը նույն զորամասում:

Նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը դատարանի որոշման դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք[217]

Դավիթ Հարությունյանի շահերը ներկայացնող փաստաբան Ռաֆայել Ամիրխանյանը նույնպես պնդում է, որ Հարություն Համբարյանին սպանել են, և որ իր պաշտպանյալի նկատմամբ առաջադրված մեղադրանքը կեղծ է:

Հարություն Համբարյանի հոր կարծիքով սպանությունը դարձրել են ինքնասպանություն, որպեսզի որևէ մեկը պատասխան չտա սպանության համար[218]:

Նա բացարկ է հայտնել գործը վարող ՀՀ ՊՆ քննչական ծառայության 3-րդ կայազորային բաժնի պետին, քննիչներին, բաժինը հսկող զինդատախազին: Ըստ զինծառայողի հոր բացարկի պատճառ քննչական մարմինների կատարած միակողմանի քննությունն է, որն ամեն կերպ փորձում է հիմնավորել վարկածը, թե Հարությունը ինքնասպան է եղել:

Համաձայն դատաբժշկական եզրակացության, Համբարյանի վրա կրակել են «տվյալ զենքին բնորոշ կրակոցի լրացուցիչ գործոնների ազդեցության սահմաններում»: Փորձագետ Ռուբեն Մարտիրոսյանը պարզաբանել է, որ լրացուցիչ գործոններն են մուրը, վառոդի մասնիկները: Այսինքն, ըստ փորձագետի, եզրակացությունը հաստատում է, որ ընդհուպ կրակոց չի եղել:

Մահացած զինծառայողի հայրն իր բացարկի միջնորդության մեջ նշել է փաստեր, որոնք արհամարվում են քննության ընթացքում: Նա նշել է, որ զինծառայող Դավիթ Հարությունյանի ցուցմունքի համաձայն՝ սպանությունից որոշ ժամանակ առաջ Հարություն Համբարյանը լուրջ ընդհարում է ունեցել համածառայակիցների՝ Հովհաննես Մելքոնյանի և Սմբատ Հայրապետյանի հետ, որի ընթացքում դանակահարել է Սմբատ Հայրապետյանին: Ըստ զինծառայողի հոր՝ նախաքննական

---

[217] http://www.epress.am/2015/05/27/զինվորի-մահվան-առթիվ-հարուցված-քրգործ.html
[218] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=353

մարմինը ձգտում է անտեսել այդ կարևորագույն փաստը: Սա է պատճառը, որ Սմբատ Հայրապետյանին դատաբժշկական փորձաքննության են ենթարկել միայն Դավիթ Հարությունյանի պաշտպանի համառ պահանջներից հետո: Համաձայն թիվ 387 փորձագիտական եզրակացության, Սմբատ Հայրապետյանի աջ և ձախ ձեռքերի վրա իսկապես հայտաբերվել են բազմաթիվ սպիներ, այդ թվում նաև սուր-կտրող գործիքով հասցված վնասվածքներ, որոնց մի մասը կարող էին առաջանալ սպանությունից մի քանի օր առաջ, կամ հենց սպանության օրը: «Չնայած այս աղաղակող փաստին, քննիչ-դատախազները չեն տեսնում ո՛չ հանցավոր բանդայի գործողությունները և ոչ էլ այդ գործողությունների կապը որդուս սպանության հետ», - անհանգստություն է հայտնել Հրայր Համբարյանը:

Դավիթ Հարությունյանը ցուցմունք է տվել այն մասին, թե կրտսեր սերժանտ Հովհաննես Մելքումյանն իրեն պատմել է, որ Հարություն Համբարյանը վիճաբանություն է ունեցել իր հետ, որի ընթացքում Համբարյանը դանակ է թափահարել ու դանակով վնասել է Սմբատ Հայրապետյանին: Հարց է առաջանում, եթե Հարությունը վիճել է Հովհաննես Մելքումյանի հետ, ապա ինչո՞ւ է դանակով վնասել Սմբատ Հայրապետյանին:

Սակայն Սմբատ Հայրապետյանը նշում է, որ վիճաբանության մեջ չի մտել Համբարյանի հետ: Իրեն դանակով ոչ ոք չի հարվածել: Հրայր Համբարյանը արժանահավատ չի համարում այս ցուցմունքը, քանի որ Սմբատի ձեռքերը «աշխարհի ֆիզիկական քարտեզ են հիշեցնում, նա ունի սալջարդ, սուր-ծակող գործիքով վնասվածքներ՝ 3 տարբեր ժամանակներում հասցված»:

Այն, որ Հարությունը հարվածել է Սմբատին, Հրայր Համբարյանի կարծիքով լիովին համապատասխանում է իրականությանը, քանի 2015 թ. հունվարին Հարությունը քրոջը՝ Հասմիկին, ասել է, որ խոշոր բախում է ունեցել մի խումբ զինվորների հետ, ովքեր ցանկանում էին ճնշել իրեն: Հայտնել է նաև, որ ինքը այդ բախումից հաղթանակով է դուրս եկել: Հրայր համբարյանի համար անկասկած է, որ հենց սա է եղել սկիզբը այն պարբերական բախումների, որն ի վերջո հանգեցրել է Հարությունի սպանությանը: Սակայն նախաքննական մարմինն, ըստ զինծառայողի հոր, չի ցանկանում օբյեկտիվ ու բազմակողմանի քննություն կատարել այս փաստերի շուրջ, բացահայտել հանցավոր խումբը, որովհետև այն հակասում է հորինված

«ինքնասպանություն» վարկածին, և քանի որ նախաքննությունը չի ցանկանում գտնել ու պատժել մարդասպաններին[219]:

3. Էդուարդ Մելքումյան /պաշտոնական հաղորդագրության մեջ՝ Էդգար Մելքոնյան/

ԼՂ ՊԲ-ի կողմից տարածված տեղեկատվության համաձայն հունիսի 11-ին՝ ժամը 01:30-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում զոհվել է ժամկետային զինծառայող, 1995թ. ծնված Էդգար Գենադիի Մելքոնյանը[220]:

Ըստ նախնական տվյալների՝ իրեն ամրակցված ինքնաձիգից ինքն իրեն ծնոտի շրջանում հասցրել է մահացու հրազենային վնասվածք[221]:

Զինծառայողի մահվան դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով[222]:

Ինչպես պարզ դարձավ հետագայում՝ armlur.am լրատվական կայքի հետ զինծառայողի քրոջ՝ Լիանայի զրույցից, զինծառայողի անվան մեջ պաշտոնական հաղրոդագրությունում առկա են եղել տառասխալներ, քանի որ զինծառայողի իրական անունը ոչ թե Էդգար Մելքոնյան է, ինչպես տարածել է ԼՂ ՊԲ մամուլի ծառայությունը, այլ՝ Էդուարդ Մելքումյան: Զինծառայողի ընտանիքը տարօրինակ է համարում այս հանգամանքը, որ համաձայն վարկածներից մեկի՝ կրակոցը տեղի է ունեցել զենքը մաքրելու պահին: Զինծառայողի ընտանիքը հատկապես զարմանալի է համարում այն, թե ինչու պետք է զինվորը գիշերը՝ ժամը 1:00-ի սահմաններում, զենք մաքրի: Ավելին՝ ընտանիքին ասել են, թե իբր դեպքը եղել է զուգարանի մոտ: Էդուարդի քույրը հավաստում է, որ «զինվորները զուգարան գնալիս ուղեկցող ունեն, հետևաբար նրա հետ մարդ է եղել, թող պարզեն՝ ով է»: Լիանան նաև հավելեց, որ եղբոր աչքերի հատվածում կապտուկներն են եղել, իսկ այտերից մեկը քերծված է եղել, ինչի առաջացման պատճառներն առայժմ իրենց հայտնի չեն:

---

[219] http://www.epress.am/2015/11/11/%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%AF%D5%A1%D6%80%D6%87%D5%B8%D6%80-%D6%83%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D6%80-%D5%A7-%D5%A1%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4.html

[220] http://iravaban.net/89491.html

[221] http://www.lraqir.am/index/arm/0/right/view/115747

[222] http://www.investigative.am/news/view/edgar-melkonyan.html

Զինծառայողի հայրը՝ Գենադի Մելքումյանը, նշեց, որ դեպքից երկու օր առաջ խոսել է որդու հետ: Նրա խոսքերով՝ Էդուարդն այդ օրը շատ ուրախ էր խոսում: Ընդամենը երկու օր հետո դիրքերից իջնելու էր: Հայրը վստահ է, որ իր որդին չէր կարող ինքնասպան լինել՝ համոզված լինելով, որ «այս ամենը սարքել են»[223]:

Շարքային Էդգար Մելքոնյանը Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքից էր, ընտանիքի միակ տղան: Ապրում էր ծնողների և քրոջ հետ: Զորացրվելուն 20 օր էր մնացել, ինչը ևս ստիպում է հարազատներին չհավատալ ինքնասպանության վարկածին[224]:

4. Մավրիկ Մելիքյան (լեյտենանտ)

2015թ. հուլիսի 1-ն ՀՀ ՊՆ մամուլի ծառայության կողմից տարածված տեղեկատվության համաձայն՝ ըստ նախնական տվյալների, 2015 թվականի հունիսի 30-ին ժամը 13:00-ի սահմաններում, ՀՀ ՊՆ հյուսիսարևելյան հատվածում տեղակայված զորամասերից մեկի պահպանության տարածքում հայտնաբերվել է լեյտենանտ Մավրիկ Խաչատուրի Մելիքյանը՝ գլխի շրջանում ստացած հրազենային գնդակային վնասվածքով: Զինվորական հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին զինծառայողը մահացել է[225]:

Նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով[226]:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի՝ Մելիքյանն իրեն ամրակցված «ՊՄ» տեսակի ատրճանակից կրակոց է արձակել իր գլխի շրջանին և ՀՀ ՊՆ Վարդենիսի զինվորական հոսպիտալ տեղափոխելու ճանապարհին ստացած մարմնական վնասվածքից մահացել է:

---

[223] http://armlur.am/375444/

[224] http://operativ.am/?p=123461&l=am/martakan+henaketum+mahacac+zincarayox+edgar+melqonyani+zoracrvelun+20+or+er+mnacel

[225] http://www.mil.am/1435737374

[226] http://168.am/2015/07/01/510323.html

5. Նարեկ Հարությունյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության կողմից տարածված տեղեկատվության համաձայն՝ 2015 թվականի սեպտեմբերի 6-ին՝ ժամը 01:45-ի սահմաններում, ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում տեղի ունեցած արտակարգ պատահարի արդյունքում (ստորին ծնոտի շրջանում հրազենային մարմնական վնասվածք՝ ՀՀ քննչական կոմիտե) մահացել է ՊԲ զինծառայող, 1996 թ-ին ծնված Նարեկ Արտյոմի Հարությունյանը[227]:

Ըստ քննչական կոմիտեի՝ երրորդ կայազորային քննչական բաժնում դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ինքնասպանության հասցնելու հիմքով:

NEWS.am լրատվականի լրագրողը զրուցելով զինծառայողի ընտանիքի հարևանների հետ՝ պարզել է, որ Նարեկ Հարությունյանը տան միակ զավակն էր, ապրում էր մոր հետ՝ սոցիալապես ծանր պայմաններում: Մայրը չէր աշխատում, առողջական լուրջ խնդիրներ ուներ:

Նարեկ Հարությունյանը զորակոչվել էր զինծառայության 2015 թ-ի փետրվարին[228]:

6. Գևորգ Խաչատրյան

2015 թվականի նոյեմբերի 30-ին լրատվամիջոցներով տարածվեց տեղեկատվություն այն մասին, որ 2015թ. նոյեմբերի 28-ին՝ ժամը 23:35-ին, ՀՀ քննչական կոմիտեի ՋՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին հեռախոսագրով հաղորդում է ստացվել, որ նույն օրը՝ ժամը 22:50-ի սահմաններում, սահմանապահ ուղեկալի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գևորգ Խաչատրյանը, լինելով պետական սահմանի պահպանության սահմանապահ վերակարգի կազմի մեջ, ստացել է հրազենային վնասվածք և տեղափոխվել զորամասի բուժկետ:

Պարզվել է, որ Գ. Խաչատրյանն ստացել է գլխի գագաթային շրջանի հրազենային վերք, և բուժկետում գրանցվել է նրա բիոլոգիական մահը[229]:

---

[227] http://nkrmil.am/main/am/newsMore1016.html , http://www.tert.am/am/news/2015/09/06/conscript-dead/1783134
[228] http://news.am/arm/news/284973.html
[229] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=378

Դիակի արտաքին զննությամբ հայտնաբերվել է հրազենային վնասվածք, ինչպես նաև՝ քերծվածքներ սրունքների վրա: Քննությամբ պարզվել է, որ հրազենային վնասվածքը զինծառայողին հասցվել է իրեն ամրակցված ԱԿ-74 147 9229 համարի ինքնաձիգով:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ զինծառայողին ինքնասպանության հասցնելու դեպքի առթիվ:

Քննվող քրեական գործով մեղադրանք է առաջադրվել զորամասի զինծառայողներ՝ կապիտան Միեր Ոսկանյանին, ավագ լեյտենանտ Հ. Վարդևանյանին, շարքայիններ Հարութ Մուրադյանին և Ա. Սարգսյանին, որոնք ձերբակալվել են: Կապիտան Մ. Ոսկանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 364.1-րդ հոդվածի 2-րդ մասով (զինծառայողի կողմից մոլեխաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը), 375-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը) և 360-րդ հոդվածի 2-րդ մասով (զինծառայողին վիրավորանք հասցնելը), ավագ լեյտենանյտ Հ. Վարդևանյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը), շարքայիններ Հ. Մուրադյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 364.1-րդ հոդվածի առաջին մասով (զինծառայողի կողմից մոլեխաղեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը), 359-րդ հոդվածի 1-ին մասով (զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը՝ նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում (2 դրվագ), 360-րդ հոդվածի 1-ին մասով (զինծառայողին վիրավորանք հասցնելը), Ա.Սարգսյանին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով[230]:

«Արմենպրես»-ը՝ հղում անելով ՀՀ քննչական կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին, հայտնել է, որ նախնական քննությամբ բավարար ապացույցներ են ձեռք բերվել առ այն, որ 2015թ. նոյեմբերի 27-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, զորամասի սահմանապահ ուղեկալի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Գ. Խաչատրյանը, շարքային Հ. Մուրադյանի,

[230] http://investigative.am/news/view/zincarayox-inqnaspanutyan-hascnel.html

ուղեկալի ավագ, ենթասպա Հ. Քալաշյանի և ուղեկալի պետ, կապիտան Մ. Ոսկանյանի հետ մասնակցել են վերջինիս կազմակերպած «Բլոտ» մոլեխաղին:

Ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ հաղթելու դեպքում շարքային զինծառայողները մեկ օրով պետք է ազատվեին ծառայողական պարտականությունների կատարումից, իսկ պարտվելու դեպքում յուրաքանչյուրը 7 օր ճաշարանից կերակրի ավելցուկը դույլերով պետք է տեղափոխեր ուղեկալի տեղակայման վայրից մոտ 150 մետր հեռավորության վրա գտնվող անասնագոմ՝ Մ.Ոսկանյանին և Հ.Քալաշյանին պատկանող խոզերին կերակրելու նպատակով: Քննությամբ պարզվել է, որ շարքայինները պարտվել են և սկսել կատարել պայմանը:

Հաջորդ օրը՝ 2015թ. նոյեմբերի 28-ին՝ ժամը 20:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում, ուղեկալի տարածքում շարքային Հ. Մուրադյանը բռնի գործողություններ է կատարել Գ. Խաչատրյանի նկատմամբ, անհիմն կշտամբել, հեգնել, վիրավորել, ձեռքերով և ոտքով բազմաթիվ հարվածներ հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներին:

Քննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ նման վիրավորանքներից հետո Գ. Խաչատրյանը գնացել է լվացվելու, ստացել իրեն ամրակցված ԱԿ-74 տեսակի ինքնաձիգն ու 50 հատ 5,45 մմ տրամաչափի փամփուշտ՝ երկու փամփշտատուփերում: Համապատասխան հրահանգավորումն ստանալուց հետո Գ. Խաչատրյանը ժամկետային զինծառայող, շարքային Ա. Անտոնյանի հետ ուղևորվել է սահմանի վերակարգի ծառայություն կրելու կատարման վայր, որտեղ կատարել է մի քանի հեռախոսազանգ, ապա բջջային հեռախոսը փոխանցել Ա. Անտոնյանին: Բնական կարիքները հոգալու պատրվակով Գ. Խաչատրյանը շուրջ 50 մետր հեռացել է Անտոնյանից և ժամը 22:40-ի սահմաններում ինքնաձիգից մենահատ կրակոց կատարելու եղանկով կատարել ինքնասպանություն[231]:

Ա. Ոսկանյանի և Հ. Մուրադյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ Հ. Վարդևանյանի և Ա. Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ քննիչների միջնորդությունները դատարանի կողմից չեն բավարարվել:

---

[231] http://m.lragir.am/index/arm/1/right/view/125437

Ինչ վերաբերում է Գևորգի ծնողներին ու հարազատներին, ապա նրանք չեն հավատում ինքնասպան վարկածին: Զինծառայողի հորեղբայրը՝ Հարություն Խաչատրյանը, դեպքից 20 րոպե առաջ խոսել է Գևորգի հետ և ոչ մի տարիօրինակ բան չի նկատել նրա մոտ, քանի Գևորգը լավ տրամադրություն է ունեցել և պատրաստվել է բարձրանալ հենակետ: Գևորգը զորակոչվել էր զինծառայության մահվանից 5 ամիս առաջ[232]:

Այսպիսով, նախորդ տարվա համեմատությամբ ինքնասպանությունների թիվն այս տարի կրկնակի աճել է:

Թ. Առողջական /ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունք/

1. Հայկ Մարգարյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տարածած մամուլի հաղորդագրության համաձայն՝ 2015 թվականի մարտի 22-ին ԼՂ ՊԲ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում ժամը 17:15-ի սահմաններում հանկարծամահ է եղել ժամկետային զինծառայող Հայկ Տարոնի Մարգարյանը՝(ծնված 1992 թ.)[233]:

News.am-ի[234] տվյալներով՝ դեպքը տեղի է ունեցել շատ արագ, րոպեների ընթացքում. զինծառայողն իրեն վատ է զգացել, ջուր է խնդրել և ուշաթափվել: Հոսպիտալ տանելու ճանապարհին նա մահացել է:

Զինվորական քննչական գլխավոր վարչությունում քննություն է իրականացվում՝ պարզելու ժամկետային զինծառայող, սերժանտ Հայկ Մարգարյանի մահվան հանգամանքներն ու պատճառները: Դեպքի առթիվ նախապատրաստվում են նյութեր, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն[235]:

Shamshyan.com-ի[236] տեղեկություններով՝ Հայկը երբեք առողջական խնդիրներ չի ունեցել: Ավելին՝ զբաղվել է լողով և սովորել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում: Հարազատները կարծում են, որ Հայկի մահը վրա է հասել ճնշման կամ վախի ազդեցության տակ, քանի որ նա բնավորությամբ շատ հանգիստ

---

[232] http://news.am/arm/news/299336.html
[233] http://civilnet.am/2015/03/23/nkr-soldier-died/#.VRADLdKsW7z
[234] http://news.am/arm/news/258307.html
[235] http://news.am/arm/news/258325.html, http://www.investigative.am/news/view/zinvo-hankarcamah.html
[236] http://shamshyan.com/hy/article/2015/03/28/47723/

էր, իսկ ծառայակիցների կողմից փորձեր են արվել ճնշել և վախեցնել նրան՝ գուցե նաև՝ անհաջող կատակ անելով:

Հարևաններից մեկը նշել է, որ ծառայության ընթացքում քնած ժամանակ նրա ձեռքի մեջ անգամ պայթուցիկ են դրել և արթնացրել նրան, որից հետո Հայկը շատ է վախեցել:

Հայկ Մարգարյանն ընդամենը 1-2 ամիս հետո պետք է զորացրվեր: News.am-ի տեղեկություններով՝ նա զորակոչվել 2013 թվականին:

2. Խդր Սարոյան

Դեռևս 2015 թվականի մայիսի 26-ին politik.am լրատվական կայքը հրապարակեց մի հոդված, որում ներկայացվում էր 2015 թ. հուվարի 12-ին ՀՀ ԶՈ զորակոչված և 4 ամիս անց՝ մայիսի 4-ին, բարձր ջերմությամբ բուժկետ տեղափոխված զինծառայող Խդր Սարոյանի առողջական վիճակի մասին:

Ըստ զինծառայողի մոր՝ տիկին Ասիայի, իր որդուն մեկ շաբաթ անգիտակից պահել են զորամասի բուժկետում 39-40 աստիճան ջերմությամբ, որից հետո տեղափոխել են Վանաձորի հոսպիտալ և նույն կերպ պահել այնտեղ: Հետո տեսնելով, որ երիտասարդը ծանր վիճակում է, ոտքերը չի կարողանում շարժել, տեղափոխել են ՀՀ ՊՆ Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ, որտեղ էլ Սարոյանի վիճակը գնալով վատթարացել է: Բժիշկները Սարոյանի ծնողներին ամեն օր վստահեցրել են, որ իրենց որդին կվիրահատվի, սակայն նրան այդպել էլ չեն վիրահատել: Քանաքեռի հիվանդանոց տեղափոխելուց և մեկ շաբաթ զինծառայողին այնտեղ պահելուց հետո, Սարոյանին ծանր վիճակով ուղարկել են տուն[237]:

Իսկ 2015 թ-ի մայիսի 29-ին նույն լրատվական կայքը[238] տեղեկացրեց, որ առավոտյան Խդր Սարոյանը մահացել է:

19-ամյա Խդր Սարոյանը Արարատի մարզի Նորամարգ գյուղից էր: Սովորում էր Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետում: Ազգությամբ եզդի էր[239]:

---

[237] http://politik.am/26-05-2015-zinhashmandam
[238] http://politik.am/2018521325/
[239] http://hraparak.am/?p=80468&l=am%2Fbanakum+qaxckexic+mahacac+zinvorin+chen+havatacel+mtacel+en+sachok+e

Նորամարգ համայնքի ղեկավար Սարգիս Գալստյանը armlur.am-ի հետ զրույցում նշել է, որ զինծառայողի ծնողները վստահեցնում են, որ Խդրը մինչ զորակոչվելը որևէ խնդիր չի ունեցել , երբեք չի բողոքել: Սարոյանի մորեղբայրը՝ Խուդո Խուդոյանը հայտնել է, որ բժշկական հանձնաժողովը որևէ խնդիր չի արձանագրել Խդրի մոտ: Սակայն հետագայում հարազատներն իմացել են, որ բժշկուհիներից (հավանաբար նկատի ունեն զորակոչային հանձնաժողովի) մեկն ինչ-որ արձանագրություններ է արել, որոնցում նշված է եղել այն հանգամանքը, որ նորակոչիկը պիտանի չէ ծառայության համար և չի կարող զորակոչվել:

Հարազատները զարմանում են, թե ինչպես կարող էր 4 ամսվա ընթացքում տղայի մոտ չարորակ քաղցկեղ հայտնաբերվել: Ըստ Սարոյանի մորեղբոր՝ իրենց տեղեկացրել են, որ քաղցկեղի նշանները մի քանի տեղ են եղել, այդ թվում՝ ստամոքսում: Որոշ տվյալներով[240]՝ զինծառայողին չեն հավատացել, որ իրեն վատ է զգում և մտածել են «սաչոկ» է:

ՊՆ մամուլի խոսնակը armlur.am-ին հայտնել է, որ զինծառայողի մոտ քաղցկեղը հայտնաբերվել է ծառայության ընթացքում, որն արագ զարգացել է: Ըստ նրա՝ բժիշկները երկար ժամանակ արել են հնարավորը նրա կյանքը փրկելու համար, սակայն նրանց չի հաջողվել:[241]

3. Սարգիս Մամյան (մայոր)

Տավուշի մարզի Բաղանիսի զորամասի հրամանատարի տեղակալ մայոր Սարգիս Մամյանի մահվան մասին պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Սպայի հանկարծամահ լինելու մասին հայտնի է դարձել դեպքից մի քանի ամիս անց forrights.am լրատվական կայքի լրագրողներից մեկի նյութի միջոցով, ով այցելելով սպայի հարազատներին և զրուցելով վրա կնոջ հետ, ներկայացրել է Սարգիս Մամյանի մահվան հանգամանքները և նրա անցած զինվորական ճանապարհը[242]:

Սարգիս Մամյանը երեկոյան զոնգահարել է կնոջը և ասել, որ 2 օրից տուն պիտի գնա մարտական հենակետից, քանի որ հունիսի 10-ին փոքր որդու ծննդյան օրն էր: Իսկ առավոտյան Մամյանի հարազատներին հայտնել են, որ Սարգիսը լավ չի զգացել, և

---

[240] http://hraparak.am/?p=80468&l=am%2Fbanakum+qaxckexic+mahacac+zinvorin+chen+havatacel+mtacel+en+sachok+e
[241] http://armlur.am/363265/
[242] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=360

նրան տեղափոխել են հիվանդանոց, մանրամասնելով, որ երեկոյան լավ չի զգացել՝ ասելով, որ օդը չի հերիքում: Սարգիս Մամյանը մահացել է հենց աշխատասենյակում: Աղմուկ լսելով՝ ծառայակից ընկերները մտել են նրա աշխատասենյակ և տեսել են, որ մայորն ընկած է հատակին: Գլուխն ընկնելիս հարվածել է: Հիվանդանոց տանելու ճանապարհին մայորը մահացել է: Ըստ կնոջ՝ ամունու մոտ գրանցվել է սրտամկանի ինֆարկտ[243]:

4. Լևոն Տոնոյան (պայմանագրային/ բանվոր-ծառայող)

Լեւոն Տոնոյանի մահվան մասին պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Համաձայն որոշ տվյալների[244]՝ 2015 թվականի նոյեմբերի 5-ին շտապ բուժօգնություն ստանալու նպատակով համածառայակիցների կողմից Վանաձորի թիվ երկու («Գուգարք») պոլիկլինիկա է տեղափոխվել Վանաձորի զորամասերից մեկի պայմանագրային զինծառայող Լեւոն Տոնոյանը, որն այնտեղ էլ մահացել է: Ըստ նույն աղբյուրի՝ մահվան պատճառը եղել է պոկված տրոմբային գոյացությունը, որը խցանել է առրտան:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2015 թ. նոյեմբերի 30-ին դեպքի մանրամասները պարզելու վերաբերյալ տեղեկատվության հարցում է ուղարկվել ՀՀ ՊՆ, որին ի պատասխան տեղեկացվել է, որ Լևոն Տոնոյանը աշխատել է Լոռու մարզի Վանաձոր քաղաքի զորամասերից մեկում որպես բանվոր-ծառայող և զբաղեցրել է փականագործ-սանտեխնիկի պաշտոն: Տեղեկացվել է նաև, որ Տոնոյանը մահացել է սրտային անբավարարությունից:

Մահվան առնչությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

---

[243] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=360

[244] http://safesoldiers.am/?page=swt_single_content&content_type=1&content_id=1612

ՀՀ-ում ՌԴ [245] ռազմաբազայի զինծառայողների եւ ՀՀ զինված ուժերում կամ ԼՂ պաշտպանության բանակում մահվան դեպքի ժամանակ ծառայության մեջ չգտնվող զինծառայողների մահացությունները

1. Արթուր Աֆյան (պայմանագրային զինծառայող, ՀՀ-ում ՌԴ ռազմաբազայի զինծառայող)

2015 թվականի փետրվարի 21-ին aravot.am-ը տեղեկատվություն տարածեց այն մասին, որ Շիրակի մարզում տեղակայված ռուս սահմանապահ զորքերի (Գյումրիի 102-րդ ռուսական ռազմաբազայի) պայմանագրային զինծառայող Արթուր Աֆյանը (ծնված 1989թ.) գիշերվանից (փետրվարի 20-ի լույս 21-ի գիշերը) կորել է: Դեպքի մասին զինծառայողի կինը հայտնել էր Շիրակի մարզային ոստիկանությանը: Ոստիկանությունից հետագայում տեղեկացվեց, որ զինծառայողը զինված չի եղել և գիշերը մինչև ժամը 2-ը կապ է ունեցել Մարմաշեն գյուղում հայրական տուն հյուր գնացած իր կնոջ՝ Ալվարդ Մկրտչյանի հետ, սակայն փետրվարի 21-ին աշխատանքի չի ներկայացել: Զինծառայողն ազատ օր է ունեցել, որից հետո չի ներկայացել աշխատանքի[246]: 2015 թ. մարտի 8-ին Շիրակի մարզի Մայիսյան գյուղի մոտակայքում հայտնաբերվել է Արթուր Աֆյանի դիակը՝ կախված վիճակում[247]:

Աֆյանի դին հայտնաբերել են գյուղացիները՝ գյուղի վերջնամասում գտնվող սուպերմարկետի ետնամասում: Գյուղացիներից մեկը զանգել է ոստիկանություն: Ժամանել են նաև ԱԻՆ աշխատակիցները:

ՀՀ Քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում նախապատրաստված նյութերով դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով[248] (սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը):

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով Արթուրը Աֆյանը Տավուշի մարզի Հովք գյուղից էր: ԳԱԼԱ-ի[249] հետ զրույցում Մարմաշենի գյուղապետը հայտնել է, որ

---

[245] Զինծառայողների մահացությունների լրացուցիչ ցանկում ներառված են ՀՀ-ում ՌԴ հայ զինծառայողների մահացությունների, մահվան պահին պահեստազոր արձակված սպաների, ինչպես նաև առկա տվյալներով զինվորական գործունեությունից դուրս տեղի ունեցած և ծառայության հետ չկապված մահացության դեպքերի (բացառությամբ ավտովթարների) վերաբերյալ տվյալները

[246] http://www.aravot.am/2015/02/21/544839/,http://www.tert.am/am/news/2015/02/22/gyumri-soldier-missing/1597311

[247] http://www.azatutyun.am/archive/news/20150308/2031/2031.html?id=26888442

[248] http://www.azatutyun.am/content/news/26873077.html

[249] http://galatv.am/hy/news/nhetacel-e-yumrii-rusakan-razmabazayi-zincarayogh-rtur-fyany-nra-mot-bjjayin-heraxos-ka/ , http://armlur.am/315514/

Արթուր Աֆյանը կնոջ և երեխայի հետ բնակվում էր Գյումրիում վարձակալած բնակարանում:

Ըստ գյուղապետի՝ Արթուրը 3500 դոլարի պարտք է ունեցել և, նախնական տեղեկություններով, նա հենց այդ պարտքի պատճառով էր անհետացել: Համագյուղացիները պատմում են նաև, որ Արթուրն իր հետ խոհանոցի դանակն է տարել[250]:

Շիրակի մարզի դատախազ Ռաֆֆի Ասլանյանի խոսքերով Աֆյանը խոշոր պարտքեր ունենալու մասին են վկայում նաև նրա մտերիմները՝ ասելով, որ այդ պարտքերը մարելու համար տան թանկարժեք իրերը գրավ են դրել[251]:

Եղբոր խոսքերով՝ Արթուրն անհետանալուց առաջ նամակ է թողել, որտեղ խնդրել է, որ իր դետերը լավ նայեն[252]:

ՀՀ քննչական կոմիտե տվյալներով՝ քրեական գործով նշանակված դիակի դատաբժշկական փորձաքննության արդյունքների համաձայն՝ Արթուր Աֆյանի մահը հետևանք է սուր թթվածնային քաղցի՝ պայմանավորված պարանոցի օրգանների օղով սեղմամբ՝սեփական մարմնի ծանրության ազդեցությամբ կախվելիս: Քրեական գործով որպես մեղադրյալ կամ կասկածյալ ներգրավված անձինք չկան[253]:

2. Սամվել Միրզոյան (մահվան պահին արձակված է եղել պահեստազոր)

«Փաստինֆո» լրատվական կայքը[254] 2015 թ-ի մարտի 7-ին տեղեկատվություն տարածեց այն մասին, որ 2015 թ. մարտի 6-ին, Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղում ինքնասպան է եղել 49-ամյա տղամարդ: Նրան գտել են իր գոմի մոտ գտնվող գազատարի խողովակից պոլիէթիլենային թելով կախված վիճակում: ***Ըստ լրատվամիջոցի տեղեկությունների՝ տղամարդը ՀՀ ՊՆ զորամասերից մեկի կաթսայատան պետն էր:*** Այդ մասին ահազանգել է Խնձորեսկի գյուղապետարանի աշխատակազմի ղեկավարը: «Փաստինֆո»-ի հաղորդագրության մեջ նշվում է նաև, որ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել, և որ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

---

250 http://shamshyan.com/hy/article/2015/02/23/44013/
251 http://www.armtimes.com/hy/read/60820
252 http://armlur.am/315514/
253 http://168.am/2015/06/10/500622.html
254 http://pastinfo.am/node/64272

Նույն օրը պարզ դարձավ, որ ինքնասպանություն գործածը Խնձորեսկ գյուղի բնակիչ, Արցախյան պատերազմի մասնակից Սամվել Միրզոյանն է: Նա ունեցել է առողջական խնդիրներ, մասնավորապես՝ նյարդերի հետ կապված[255]:

Դեպքի մանրամասների պարզաբանման նպատակով կազմակերպությունը 2015 թ. մարտի 12-ին տեղեկատվության հարցում է ուղարկել ՀՀ ՊՆ, որին ի պատասխան տեղեկացվել է, որ նախքան մահվան դեպքը տեղի ունենալը պայմանագրային զինծառայող Սամվել Միրզոյանը զինվորական ծառայությունից արձակվելու խնդրանքով դիմել էր հրամանատարությանը, և համաձայն իր դիմումի արձակվել էր պահեստազոր:

3. Դերենիկ Պապյան (Տավուշի մարզի ք. Բերդի զինվորական կոմիսար, զինվորական գործունեությունից դուրս վեճ համագյուղացու հետ)

Ոստիկանության լրատվական բաժնին հղում անելով լրատվամիջոցների կողմից սեպտեմբերի 19-ին տեղեկություն է տարածվել այն մասին, որ 2015 թվականի սեպտեմբերի 18-ին, ժամը 23.10-ին, «Բերդ» բժշկական կենտրոնից ոստիկանության Տավուշի բաժնում հաղորդում է ստացվել, որ իրենց մոտ է տեղափոխվել պարանոցի շրջանում ստացած հրազենային վնասվածքի հետքով մահացած 1966 թ. ծնված Դերենիկ Պապյանի՝ Տավուշի մարզի Բերդ քաղաքի զինվորական կոմիսարի դիակը[256]:

Դեպքի առթիվ Տավուշի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը):

Դեպքը տեղի է ունեցել սեպտեմբերի 18-ին՝ մոտ ժամը 22:00-ին, Տավուշի մարզի Մովսես գյուղի գյուղամիջյան ճանապարհին՝ գյուղապետարանի վարչական շենքից 100 մ հեռավորության վրա: Նախնական քննության տվյալներով՝ Դերենիկ Պապյանը անվայել պահվածքի համար դիտողություն է արել իր համագյուղացի, ալկոհոլի ազդեցության տակ գտնվող Ա. Մկրտումյանին, ինչից վրդովված վերջինս որսորդական հրացանով կրակել է Պապյանի վրա:

---

[255] http://pastinfo.am/hy/node/64279

[256] http://www.aysor.am/am/news/2015/09/19/%D5%B4%D5%B8%D5%BE%D5%BD%D5%A5%D5%BD-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%AF%D5%B8%D5%B4-%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%BF/998212

Կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում դեպքի վայրից հայտնաբերվել և առգրավվել է հանցագործության գործիք հրացանը՝ կրակված պարկուճների հետ միասին: Ա. Մկրտումյանը ձերբակալվել է[257]:

4. Վոլոդյա Հովհաննիսյան (ՀՀ-ում ՌԴ սահմանապահ զորքերի զինծառայող)

2015 թվականի նոյեմբերի 20-ին լրատվամիջոցներում[258] տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ Շիրակի մարզի Գուսանագյուղում հայտնաբերվել է ՀՀ-ում ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության պայմանագրային զինծառայող 1984 թվականին ծնված Վոլոդյա Հովհաննիսյանի դին՝ տանը կից ավտոտնակի առաստաղից կախված վիճակում:

Գուսանագյուղի գյուղապետ Վասակ Ղազարյանի խոսքերով՝ Վոլոդյան ապրում էր կնոջ եւ ծնողների հետ: Ըստ որոշ տեղեկությունների՝ զինծառայողը պարտքեր է ունեցել, չի կարողացել դրանք մարել և այդ իսկ դրա համար էլ նման քայլի է դիմել:

Դեպքի մասին այլ մանրամասներ հայտնի չեն:

---

[257] http://www.aysor.am//am/news/2015/09/19/սպանություն-տավուշ-զինկոմ-պապյան/998311
[258] http://news.am/arm/news/297419.html, http://www.aravot.am/2015/11/20/631134/